

**ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՆԱՐԱՆ**



**ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ  
4-5 դեկտեմբեր 2014թ.**

ԵՐԵՎԱՆ 2014

ЕРЕВАНСКИЙ СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ

# МАТЕРИАЛЫ

*межвузовской научной  
конференции*

**«Современные проблемы статистики в  
Республике Армения»**

**4-5 декабрь 2014 г.**

Ереван 2014

**NORTHERN UNIVERSITY OF YEREVAN**

**Contemporary Issues of Statistics  
Development in the Republic of Armenia**

**Materials of Interuniversity  
Scientific Conference**

**4-5 December, 2014**

YEREVAN 2014

ՀՏԴ 311:06  
ԳՄԴ 60.6  
Վ 603

*Հրատարակվում է Հյուսիսային համալսարանի  
գիտական խորհրդի որոշմամբ*

Վ 603 *Վիճակագրության արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետու-  
թյունում: Միջբուհական գիտաժողովի նյութեր: /4-5 դեկտեմբեր, 2014թ./.  
Երևանի Հյուսիսային համալսարան,- 2014. – 192 էջ:*

*Ժողովածուն պարունակում է Հյուսիսային համալսարանի  
ռեկտորատի նախաձեռնությամբ՝ 2014 թվականի դեկտեմբերի  
4-5-ին անցկացված գիտաժողովի մասնակիցների զեկուցումները,  
որոնք առնչվում են վիճակագրության տարբեր ոլորտներում առկա  
հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին:*

*Ժողովածուն նախատեսվում է տնտեսագետների, ինչպես  
նաև ընթերցողների լայն շրջանների համար:*

ՀՏԴ 311:06  
ԳՄԴ 60.6

ISBN 978-9939-9115-1-9

© Հյուսիսային համալսարանի հրատարակչություն, 2014

Գիտաժողովի նյութերի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է  
Երևանի Հյուսիսային համալսանի պաշտոնական կայքի  
«Գիտություն» բաժնում՝ [www/northern.am](http://www/northern.am) հասցեով

### **Խմբագրական-հրատարակչական խորհուրդ**

*Մակիչյան Բ.Մ. (խորհրդի նախագահ, մանկ. գիտ. թեկ.),*  
*Ասատրյան Գ.Ե. (խորհրդի նախագահի տեղակալ, փիլ. գիտ. թեկ.),*  
*Ավետիսյան Ս.Ս. (տնտ. գիտ. դոկ.), Ճուղուրյան Ա.Գ. (տնտ. գիտ.*  
*դոկ.), Հակոբյան Ա.Ա. (տնտ. գիտ. դոկ.), Մարգարյան Հ.Ա. (տնտ.*  
*գիտ. դոկ.), Մակիչյան Մհեր Բ. (տնտ. գիտ. թեկ.), Խաչատրյան Ն.Ն*  
*(տնտ. գիտ. թեկ.), Ավետիսյան Ս.Ս. (տնտ. գիտ. թեկ.), Հակոբյան*  
*Կ.Հ. (տնտ. գիտ. թեկ.):*

### **Редакционная коллегия**

*Макичян Б.М. (председатель редакционного совета, канд. пед. наук),*  
*Асатрян Г.Е. (зам. председателя, канд. фил. наук), Аветисян С.С.*  
*(доктор экон. наук), Джугурян А.Г. (доктор экон. наук.), Акопян*  
*А.А. (доктор экон. наук.), Марзпаян А.А. (доктор экон. наук),*  
*Макичян М.Б. (канд. экон. наук), Хачатрян Н.Н. (канд. экон. наук),*  
*Аветисян М.С. (канд. экон. наук), Акопян К.А (канд. экон. наук.)*

### **Editorial Collegium**

*Makichyan B.M. (head of editorial comity. PhD in ped.), Asatryan G.E.*  
*(PhD in philos.), Avetisyan S.S. (doctor of econ. science), Tshuguryan*  
*A.G. (doctor of econ. science), Hakobyan A.A. (doctor of econ. science),*  
*Marzpanyan A.A. (doctor of econ. science), Makichyan M.B. (Phd in*  
*econ.), Khachatryan N.N. (Phd in econ.), Avetisyan M.S (Phd in econ.),*  
*Hakobyan K.A. (Phd in econ.).*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                            |                                                                                                     |
|------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------|
| Ողջույնի խոսք .....                                        | 9                                                                                                   |
| <b>Հակոբյան Կ. Հ.</b><br>ՀՊՏՀ                              | Վիճակագրության արդի հիմնախնդիրները ....11                                                           |
| <b>Գևորգյան Զ.Վ.</b><br>ՀԱԱՀ                               | Ագրոբիզնեսի տեղեկատվական համակարգի բարելավման ուղիները .....18                                      |
| <b>Հանիսյան Հ.Հ.</b><br>ԵՀՍ                                | Կազմակերպությունների ֆինանսական կայունության գնահատումն ու համալիր վերլուծությունը.....22           |
| <b>Գրիգորյան Ա.Ա.</b><br>Գ.Պլեխանովի ան.<br>ՌՏՀ            |                                                                                                     |
| <b>Ճուղության Ա.Գ</b><br>ԵՀՍ                               | Վիճակագրության դասավանդման ժամանակակից հիմնախնդիրները համալսարաններում....28                        |
| <b>Խաչատրյան Ն.Ն</b><br>ԵՊՀ                                |                                                                                                     |
| <b>Պետրոսյան Ա.Ա.</b><br>ԼՂՀ Մ. Մաշտոցի անվ.<br>համալսարան | ԼՂՀ կազմակերպությունների տնտեսական գործունեության վիճակագրական պատկերը.....34                       |
| <b>Հակոբյան Ս.Գ.</b><br>ԵՀՀ                                | Մարդկային կապիտալի վիճակագրական հաշվառման հիմնախնդիրները.....41                                     |
| <b>Փափկանյան Ս.Վ.</b><br>ԵՀՀ                               | Վիճակագրությունը որպես մարդկային հսկողության կարևորագույն բաղադրիչ.....50                           |
| <b>Խալաթյան Հ.Ա.</b><br>ԵՀՀ                                | Հարկադրական միգրացիոն գործընթացների հիմնական ուղղությունները և միտումները Մերձավոր Արևելքում.....57 |
| <b>Ավետիսյան Մ.Ս.</b><br>ԵՀՀ                               | ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման կլաստերային վերլուծությունը.....64                            |

|                                  |                                                                                                             |
|----------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>Պողոսյան Մ.Ռ.</b><br>ԵՀՀ      | Մպորտային ծառայությունների և մարդկային կապիտալի փոխկապակցվածության քանակական գնահատման հիմնախդիրները.....70 |
| <b>Բոյաջյան Կ.Մ.</b><br>ԵՀՀ      | Բարձր տեխնոլոգիաների ոլորտում մասնավոր կապիտալ ներդրումների չորս հիմնական ռազմավարությունները .....77       |
| <b>Կլեկչյան Լ.Ռ.</b><br>ԵՊՀ      |                                                                                                             |
| <b>Ավետիսյան Ս.Ս.</b><br>ՀՊՏՀ    | Գյուղատնտեսական վիճակագրական ռեգիստրի վարումը որպես ճյուղի բյուջետային                                      |
| <b>Ավետիսյան Ա.Ս.</b><br>ԵՀՀ     | ծախսերի արդյունավետության բարձրացման գործիք.....84                                                          |
| <b>Հունանյան Լ.Ս.</b><br>ՀԱԱՀ    |                                                                                                             |
| <b>Մարգարյանյան Հ.Ա.</b><br>ԵՊՀ  | Մարդկային կապիտալի՝ որպես տնտեսական ռեսուրսի ֆինանսական գնահատման                                           |
| <b>Հարությունյան Ա.Ա.</b><br>ԱՊՀ | մեթոդաբանական մոտեցումները.....94                                                                           |
| <b>Վարդանյան Գ.Վ.</b><br>ՀԱԱՀ    | Մնման ֆիզոլոգիական նորմաները որպես բնակչության պարենային ապահովության                                       |
| <b>Մամիկոնյան Լ. Լ.</b><br>ՀԱԱՀ  | կարևորագույն ինդիկատոր.....101                                                                              |
| <b>Այվազյան Ա.Ս.</b><br>ԵՀՀ      | Հարկաբյուջետային քաղաքականության կայունության հիմնախնդիրները.....107                                        |
| <b>Կարապետյան Գ.Է.</b><br>ՀՊՏՀ   |                                                                                                             |
| <b>Սահակյան Ա.Ա.</b><br>ԵՀՀ      | Առևտրային բանկի շահութաբերության վերլուծությունը.....116                                                    |
| <b>Քնաջյան Հ.Է.</b><br>ԵՀՀ       | Դեվիանտ տնտեսական վարքագիծը Եվրասիական տնտեսական միությունում.....123                                       |

|                                                                |                                                                                                                 |
|----------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>Բալասյան Ս.Հ.</b><br>ԵՀՀ                                    | Վարկային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վիճակագրական վերլուծությունը.....131                      |
| <b>Սմբատյան Շ.Ա.</b><br>ԵՀՀ                                    | Առևտրային բանկերի արժույթային գործառնությունների վիճակագրական վերլուծությունը.....137                           |
| <b>Երիցյան Ս.Ս.</b><br>Խաչատուր<br>Աբովյանի անվ.<br>ՊՄՀ        | Բարձրագույն կրթության ֆինանսավորման վիճակագրությունը Բոլոնիայի գործընթացի շրջանակում.....144                    |
| <b>Անդրեասյան Հ.Հ.</b><br>ՀԱԱՀ                                 | Ռիսկային կորուստների կանխարգելման խնդիրները վարկային կազմակերպություններում .....148                            |
| <b>Պետրոսյան Ա.Ա.</b><br>ԵՏԿԱ                                  | Օտարերկրյա ներդրումների գրավչության վիճակագրական պատկերը ՀՀ-ում.....154                                         |
| <b>Գյուրջյան Ս.Ս.</b><br>ԵԳՀ                                   | Վարկային ռեսուրսների կառավարման ռազմավարությունները ՀՀ առևտրային բանկերում.....159                              |
| <b>Հովհաննիսյան Ա. Հ.</b><br>ԵԳՀ                               | Գործարարության անհավասարաչափ զարգացման համահարթեցման խնդիրները.....166                                          |
| <b>Լոթֆոլլահիտուր<br/>Բադեր</b><br>ԵՊՀ                         | Իրանի ապահովագրական ինդուստրիայի ցուցանիշների վերլուծական ակնարկ.....172                                        |
| <b>Եսայան Ե.Ս.</b><br>ԵՀՀ                                      | Օտարերկրյա ուղղակի ներդրումային քաղաքականության պետական կարգավորումը ՀՀ-ում.....177                             |
| <b>Թադևոսյան Զ.Ա.</b><br>ԵԿՏԱ<br><b>Ժամկոչյան Գ.Ս.</b><br>ԵԿՏԱ | Միջազգային ապրանքային նշանների ներգրավման ազդեցությունը ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի արդիականացման վրա.....183 |



## *Ողջունի խոսք*

Հարգելի գործընկերներ:

Ուրախ եմ ողջունելու Հյուսիսային համալսարանում այս օրերին վիճակագրության հիմնախնդիրներով կազմակերպվող գիտաժողովի մասնակիցներին:

Յուրաքանչյուր տարի, հոկտեմբերի 20-ին նշվում է **վիճակագրության** համաշխարհային օրը: Այդ մասնագիտական տոնը վիճակագրության մարմինների բոլոր աշխատողների տոնն է, որոնք վարում են պետության տնտեսական գործունեության հաշվառումը:

Վիճակագրության համաշխարհային օրը բավականին երիտասարդ տոն է, քանզի այն սկսել են նշվել միայն 2010 թվականից: Այդպիսի որոշում ընդունել է ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 41-րդ նշտաշրջանը: Այս տոնը ընդգծում է այն կարևորությունը, որը ունեն վիճակագրության մարմինները ժամանակակից պետություններում: Դրանց օգնությամբ տարվում է երկրների տնտեսական վիճակի հսկողություն, մշակվում են զարգացման քաղաքական ռազմավարություններ, ուղղումներ են մտցվում հասարակության տնտեսական գործունեության հիմնարար սկզբունքների մեջ:

Թույլ տվեք ևս մեկ անգամ ընդգծել այս մասնագիտության կարևորությունը և զարգացման անհրաժեշտությունը մեր հասարակական կյանքում: Վիճակագրության հիմնախնդիրները այսօր չէ, որ ծառացել են մեր հասարակության առջև: Դրանք միշտ էլ փոփոխման են ենթարկվել և իրենց դինամիկ լուծումներն են ստացել սոցիալ-տնտեսական տարբեր իրավիճակներում: Այս գիտաժողովի ծրագիրը և դրանում նախատեսվող զեկուցումները գալիս են ապացուցելու, որ ներկայումս մեր հասարակական կյանքում դեռևս առկա են խնդիրներ, որոնք առնչվում են վիճակագրության ինչպես գիտական, այնպես էլ կիրառական զարգացումների հետ:

Մասնավորապես, շուկայական տնտեսավարման արագ զարգացումները պահանջում են կիրառական վիճակագրության բարեփոխումներ, երբ անհրաժեշտություն է զգացվում մակրո-

տնտեսական դասական հաշվառումը ծառայեցնելու ոչ միայն տեղեկատվության հավաքագրմանը, այլև դրա հիման վրա որոշումների կայացմանը: Արդեն մի քանի տարի է, ինչ տնտեսագիտության տեսության մեջ շրջանառվում է կառավարչական վիճակագրություն տերմինը, որը ևս մեկ անգամ փաստում է այն հանգամանքը, որ ժամանակն է անդրադառնալու ոչ միայն վիճակագրության մեթոդական բարեփոխումներին, այլև դրանք ուղղորդելու տնտեսավարման համակարգի կառավարչական որոշումների կայացմանը:

Բացի այդ, տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման հետևանքով ներկայումս իրենց գործնական կիրառումն են գտնում վիճակագրական համակարգչային փաթեթներ, որոնք տեխնիկապես անհամեմատ հեշտացնելով վիճակագրական վերլուծությունները, միաժամանակ բարդություններ են ստեղծում դրանց կիրարկման գործընթացում թե պրակտիկ աշխատողների, և թե ուսանողության շրջանում: Այս առումով, անհրաժեշտություն է ծագում նաև վերանայելու համալսարաններում վիճակագրություն առարկայի դասավանդման ծրագրերը, դրանք կառուցելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հենքով, ուսումնասիրելու այդ ոլորտում առկա միջազգային փորձը:

Դատելով գիտաժողովի ծրագրի բովանդակությունից, մեզ սպասվում են բուռն քննարկումներ և բանավեճեր վիճակագրության տեսամեթոդաբանական ու գիտակրթական հիմնախնդիրների շուրջ, որոնց արդյունքում վստահ եմ, որ կձևավորվեն նորամուծական առաջարկներ և ակնկալիքներ վիճակագրության գիտագործնական շրջանակի հետագա զարգացումների ուղղությամբ:

Մաղթում եմ ձեզ բեղնավոր և ստեղծարար աշխատանք՝ ակնկալելով արդյունավետ գիտաժողովի արդյունքներ:

Հյուսիսային համալսարանի ռեկտոր

*Բ.Մ. Մակիջյան*

**Հակոբյան Կ. Հ.**  
ՀՊՏՀ, Վիճակագրության ամբիոնի վարիչ  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Karenhakobyan71@rambler.ru

## **ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր.** վիճակագրության առարկա, արտադրության սահմաններ, տնտեսական աճ, իրական եկամուտ, ակտիվ, ժամանց, ազգային հարստություն, մարդահամար

Վիճակագրությունը, ժամանակակից ընկալմամբ, հանրության լայն շրջանակներին սովորեցնում է թե ինչպես է կառուցված աշխարհը: Ասվածը վերաբերում է աշխարհում տեղի ունեցող գրեթե բոլոր երևույթներին և գործընթացներին: Հարկ է նշել, որ վիճակագրություն հասկացությունը ներկայումս օգտագործվում է մի քանի իմաստով՝ որպես գիտություն, պրակտիկա և տեղեկատվություն: Բացի դրանից, օտարերկրյա գրականությունում վիճակագիր է կոչվում ընտրանքային համակցության հիման վրա ստացվող բնութագրիչը:

Նշանակում է վիճակագրության հիմնախնդիրներ ասելով պետք է հասկանալ ինչպես ուսումնասիրվող օբյեկտի ճանաչողական (կատեգորիաների սահմանում, օբյեկտի նկարագրման համար կիրառվող ցուցանիշների համակարգի կառուցում, ցուցանիշների հաշվարկման եղանակների մշակում և այլն) բնույթի տեսամեթոդաբանական, այնպես էլ հետազոտվող օբյեկտի վերաբերյալ տվյալների գիտականորեն հիմնավորված հավաքագրման, ամփոփման և մշակման հետ կապված հարցերը:

Նախ բարձրացնենք վիճակագրության գիտության և նրա առարկայի էության հարցը, քանզի այն արդեն մի քանի տասնամյակ հուզում է մասնագետներին և բուռն քննարկումների տեղիք տալիս: Բուհական դասագրքերի մեծամասնությունում նույնպես այդ հարցը տարբեր կերպ է լուսաբանվում: Այսպես, 1954թ. ԽՍՀՄ վիճակագիրների գիտական խորհրդակցությունում ընդունվեց, որ վիճակագրությունը հասարակական գիտություն է և ունի ինքնուրույն առարկա ու մեթոդ: Խորհրդակցությունից հետո լույս տեսած առաջին դասագրքում վիճակագրությունը բնորոշվեց

որպես ինքնություն գիտություն, որն ուսումնասիրում է հասարակական երևույթների քանակական կողմը՝ որակական կողմի հետ անխզելի կապի մեջ»<sup>1</sup>:

Նույն սահմանումն է առկա նաև վիճակագրական բառարանում:<sup>2</sup> Որոշ դասագրքերում վիճակագրական համակցություններն են<sup>3</sup> համարվում վիճակագրության առարկա, ինչը խեղաթյուրում է վիճակագրության թե՛ օբյեկտի և թե՛ առարկայի հասկացությունը: Կարծում ենք՝ անտրամաբանական է մի վիճակագրական հասկացության բնորոշումը մեկ այլ վիճակագրական հասկացությամբ: Բացի դրանից, վիճակագրական ցուցանիշը վիճակագրական հետազոտության գործիքն է կամ դրա արդյունքը, իսկ առարկան՝ հետազոտության սկզբնակետը՝ նպատակադրումը:

Որպեսզի պատկերացում կազմենք հետազոտության օբյեկտ, նպատակ, առարկա, խնդիրներ և արդյունք կատեգորիաների հարաբերակցության մասին, անհրաժեշտ է դրանք դիտարկել համակարգված՝ սկսելով ելակետային հասկացությունից, այսինքն՝ հետազոտության օբյեկտից: Վիճակագրական հետազոտության *օբյեկտն են*՝ բնական, կենսաբանական, սոցիալական, տնտեսական, տեխնոլոգիական և այլ զանգվածային տատանվող երևույթներն ու գործընթացները, որոնց փոխկապվածություններն ունեն հավանական ծագում, իսկ զարգացումը հիմնական միտումների, փոլային և պատահական տատանումների կապակցման մեջ է:

Վիճակագրական հետազոտության նպատակն է մարդկության, հասարակության, այսինքն՝ հետազոտության սուբյեկտի կողմից հետազոտության օբյեկտի այնպիսի գծերի, հատկությունների ճանաչումը, որոնց իմացությունը իրեն կրերի պրակտիկ օգուտ (եկամուտ, զարգացման արագացում, անվտանգություն և այլն): Օբյեկտի այդ գծերն ու հատկություններն էլ հենց կազմում են վիճակագրական հետազոտության բուն առարկան: Ուստի գիտության ուսումնասիրության առարկան պետք է որոնել իմացաբանության ոլորտում:

---

<sup>1</sup> Козлов Т.И., Овсиенко В.Е., Савинский Д.В., Смирнский В.И. Курс общей теории статистики. Изд. Московского университета, 1956, с. 15.

<sup>2</sup> Статистический словарь. – М.: Финстатинформ. 1996, с. 379.

<sup>3</sup> Теория статистики. Под. ред. Г.Л. Громыко. – М.: Инфра-М., 2000, с. 13.

Վիճակագրական հետազոտության խնդիրները, որոնք առաջադրում և լուծում են գիտության սուբյեկտները, թույլ են տալիս հասնելու վերջնական նպատակին: Ամփոփելով վերլուծությունը՝ սահմանենք վիճակագրության *առարկան* հետազոտության օբյեկտի գծերն ու հատկություններն են, որոնք ընտրել է հետազոտության սուբյեկտը՝ որևէ օգտակար խնդրի լուծման նպատակով:

Այժմ անդրադառնանք վիճակագրության գործնական խնդիրներին: Հարկ է նշել, որ վիճակագրությունն առաջինն արձագանքեց շուկայական տնտեսության պահանջներին՝ սեփականաշնորհմանը և իրավաբանական անձանց թվի մի քանի անգամ ավելացմանը, ըստ կազմակերպա-իրավական ձևերի դրանց բազմազանությանը, անցմանն ողջ աշխարհին հասկանալի վիճակագրական լեզվին: Վիճակագրությունը ներկայումս կոչված է տնտեսության կառավարման ողջ համակարգը հագեցնել օրեցօր արդիականացվող տեղեկատվությամբ, պատասխանատվություն կրել դրա հավաստիության և համադրելիության համար:

Առաջին հերթին, քննարկենք տնտեսությունը մակրոմակարդակով ամբողջական նկարագրելու հետ կապված հարցերը: Համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամի հանկարծակիության պատճառներից մեկն, ըստ մասնագետների, այն էր, որ վիճակագրական չափումների գոյություն ունեցող համակարգը ոչ ադեկվատ դուրս եկավ կամ էլ շուկայի մասնակիցներն ու պետական կառավարման մարմիններն ուշադրություն էին դարձնում ցուցանիշների ոչ ճիշտ հավաքածուին:

Ստորև առաջարկում ենք վիճակագրության ոլորտի մասնագետներին և վիճակագրական տեղեկատվությունը կառավարման բոլոր մակարդակներում օգտագործողներին ուշադրությունը սևեռել հետևյալ հանգամանքների վրա.

1. Տնտեսական բարեկեցության կամ տնտեսական աճի մասին դատողություններում արդյունք կատեգորիայի փոխարեն դիմել եկամուտ կատեգորիային, քանզի «արդյունքը» բնութագրում է տնտեսության առաջարկը, իսկ «եկամուտը»՝ արտադրության վերջնական նպատակը: Գլոբալացումը հանգեցնում է զգալի տարբերություններ երկրի եկամտի և դրա արտադրության մեծությունների միջև: Իսկ որպես կենսամակարդակի չափորոշիչ ավելի նպա-

տակահարմար է կիրառել զուտ ազգային տնօրինվող եկամուտը (ԶՄՏԵ):

2. Ներկայումս տնային տնտեսությունների տնտեսական վիճակը անհրաժեշտ է դիտարկել եկամտի և ակտիվների կատեգորիաների միաժամանակյա կիրառմամբ: Ընդհանրապես, ակտիվների և պարտավորությունների մասին բազային տեղեկատվությունը կարևոր է բոլոր հատվածների տնտեսական առողջությունն ու ֆինանսական ռիսկերը գնահատելու համար:

3. ԱՀՀ-ում տնտեսական արտադրության սահմաններում ներառվում են տնային տնտեսությունների կողմից սեփական կացարանում բնակվելու ծառայությունների արժեքը, սակայն չեն ներառում հենց իրենց համար տրամադրվող որևէ մեկ այլ ծառայություն, օրինակ՝ բնակարանի մաքրում, սննդի պատրաստում, երեխաների և մեծահասակների (հիվանդների) խնամք, սեփական ավտոմեքենայով աշխատանքի երթևեկում և այլն): Առաջարկում ենք նշված ծառայությունների արտադրության վրա ծախսված ժամանակը չափել, գնահատել և ինտեգրել ազգային հաշիվների և եկամուտների ցուցանիշների հետ:

Հետազոտությունները վկայում են, որ 2000-2010թթ. ընթացքում ԱՄՆ և եվրոպական մի քանի երկրների տնային տնտեսությունների իրական եկամուտները՝ շտկված տնային տնտեսության արտադրության և տնային տնտեսության արտադրության ու ժամանցի արժեքներով, հանգեցնում են իրական տնօրինվող եկամտի աճի տեմպերի նվազմանը:<sup>4</sup> «Իրական» հասկացությունը այստեղ նշանակում է, որ եկամուտները հաշվարկվել են ազգային արժույթի գնողունակության համարժեքության (ԳՀ) հիման վրա:

4. ՀՀ ազգային հաշիվների համակարգում լուծումներ պահանջող խնդիրներն են՝ տեղեկատվական բազայի կատարելագործում, տնտեսության հատվածային բոլոր հաշիվների մշակում, ԱՀՀ ցուցանիշների դինամիկայի հաշվարկման մեթոդաբանության կատարելագործում, չդիտարկվող (ստվերային) հաշվառման կատարելագործում, ԱՀՀ տարածաշրջանային հաշվարկների մեթոդաբանության մշակում, միջազգային համադրումներին

---

<sup>4</sup> [www.oecd.org/publications](http://www.oecd.org/publications)

ակտիվորեն մասնակցում, տեղեկատվության մշակման ժամանակակից մեթոդների օգտագործում, տնտեսության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների համակարգի մշակում:

5. Երկրի մակրոտնտեսական վիճակի վերլուծություններում ներառել ազգային հարստության, այսինքն՝ ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների, արժեքի և կազմի փոփոխությունները բնութագրող չափիչներ, ինչպես նաև կատարել մակրոցուցանիշների հաստատուն գներով հետահայաց հաշվարկներ՝ 1960 թ-ը:

6. Տնտեսական արտադրության արդյունքների վիճակագրական գնահատումը մակրո-, մեզո- և միկրոմակարդակներով այլևս իրականացնել օրենսդրորեն ամրացված ԱՀՀ չափորոշիչների հիման վրա, ինչը նշանակում է, որ արմատապես պետք է փոխել արտադրանքի հաշվառմանը վերաբերող վիճակագրական հաշվետվության ձևերը՝ դրանք հարմարեցնելով տնտեսական գործունեության տեսակների միջազգային դասակարգման պահանջներին:

7. Օրենսդրորեն ընդլայնել տվյալների վարչական բազաների (ՀՀ ԿԲ-ի, ՀՀ ֆիննախի և այլնի) նկատմամբ ՀՀ ԱՎԾ-ի հասանելիությունը, ինչը հնարավորություն կտա վիճակագրական համադրելի ցուցանիշների լայն հավաքածու հաշվարկելու համար՝ աշխատանքի վարձատրություն, տնային տնտեսությունների եկամուտներ, թողարկում, ներդրումներ, ՀՆԱ-ի առանձին բաղադրիչներ և այլն:

8. ՀՀ բնակչության ռեգիստրի լիարժեք և կարգավորված գործունեության դեպքում է հնարավոր բնակչության թվաքանակի և կազմի վերաբերյալ հավաստի տեղեկատվության ստացումը, սակայն գործնականում դրա իրագործումը ոչ մեկ տասնամյակ կպահանջի: Կարելի է միայն ցանկանալ, որ մոտակա ժամանակաշրջանում պաշտոնական վիճակագրությունը հրապարակվող տվյալները հնարավորության սահմաններում ճշգրտի բնակչության ռեգիստրի, թեկուզ ոչ ամբողջական տվյալներով: Ասվածը, առաջին հերթին վերաբերում է արտաքին միգրացիոն գործընթացներում ներգրավված բնակչության ժողովրդագրական փոփոխականներին (սեռ, տարիք, բնակության վայր):

9. Ժամանակի թելադրանքն է ՀՀ-ում մարդահամարներն անցկացնել ոչ համատարած սկզբունքով, ավելի կոնկրետ, ըն-

տրանքային մեթոդով: Վերջինս հնարավորություն կընձեռի ավելի խորը ուսումնասիրել ազգաբնակչությանն առնչվող հիմնախնդիրները և օգտագործել ավելի բարձր որակավորմամբ մասնագետներ: Նման համոզմունքը պայմանավորված է Հայաստանում անցկացված վերջին երկու (2001թ. և 2011թ.) մարդահամարների արդյունքներով: Ավելորդ չէ հիշատակել, որ մարդահամարը հետապնդում է երեք նպատակ. առաջին՝ ճշգրտել միջմարդահամարային ժամանակաշրջանում բնակչության կրած փոփոխությունները, երկրորդ՝ ստեղծել տեղեկատվական բազա ժողովրդագրական ցուցանիշների հաշվարկման, վերլուծության և կանխատեսման համար, և երրորդ՝ ներկայացնել բնակչության ակնթարթային նկարագիրն ըստ առավել արդիական հատկանիշների:

Մեր կարծիքով Հայաստանում անցկացված մարդահամարները հազիվ թե բավարարեն վերոնշյալ նպատակների իրականացմանը: Նախ՝ շատ երկար էր ժամանակահատվածը խորհրդային վերջին և ետխորհրդային առաջին մարդահամարների միջև (22 տարի՝ 1979-2001թթ.), երկրորդ՝ բնակչության երկու կատեգորիաների հաշվառումը խառնաշփոթության մեջ է գցում հանրությանը, առավել ևս երբ դրանք էականորեն են տարբերվում: ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովն առաջարկում է մարդահամարների ժամանակ հաշվառել միայն մշտական բնակչություն՝ տնտեսելով ֆինանսական որոշակի միջոցներ և ուշադրությունը կենտրոնացնել մեկ կատեգորիայի ճիշտ հաշվարկման վրա:

Երրորդ՝ անհաջող է ընտրված նաև մարդահամարի կրիտիկական պահը, քանզի հոկտեմբեր ամիսը ինչպես քաղաքացիական, այնպես էլ ինստիտուցիոնալ բնակչության շարժունակության ամիս է: Բացի դրանից, երկար է նաև մարդահամարի անցկացման տևողությունը (10 օր), ինչը որոշակիորեն խոչընդոտում է բնակչության ակնթարթային պատկերի ստացմանը: Քննարկման առանձին թեմա է մարդահամարի կադրերի ընտրման և նրանց վարձատրության հարցերը:

Հոդվածում քննարկվում է վիճակագրական գիտության առարկայի սահմանման հետ կապված հարցը, ինչպես նաև տրվում են գործնական առաջարկություններ տնտեսական աճի և սոցիալական առաջընթացի, տնտեսական արտադրության սահմանների, ճշգրտված իրական եկամտի վիճակագրական գնահատ-



ման կատարելագործման համար: Բնակչության բարեկեցությունը ուսումնասիրելիս առաջարկվում է հաշվի առնել տնային տնտեսությունների տնտեսական ակտիվների և արտադրության ժամանակի ծախսումների հաշվեկշիռների փոփոխությունները:

**Акопян Карен Акопович**

АГЭУ, зав. каф. Статистики, к.э.н.

## **СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ СТАТИСТИКИ**

В статье обсуждаются вопросы, связанные с определением предмета исследования статистической науки, а также даны практические рекомендации для совершенствования статистической оценки экономического роста и социального прогресса, границ экономического производства, скорректированного реального дохода. При изучении благосостояния населения предлагается учитывать изменения в балансах экономических активов и затрат производственного времени домашних хозяйств.

*Ключевые слова:* предмет статистики, границы производства, экономический рост, реальный доход, актив, досуг, национальное богатство, перепись населения.

**Hakobyan Karen**

ASUE, Chair of statistics, Doctor of Economics

## **CURRENT ISSUES OF STATISTICS**

***Keywords:*** subject of statistics, production border, economic growth, real income, asset, leisure, national wealth, population census.

In article are discussed the questions connected with definition of an object of research of statistical science, and also practical recommendations for improvement of a statistical assessment of economic growth and social progress, borders of the economic production, the corrected real income are made. When studying welfare of the population it is offered to consider changes in balances of economic assets and expenses of production time of house farms.

**Գևորգյան Զ.Վ.**

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դոցենտ, տ.գ.թ.  
Julia\_Gevorgyan@yahoo.com

## **ԱԳՐՈՒԹՅՆԵՍԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ում**

**Բանալի բառեր.** ագրոբիզնես, վիճակագրական հաշվառում, գործարար ակտիվություն, կառավարչական որոշումներ

Ագրարային տնտեսության տեղեկատվական համակարգը կառուցվում է օպերատիվ, հաշվապահական և վիճակագրական հաշվառման հիման վրա: Առավել գործնական կիրառություն ունեն վիճակագրական հաշվետվությունները, որոնք մակրոտնտեսական մակարդակով բնութագրում են ագրարային ոլորտի զարգացման միտումները: Այսպես, համարվելով որպես ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղություններից մեկը, անկախացումից հետո շարունակվեց ագրարային հատվածը վիճակագրական հաշվառումը և տեղեկատվության տրամադրումը բոլոր ենթակառուցվածքներով և ենթաձյուղերով: Այսպես, անկախացման առաջին տարիներին ՀՀ-ում գյուղատնտեսական ոլորտը կտրուկ անկում ապրեց: Հատկապես արձանագրվեց տնտեսությունների ապրանքայնության աստիճանի խիստ իջեցում, որի հետևանքով գյուղացիական տնտեսությունների զգալի մասը ոչ միայն դուրս մնաց ապրանքային արտադրության ոլորտից, այլ առավելագույնս ձգտեց բավարարել սեփական սպառման պահանջները: Նախկին խորհունտեսությունների և կոլտնտեսությունների տնտեսական բազայի վրա գյուղմթերքների արտադրությունը կենտրոնացավ գյուղացիական բնակչության տնտեսություններում և համեմատաբար փոքր մաս կազմեցին գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունները:

Սակայն վերջին տասնամյակում արձանագրվեց գյուղատնտեսության ոլորտի զարգացում: Ինչպես գյուղացիական տնտեսությունների (բնակչության տնտեսությունների) այնպես էլ գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների համար զրանցվեց գյուղատնտեսական համախառն արտադրանքի աճի միտում: Դրա հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ դեռևս բուն

գյուղատնտեսության ոլորտում գերակշիռ դերակատարում ունեն փոքր գյուղացիական տնտեսությունները, որոնք ծառացած բազմաթիվ խնդիրների պատճառով չեն կարողանում մրցակցային բարենպաստ դիրքեր գրավել արտադրանքի իրացման շուկայում: Ներկայումս հանրապետությունում գործում են շուրջ 339.2 հազ. գյուղացիական բնակչության տնտեսություններ, մեկ տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.37 հա գյուղատնտեսական հողակտորներ, այդ թվում՝ 1.1 հա վարելահողեր: Հանրապետության տարբեր մարզերում տնտեսությունների չափերը տատանվում են 0.6-3.1 հա-ի սահմաններում և բնականաբար նման պայմաններում դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական գործունեության արդյունքների կառավարչական հաշվառման ոլորտում:


### Աղյուսակ 1

Գյուղատնտեսության արտադրանքի ծավալի ինդեքսներն ըստ տնտեսությունների կարգերի (համադրելի գներով նախորդ տարվա նկատմամբ)

| Տարիներ | Բոլոր կարգի տնտեսություններ | այդ թվում                     |                             |
|---------|-----------------------------|-------------------------------|-----------------------------|
|         |                             | Առևտրային կազմակերպություններ | բնակչության տնտեսություններ |
| 2009թ.  | 100.4                       | 90.4                          | 100.8                       |
| 2010թ.  | 109.6                       | 135.0                         | 109.3                       |
| 2011թ.  | 101.3                       | 88.4                          | 101.7                       |
| 2012    | 99.5                        | 103.6                         | 99.3                        |
| 2013    | 86.4                        | 98.4                          | 86.1                        |

Ներկայումս ոչ միայն գործնականում, այլև տեսաբանների ջրջանում լայն քննարկում են ստանում մակրոտնտեսական հաշվառման համակարգում կառավարչական հաշվառման սերտ ինտեգրման հիմնախնդիրների լուծումները, որով հնարավորություն է ստեղծվում համակողմանի գնահատելու գործարարության արդյունավետությունը՝ անգամ տնտեսության ողջ մասշտաբով:<sup>5</sup>

<sup>5</sup> Հակոբյան Ա., Ֆինանսական վարձակալություն, հեղ. հրատ, Եր., 2011 թ., էջ 237-239



**Գծապատկեր 1.** Ագրարային տնտեսության տեղեկատվական առաջարկվող համակարգը ՀՀ-ում

Մասնագիտական գրականություն կարծիք է հայտնվում, որ ինչպես ռեսորոսպեկտիվ, այնպես հեռնակարային ֆինանսական վերլուծության տեղակատվության ապահովման համակարգում էական պետք է լինի կառավարչական հաշվառման հաշվետվությունների դերը, գնահատելու համար գործարարության ակտիվու-

թյունն ու մրցունակությունը:<sup>6</sup> Արդիական է համարվում նաև մենեջմենթի կողմից հայրենական ագրոբիզնեսի համակարգում որոշումներ կայացնելիս կառավարչական հաշվառման տեղեկատվության ակտիվորեն կիրառումը:<sup>7</sup>

Ուստի ագրարային տնտեսության տեղեկատվական համակարգում կառավարչական հաշվառման գործառնությունների վերանայման անհրաժեշտություն է զգացվում: Ավելին, մեր կարծիքով, ներկայումս ՀՀ ագրարային ոլորտում կառավարչական հաշվառման հայեցակարգային մոտեցումների կատարելագործման հիմնախնդիրներ են ձևավորվում, որոնք իրենց լուծումներ են պահանջում:

Այս առումով, մեր կողմից առաջարկվում է ագրարային տնտեսության տեղեկատվական համակարգի վերափոխման մոտեցումներ (տես գծապատկեր 1), շեշտադրումներ կատարելով կառավարչական հաշվառման այնպիսի գործառնությունների վրա, ինչպիսիք են.

- ագրարային շուկայի մրցակցային միջավայրի բնութագրումը և գնահատումը,

- ագրոբիզնեսի արդյունքների ներկայացումը հաշվեկշռված պատճառահետևանքային կապերով,

- ագրարային գործունեության ընթացիկ արդյունքների և ռազմավարական նպակադրումների տեղեկատվական փոխկապակցումը և վերլուծությունը:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Ագրոբիզնեսում արդիական է համարվում օպերատիվ, կառավարչական և վիճակագրական հաշվառման փոխկապակցումը, այն դեպքում, երբ ՀՀ-ում գործող գյուղատնտեսական տնտեսությունների գերակշիռ մասը ֆերմերային միկրո սուբյեկտներ են և դժվարություններ են ստեղծում այդ հարցում: Այս առումով, հոդվածում առաջարկվում է միկրո և մակրոտնտեսական հաշվա-

---

<sup>6</sup> Բայադյան Ա., Ֆինանսական վերլուծություն, «Լիմուշ», Եր., 2009 թ., էջ 146- 147

<sup>7</sup> Եղիկյան Ա., Կառավարչական հաշվառում, «Տնտեսագետ», Եր., 2003 թ., էջ 15-16

ռումը ուղղորդել ագրոբիզնեսի կառավարչական որոշումների կայացման տեղեկատվության ձևավորմանը:

**Геворкян Дж. В.**  
к.э.н., доцент НАУА

## **ПУТИ УЛУЧШЕНИЯ ИНФОРМАЦИОННОЙ СИСТЕМЫ АГРОБИЗНЕСА В РА**

**Ключевые слова:** агробизнес, статистический учет, деловая активность, управленческие решения

В сфере агробизнеса РА становится актуальным формирование системной взаимосвязи оперативного, управленческого и статистического учета, и это в том случае, когда в республике преобладает удельный вес действующих малых сельскохозяйственных субъектов, тем самым затрудняют системный сбор управленческой информации. В этом контексте в статье предлагаются пути формирования информационной базы управленческих решений на уровне макро и микро экономического учета.

**Gevorgyan J. V.**  
Assistant professor at the ANAU

## **AGRIBUSNNEs INFORMATION BASE DEVELOPMENT IN RA**

**Key words:** agribusiness, statistics accounting, business activity, managerial decision making

Its coming urgent formation of interrelation operating, managerial and statistic accounting in system framework, specially in case, when in Armenia agricultural activity is concentrated mainly in small business entities, which is making difficulties for managerial information base collection. In this contests, in article is suggested ways for foundation information system in order to decision making, having in use micro and macro economic accounting.

**Анисян Грайр Овикович**  
преподаватель Северного университета, к.э.н.  
armhrayr@mail.ru  
**Григорян А. А.**  
доцент РЭУ им. Г.В. Плеханова, к.э.н.  
artako86@mail.ru

## КОМПЛЕКСНЫЙ АНАЛИЗ И ОЦЕНКА ФИНАНСОВОЙ УСТОЙЧИВОСТИ КОМПАНИИ

**Ключевые слова:** финансовая устойчивость, финансовый анализ, стабильность, комплексный анализ

Нестабильность развития всей экономической системы является наиболее яркой особенностью современного этапа рыночного типа хозяйствования. Стихийный характер экономических связей порождает неуверенность в непрерывности деятельности организаций в перспективе тогда, как принцип непрерывности деятельности субъекта бухгалтерского учета считается одним из ключевых концепций современной бухгалтерской теории и практики во всем мире.

С переходом России на принципиально новую экономическую модель развития коренным образом изменились условия функционирования организаций. В рыночной экономике организации несут полную ответственность за использование находящихся в их распоряжении ресурсов, поэтому стараются обеспечить стабильный экономический рост, в основе чего лежит их финансовая устойчивость<sup>8</sup>.

Сегодня финансовая устойчивость организаций имеет огромное значение для экономического развития России. Об этом свидетельствуют выступления президента и премьер-министра России на разных форумах и заседаниях. Стоит отметить также ежегодное присуждение Всероссийской Премии «За вклад в экономическое развитие России», которая, начиная с 2006 года, вручается организациям, действующим на территории Российской

---

<sup>8</sup>Анисян Г.О. Анализ финансового оздоровления организации // Институциональные аспекты бухгалтерского учета и контроля. – М.: ГОУ ВПО « РЭУ им. Г.В. Плеханова ». – 2011

Федерации, за финансовую устойчивость и стабильность экономической деятельности, непосредственно влияющей на экономический рост страны.

Особую значимость приобретает вопрос о принятии единого подхода к оценке и управлению финансовой устойчивостью организаций в условиях развития в России финансового рынка, растущей необходимости обеспечения достоверной информацией всех участников этого рынка и учащения кризисных явлений в мировой и отечественной экономике. Этот подход не должен противоречить принятым методам в зарубежной практике, в то же время должен учесть особенности российских экономических отношений.

Современный анализ финансовой устойчивости организации постоянно меняется в условиях усиления влияния факторов внешней среды на функционирование организаций. В целях риск-менеджмента необходимо разрабатывать новые и более гибкие инструменты анализа финансовой устойчивости организаций, учитывающие возможные изменения внешних риск-факторов и позволяющие построить стратегию организации с учетом ее слабых сторон.

В зависимости от взглядов экономистов можно отметить разные методические подходы к анализу такого важнейшего оценочного показателя деятельности организации, каким является финансовая устойчивость. Большинство авторов считает, что анализ финансовой устойчивости необходимо осуществлять с позиций системного подхода. В методологию системного анализа внесли большой вклад Шеремет А.Д., Бочаров В.В., Гиляровская Л.Т., Ендовицкий М.В, Ковалев В.В., Лысенко Д.В., Мельник М.В. и др<sup>9</sup>.

Некоторые авторы придерживаются мнения, что более точные результаты анализа достигаются с использованием многофакторных моделей оценки финансового состояния, которые с определенным уровнем вероятности могут прогнозировать банкротство коммерческой организации. Несмотря на многочисленные публикации, посвященные вопросам анализа финансовой устойчивости

---

<sup>9</sup> Григорян А.А. Факторный анализ финансовой устойчивости предприятий // Московское научное обозрение. — М.: Издательство ИНГН. — № 1 (5) / Январь 2011



организаций, все еще существует неоднозначность подходов к методам анализа у разных авторов, также не охвачен весь спектр факторов, влияющих на финансовую устойчивость организаций. Есть необходимость выработать единую систему показателей, которые удовлетворили бы потребности всех пользователей информации относительно финансовой прочности коммерческой организации. Требуется доработки также и понятийный аппарат характеристики финансовой устойчивости. Все эти обстоятельства предопределили актуальность темы.

Сущность финансовой устойчивости мы расцениваем как силу иммунитета экономики организации к воздействию различных внутренних и внешних негативных экономических факторов, нарушающих ее нормальную воспроизводственную деятельность с точки зрения ее финансовой составляющей.

Мы предлагаем к использованию подход, согласно которому финансовое состояние характеризует положение дел организации на конкретную дату, а финансовая устойчивость - уровень стабильности финансового состояния в динамике, т.е. показатель из области перспективного и стратегического финансового анализа. Исходя из сказанного, автор считает, что финансовое состояние выступает в качестве одного из важнейших факторов, определяющих финансовую устойчивость организации, поскольку финансовая устойчивость зависит не только от текущего финансового состояния как исходной позиции, но и от многих факторов внутреннего и внешнего характера, влияющих на нее и старающихся нарушить финансовое равновесие организации.

Комплексный анализ финансовой устойчивости организации представляет собой процесс изучения ее статического финансового состояния, динамики изменений во времени, выявления факторов (причин), обусловивших эти изменения и определения перспективного уровня финансовой устойчивости в условиях возможных комбинаций изменения факторов внешней и внутренней бизнес-среды.

Целесообразно также проводить обратные стресс-тесты, отличающиеся от «стандартных» тем, что нацелены на определение набора сценариев (комбинаций риск-факторов), в случае реализации которых компания потеряет свою финансовую устойчивость. Для

этого необходимо рассчитать пограничные значения показателей финансовой устойчивости, при которых компания становится несостоятельной, и далее определить события, которые могут привести к таким значениям показателей.

С целью определения перспективного уровня финансовой устойчивости ОАО « XXX» нами проведено стресс-тестирование, выявляющее влияние на финансовую устойчивость изменений цен на продукцию компании и курса доллара США по отношению к рублю. Для этого сформирован искусственный интегральный показатель, который представляет собой взвешенную сумму частных показателей финансовой устойчивости компании. На основе проведенного регрессионного анализа раскрыта форма и получена модель зависимости интегрального показателя от цен на товар и курса доллара США, имеющая следующий вид:

$y = -1,07 + 0,000029 x_1 + 0,0498 x_2 + e$  где:  $y$  - интегральный показатель;  $x_1$  - цена на товар, дол.США/т;  $x_2$  - курс доллара США, руб./дол.;  $e$ -характерный фактор (погрешность). Полученная модель позволила рассчитать снижение уровня финансовой устойчивости компании при падении цен на никель и курса доллара США<sup>10</sup>.

Таким образом, основное преимущество метода стресс-тестирования выражается в комплексном ведении перспектив развития организации, в оценке степени чувствительности ее баланса и финансовых результатов к изменениям рыночной конъюнктуры. С использованием стресс-тестирования существенно расширяются возможности риск-менеджеров в процессе оценки и управления рисками.

### **Заключение**

Финансовая устойчивость коммерческой организации, являясь индикатором оценки непрерывности деятельности субъекта хозяйствования, представляет собой степень прочности его финансовой системы. Анализ финансовой устойчивости – один из важнейших составляющих финансового анализа коммерческой организации.

---

<sup>10</sup> Григорян А.А. Факторный анализ финансовой устойчивости предприятий // Московское научное обозрение. — М.: Издательство ИНГН. — № 1 (5) / Январь 2011

**Հանիսյան Հ. Հ.**

Հյուսիսային համալսարանի դասախոս, տ.գ.թ.

**Գրիգորյան Ա.Ա**

Գ.Վ.Պլեխանովի անվան Ռուսական տնտեսագիտական համալսարանի  
դոցենտ, տ.գ.թ.

## **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

***Բանալի բառեր.*** ֆինանսական կայունություն, ֆինանսական վերլուծություն, կայունություն, համապարփակ վերլուծություն

Առևտրային կազմակերպության ֆինանսական կայունությունը հանդիսանում է կառավարման սուբյեկտի գործունեության անխզելիության գնահատման ցուցանիշը և իրենից ներկայացնում է դրա ֆինանսական համակարգի կայունության աստիճանը: Ֆինանսական կայունության հետազոտումը հանդիսանում է առևտրային կազմակերպության ֆինանսական հետազոտման կարևորագույն բաղադրիչներից մեկը:

**Hanisyan H.**

PhD in Economics, lecturer in the Department of Economics and Management  
at the Northern University in Armenia.

**Grigoryan A.**

PhD in Economics, assistant professor of business analysis and audit REU them  
after G.V. Plekhanov

## **COMPLEX ANALYSING AND OF THE FINANCIAL STABILITY ASSESSMENT OF COMPANIES**

***Key words:*** financial stability, financial analysis, stability, comprehensive analysis.

Financial sustainability of the business entity is considered to be as an indicator of business continuity assessment of a business entity and represents a degree of stability of its financial system. Analysis of financial stability is one of the major components of the financial analysis of a commercial organization.

**Juguryan A.G**

Doctor of Science, professor at the Northern University  
Jarmen1@yandex.ru

**Khachatryan N.N.**

PhD, assistant professor at the Yerevan State University  
Nonka-J@yandex.ru

## **CONTEMPORARY ISSUES OF STATISTICS TEACHING IN UNIVERSITIES**

**Key words:** managerial statistics, cooperative learning, problem-based learning, innovative ways of training.

Most of the time statistics has been and will continue to be one of the widely taught topics at university level. Over the last two decades, the foundation for statistics education studies has substantially strengthened into the independent research area that it is today. There has been a tremendous increase in research studies focusing on the teaching and learning of statistics and probability. While statistics education has turned into a research area of increasing interest, implementing new instructional techniques and achieving an appropriate balance between theory and application is a challenging task. Consistently, teaching and learning of applied statistics at the university level is requiring development. Hence, is coming actual to outline the identified problems and possible solutions in teaching statistics.

Over the past few decades there has been a large amount of research dedicated to the teaching of statistics. The impact of this research has started to change course content and structure, in both introductory and advanced courses for statisticians and those from other disciplines. In the light of these changes future directions in the teaching and learning of statistics must take into account new innovative pedagogical instructions, educational technologies and the abundance of Web resources that are now available.

Over the years there has been strong subjective evidence that students at university develop antipathy towards statistics and, typically, students at all levels lack interest in learning when taking introductory

statistics courses. During the last decade there has been significant concern expressed about the future of statistics. Cox (1997), Moore (1997), Smith and Staetsky (2007)<sup>11</sup> raise many different issues about statistics as a discipline including the need for changes in statistics pedagogy, statistical course content and format. des Nicholls (2001) points out that while at the tertiary level the last five decades have seen significant advances in theoretical aspects of statistics, unfortunately, to some degree this has been at the expense of appropriate training of occasional users of statistics.<sup>12</sup> This is closely related to the problematic area of service teaching statistics to non-specialists which is addressed by many statistics education researchers (see e.g. Allen, Folkhard, Lancaster, Sherlock, and Abram, 2012).<sup>13</sup>

Currently, frequently asked questions related to following items.

In universities, should Statistics be part of Mathematics or not? I If not, there is insufficient collaboration and communication. I If yes, “Why should we appoint a statistician from a sparse field when we have so many good applicants in probability / algebra / dynamical systems . . . ?” In research organizations, should statisticians be in their own unit or spread thinly in other departments? I If in own unit, they can learn from each other and discuss problems, but may be seen by management as ‘non-specialist’ and it is possible to become divorced from real problems, If dispersed, they become isolated and may do poor statistics. In science generally, how do we deal with “We all have computers these days, so we don’t need statisticians”?

Studies that have focused on revising traditional methods of teaching statistics, suggest changes which should be implemented to enable students to receive training which is both up-to-date and relevant

---

<sup>11</sup> Cox, D .R. (1997). The Current Position of Statistics: a Personal View, *International Statistical Review*, 65(3), 262-276.

Moore, D.S., Cobb, G.W., Garfield, J. and Meeker, W.Q. (1995). Statistics Education Fin De Siècle, *The American Statistician*, 49(3), 250-260.

<sup>12</sup> Svetlana Tishkovskaya, Statistical Education in the 21st Century: a Review of Challenges, Teaching Innovations and Strategies for Reform, *Journal of Statistics Education*, Volume 20, Number 2 (2012)

<sup>13</sup> Allen, R.A., Folkhard, A., Lancaster, G.A., Sherlock, C., and Abram, B. (2012). Statistics for the Biological and Environmental Sciences: Improving Service Teaching for Postgraduates, *Statistics Education Research Journal*, submitted.

to society's needs. The major directions of the statistics education reform movement involve (a) pedagogical reforms toward development of conceptual understanding and teaching to statistical thinking and reasoning; (b) changes in the content of statistics courses, especially introductory level courses; (c) improving the instructional techniques used in statistics courses; and (d) integration of technology and computer-based methods into teaching statistics as an important tool for effective delivery of teaching and essential part of effective pedagogy

All these imply that traditional lecture-based teaching methods should be replaced or supplemented by new approaches which reframe the roles and identities of teachers and learners. To be more effective, teaching and learning activities should be designed and implemented to take pedagogical principles of learning into account. In order to determine whether innovative teaching methods are effective, a link to a theory or theories of learning can be the instructor's most powerful tool in understanding and changing practice.

Cognitivism is currently one of the predominant perspectives within which human learning is described and explained (Atherton, 2011). Cognitive theory addresses how people understand material and develop aptitude and capacity to learn through different learning styles. In the context of statistical education, Lindsay, B., Kettenring, J., (2000)<sup>14</sup> present five principles of learning derived from cognitive theory:

I. Students learn best what they practice and perform on their own.

II. Knowledge tends to be specific to the context in which it is learned.

III. Learning is more efficient when the students receive real-time feedback on errors.

IV. Learning involves integrating new knowledge with existing knowledge.

V. Learning becomes less efficient as the mental load students must carry increases.

Collaborative and cooperative learning involves students working together in some way to aid their learning. Cooperative learning is

---

<sup>14</sup> Lindsay, B., Kettenring, J., and Siegmund, D. (2004). A Report on the Future of Statistics, *Statistical Science*, 19, 387-413.

defined by a set of processes which help people interact together in order to accomplish a specific goal or develop an end product which is usually content specific. It is more directive than a collaborative system of governance and closely controlled by the teacher. In collaborative learning, participants work together to solve a problem and often the teacher does not have a pre-set notion of the problem or solution that students will be researching. The cooperative learning approach is teacher-centred whereas collaborative learning is more student-centred.

Another form of active learning is Enquiry-Based Learning (EBL). EBL can be described as learning that arises out of a structured process of enquiry within a supportive environment, and which is designed to promote collaborative and active engagement with problems and issues. EBL is an empowering, strongly student-centred approach to learning and teaching with benefits for subject learning. The flexibility of the method allows for the development of a wide range of student abilities and skills in areas including initiative, critical judgment, openness, creativity and independence of mind.

EBL is an umbrella term covering different forms of learning driven by a process of enquiry, including the more widely known approach of Problem-Based Learning (PBL). PBL is a method that facilitates learning through problem solving activities. One of the main defining characteristics of PBL, which distinguishes it from some other forms of EBL, is that the problem is presented to the students first at the start of the learning process, before other curriculum inputs. PBL was originally developed for use in the training of medical students. Among the most notable applications of PBL are the medical school programs at McMaster University (Canada), where PBL was pioneered in the late 1960's, and the Faculty of Health, Medicine, and Life sciences at Maastricht University (Netherlands), which embarked on the innovative pathway of PBL in the 1970's. The effectiveness of PBL within such domains as medical education and nursing is now well established (see e.g. the meta-review by Albanese and Mitchell, 1993). PBL has excited interest among educators around the world for several decades. It has spawned a number of variants and has been extended to other disciplines including statistics. Examples of the implementation of PBL in statistics courses indicate that students are more engaged with the subject,

motivation and commitment are greatly improved and, in general, the approach is positively received by the students.

The progress in computing technology has resulted in changes in the way in which students learn statistics and the way in which instructors teach statistics. Whereas students were once expected to solve problems by performing tedious hand calculations or to derive particular statistical formulas, now course goals refer to statistical literacy, students' ability to reason statistically about real-world problems and the development of active learning skills. Modern learning theories emphasise the importance of constructivism when integrating technologies in learning.

Technology has also expanded the range of graphical and visualisation techniques to provide powerful new ways to assist students in exploring and analysing data and thinking about statistical ideas, allowing them to focus on the interpretation of results and understanding concepts rather than on computational mechanics. Most importantly, graphics is a universal language which makes graphical exploration of data a very influential tool helping the better understanding of concepts in mathematics, statistics and science.

The extremely fast-developing technology offers numerous technological tools for statistics education. Information technology facilitates statistical computing, graphing, and the way educational materials are delivered. Classification of technologies currently available, the types of technology used in teaching statistics and probability can be grouped into several categories: graphing calculators, statistical software packages, educational software, applets, spreadsheets, classroom response systems, web-based statistics related resources including data repositories, online texts, and data analysis routines. This list can be complemented by computer simulation methods, multimedia materials and such relatively new technologies as podcasting and computer-based testing.

Another example of successful technology which might enhance good pedagogical practice in the classroom is the use of Personal Response Systems (PRS). The systems have a variety of names: Audience Response Systems, Student Response Systems, or just clicker systems. Another important pedagogical tool for promoting understanding is



applets. While technological developments provide numerous enhancements to the teaching of statistics, the development of the World Wide Web has produced an unprecedented global means for instructors to easily share their ideas on ways to improve statistics education.

### **Conclusion**

Statistics education is a unique rapidly evolving discipline and computer-based and Web technologies are an important and integral part of statistics today. Its coming urgent of understanding of the current state of statistics education providing a bridge between research findings in statistics education and teaching practice which will help teachers understand and implement Internet technology in a variety of innovative ways. It is also important to use approaches of managerial statistics in universities, making more applying environment concerning to this subject.

**Հուդուրյան Ա.Գ.**

Հյուսիսային համալսարանի պրոֆ., տ.գ.դ.

**Խաչատրյան Ն.Ն.**

Երևանի պետական համալսարանի դոցենտ, տ.գ.թ.

### **ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր.** կառավարչական վիճակագրություն, խմբային ուսուցում, հիմնախնիրներին ուղղորդված ուսուցում, կրթական նորամուծական մոտեցումներ

Բուհական ծրագրերում վիճակագրության դասավանդումը արագորեն փոփոխությունների է ենթարկվում հիմականում երկու ուղղությամբ: Մի կողմից, ներմուծվում են կրթական ինովացիոն տեխնոլոգիաներ, հիմնված համակարգչային ցանցային ծրագրերի վրա, մյուս կողմից, խորացվում են կիրառական վիճակագրության օգտագործման գործիքակազմի պարզաբանումները, ուսանողական տրոն ուսուցման ձևերը: Հոդվածում քննարկվում են կառավարչական վիճակագրության դասավանդման մոտեցումները, ուղղորդված գործարարության ոլորտում կորպորատիվ որոշումների կայացմանը:

**Джугурян А.Г.**

д.э.н., проф. Северного университета

**Хачатрян Н.Н.**

к.э.н., доц. Ереванского государственного университета

## **СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ПРЕПОДАВАНИЯ СТАТИСТИКИ В УНИВЕРСИТЕТАХ**

**Ключевые слова:** управленческая статистика, групповое обучение, проблемно-ориентированное обучение, инновационные подходы преподавания

В университетских программах преподавание статистики ныне стремительно изменяется в основном в двух направлениях. С одной стороны, внедряются инновационные технологии преподавания, основываясь на сетевых компьютерных программах, с другой стороны, углубляются интерпретации инструментов использования прикладной статистики, совершенствуются способы студенто-ориентированного обучения. В статье обсуждаются подходы преподавания управленческой статистики, нацеленные на принятие корпоративных решений в бизнес сфере.

**Պետրոսյան Ա. Ա.**

ԼՂՀ Մեքրոպ Մաշտոց համալսարանի դասախոս

anarpetirgr7@mail.ru

### **ԼՂՀ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ**

**Բանալի բառեր.** ԼՂՀ տնտեսություն, գործարարության խոչընդոտներ, գերփոքր և փոքր կազմակերպություններ, կայուն տնտեսվարում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող կազմակերպությունների գերակշիռ մասը տնտեսական արտաքին միջավայրի հետ սերտ առնչություն չունի և եթե նմանատիպ տնտեսական գործունեություն է իրականացվում, ապա այն հիմնականում առնչվում է ՀՀ-ին: Այդ է պատճառը, որ անգամ համաշխարհային վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին, երբ երկրների գերակշիռ մասում, այդ թվում նաև ՀՀ-ում, արձանագրվեց ՀՆԱ-ի կտրուկ անկում, ԼՂՀ-ում տնտեսական աճը


կայուն դրսևորումներ ցուցաբերեց (տես գծապատկեր 1):

Ներկայումս հանրապետության կազմակերպությունները նույնպես կայուն տնտեսական գործունեություն են ծավալում, որի արդյունքում 2014 թ. հունվար-հունիսին ԼՂՀ համախառն ներքին արդյունքը կազմել է 74854.5 մլն դրամ՝ 2013 թ. հունվար-հունիսի 66514.9 մլն դրամի դիմաց, ինդեքս դեֆլյատորի 4.7%-ի պայմաններում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՆԱ-ի ավելացման վրա իրենց դրական ազդեցությունն են ունեցել այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ապրանքների արտադրությունը և ծառայությունների մատուցման ծավալները, համապատասխանաբար 15 և 3.6 տոկոսներով: Ընդ որում, վերլուծվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի արձանագրած 7.4 % հավելածի 4 տոկոսային կետը ապահովել է արդյունաբերությունը, 1.3 տոկոսային կետը՝ տրանսպորտը և կապը, 0.8 տոկոսային կետը՝ կառավարումը և պաշտպանությունը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ԼՂՀ գործող կազմակերպություններում առավել ակտիվություն են ցուցաբերում արտադրական ձեռնարկությունները: Այսպես, կառուցվածքային տեսանկյունից, 2014 թ. հունվար հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ՀՆԱ-ում 1.1 տոկոսային կետով աճել է ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը, և դրան հակառակ, ծառայությունների ոլորտում ստեղծված ավելացված արժեքի տեսակարար կշիռը նվազել է 0.9 տոկոսային կետով: Այս առումով, ԼՂՀ կազմակերպությունների գործունեության մեջ դիտվում է որակական փոփոխություն, որի շնորհիվ տնտեսության ծանրության կենտրոնը տեղափոխվում է տնտեսվարման իրական հատված:

Այնուամենայնիվ, արտադրված համախառն ներքին արդյունքում տարիներ շարունակ գերակշիռ դերակատարում ունի ծառայությունների ոլորտը: Մյուս կողմից, ոլորտի վերլուծությունը ցույց է տալիս, որ մատուցվող ծառայությունների կեսից ավելին ոչ թե կոմերցիոն, այլ հանրային բնույթ ունեն: Սա նշանակում է, որ ԼՂՀ-ում ծառայություններ մատուցող կազմակերպությունների էական մասը չի գործում շուկայական մրցակցային հարաբերությունների հենքով: Այսպես, 2014 թ. հունվար հունիս ամիսներին ծառայությունների ոլորտը ՀՆԱ-ում կազմել է շուրջ 64.9 %, իսկ կոմեր-

ցիոն շահեր հետապնդող տրանսպորտային և կապի ծառայությունների տեսակարար կշիռը՝ 7%, առևտրինը՝ 5.7% :




**Գծապատկեր 1.** ՀՀ-ի դինամիկան ՀՀ-ում և ԼՂՀ-ում 2008-2013 թթ. (%- նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)<sup>15</sup>

Ըստ արտադրության սեկտորների, արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը 2014 թ. ցույց է տալիս, որ 36.7%-ը բաժին է ընկնում մշակող արդյունաբերությանը, 28.6%-ը՝ հանքարդյունաբերությանը, և 34,7%-ը էլեկտրաէներգիայի արտադրությանը (տես գծապատկեր 2): Իսկ մշակող արդյունաբերության կառուցվածքը դիտարկելիս պարզ է դառնում, որ դրա 56%-ը բաժին է ընկնում սննդամթերքների արտադրությանը, իսկ 11.5%-ը՝ խմիչքների արտադրությանը (տես գծապատկեր 3):

Այսպիսով, մշակող արդյունաբերության մեջ գերիշխող դերակատարում ունեն սննդի վերամշակման կազմակերպությունները, որոնք աշխատում են տեղական հումքի վրա և իրենց գործարար ակտիվությամբ նախապայմաններ են ստեղծում գյուղատնտեսության զարգացման համար: Սակայն մյուս կողմից, արդյունաբերական արտադրանքի թողարկումը համակենտրոնացված բնույթ ունի և գերակշռում է Ստեփանակերտ քաղաքում, որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում տարածքային տնտեսական համաչափ զարգացման համար:

<sup>15</sup> ՀՀ և ԼՂՀ ազգային վիճակագրական տարեգրքերի տվյալներ:




**Գծապատկեր 2.** Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը  
ԼՂՀ-ում (%) 2014 թ<sup>16</sup>

Հետազոտությունները ցույց են տալիս, որ 2014 թվ հունիսի դրությամբ ԼՂՀ գործող կազմակերպությունների 57.4%-ը գերփոքր են, իսկ 29.9%-ը՝ փոքր<sup>17</sup>։ Բնականաբար, ձևավորված իրավիճակում տնտեսվարող այս սուբյեկտները չեն կարող վարկունակ լինել, որն էլ խոչընդոտում է կազմակերպությունների վարկավորման գործընթացը։ Միջին և խոշոր կազմակերպությունների տեսակարար կշիռները տնտեսվարող գործող սուբյեկտների շրջանակում համապատասխանաբար կազմել են 6.4% և 6.3%, որոնք էլ հիմնականում համագործակցում են առևտրային բանկերի հետ վարկային փոխառությունների գծով։

Նման իրավիճակին նպաստում է նաև ըստ հասույթի ձևավորման չափերի, ԼՂՀ-ում դիտվող է գործող կազմակերպությունների անհավասարաչափ բաշխումը։ Այսպես, 2013 թվ. Հնթացքում արտադրանքի թողարկումից և մատուցված ծառայություններից ստացված հասույթը կազմել է 160032.9 մլն դրամ, որի 22.4 տոկոսը բաժին է ընկել արդյունաբերական կազմակերպություններին, 23.5տոկոսը՝ շինարարությանը, 38.7 տոկոսը՝ առևտրին, 13.8 տոկոսը՝ ծառայությունների ոլորտին։ Սակայն, հասույթի ձևավորման գործընթացում լուրջ դերակատարում են ունեցել խոշոր կազմակերպությունները, որոնց գործունեության արդյունքում ձևավորվող ներհոսքերը կազմել են ընդամենի 46.6 տոկոսը, կամ 74520.4 մլն դրամ։

<sup>16</sup> Կազմված է ՀՀ և ԼՂՀ ազգային վիճակագրական տարեգրքերի տվյալներով։

<sup>17</sup> Բիզնես ռեգիստրի հետազոտության զեկույց, ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2014 թ. էջ 45



**Գծապատկեր 3.** Արդյունաբերական արտադրաքի կառուցվածքը ըստ ԼՂՀ շրջանների<sup>18</sup>

ԼՂՀ կազմակերպությունների շրջանում կատարված հետազոտությունները վկայում են, որ գործարարները բիզնեսի խոչընդոտման հիմնական պատճառների թվին են դասում.

- անհավասար մրցակցությունը՝ 13,1%
- ֆինանսական վիճակը՝ 5,8%
- հարկային քաղաքականությունը՝ 3,7%:

Այսպիսով, ԼՂՀ կազմակերպությունների տնտեսական գործունեության ուսումնասիրությունների հիման վրա, մեր կողմից բացահայտվել են մի շարք առանձնահատկություններ:

Առաջին, առևտրային բանկերի վարկերի տեղաբաշխման ճյուղային կառուցվածքը ԼՂՀ-ում ցույց է տալիս, որ տնտեսության ոլորտում համեմատաբար զգալի վարկեր են տեղաբաշխվում արդյունաբերական կազմակերպություններում, իսկ վարկավորման գերակշիռ մասը վերառնդվում է ոչ թե տնտեսության իրական հատվածին, այլ բնակչության սպառողական պահանջների բավարարմանը, որն էլ խոչընդոտ է հանդիսանում տնտեսության ճյուղերի զարգացման համար:

Երկրորդ, ԼՂՀ-ում ծառայություններ մատուցող կազմակերպությունների էական մասը չի գործում շուկայական մրցակցային

<sup>18</sup> Կազմված ՀՀ և ԼՂՀ ազգային վիճակագրական տարեգրքերի տվյալներով:

հարաբերությունների հենքով, իսկ արդյունաբերության ոլորտում, ի տարբերություն ծառայությունների ոլորտի, գերակշռում են կոմ-մերցիոն շահ հետապնդող առևտրային կազմակերպությունները:

Երրորդ, մշակող արդյունաբերության մեջ գերիշխող դերա-կատարում ունեն սննդի վերամշակման կազմակերպությունները, որոնք աշխատում են տեղական հումքի վրա և իրենց գործարար ակտիվությամբ նախապայմաններ են ստեղծում գյուղատնտե-սության զարգացման համար: Սակայն մյուս կողմից, արդյունա-բերական արտադրանքի թողարկումը համակենտրոնացված բնույթ ունի և գերակշռում է Ստեփանակերտ քաղաքում, որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում տարածքային տնտեսական համաչափ զարգացման համար:

### ԱՄՓՈՓՈՒՄ

ԼՂՀ կազմակերպությունները կազմակերպում են իրենց տնտեսական գործունեությունը աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում: Տնտեսական մասնակի շրջափակումը և հետպա-տերազմական հետևանքները հանգեցրին նրան, որ հանրապետու-թյունում առավելապես մեծ տեսակար կշիռ են կազմում միկրո և փոքր ձեռնարկությունները: Հոդվածում, կայուն տնտեսվարման նպատակով, ներկայացվում են առաջարկություններ ԼՂՀ-ում գոր-ծող կազմակերպությունների կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ

**Петросян А. А.**  
преподаватель УММ НКР

## **СТАТИСТИЧЕСКАЯ КАРТИНА ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРЕДПРИЯТИЙ НКР**

**Ключевые слова:** экономика НКР, препятствия бизнеса, микро и малые предприятия, стабильное предпринимательство

Предприятия НКР развивают свою деятельность в сложных геополитических условиях. Частичная экономическая изоляция и послевоенная разруха привели к тому, что в республике большой уделенный вес занимают микро и малые предприятия, но вместе с тем, ведущую роль в экономике играют малочисленные крупные предприятия. В статье анализируются особенности хозяйственной деятельности предприятий НКР и на этой основе предлагаются пути улучшения структуры экономических субъектов, с учетом требований стабильного экономического развития.

**Petrosayan A. A.**  
Lecturar at the UMM NKR

## **STATISTICS PERFORMANCE OF NKR BUSINESS ENTITIES ECONOMY ACTIVITY**

**Key words:** economy of NKR, business activity obstacles, micro and small enterprises, stable business

Business entities in NKR making development in complicated geopolitical situation. Partly economic isolation and consequents of post war period carry out results, such us formation micro and small business entities with massive structural contributions, and the same time, with emerging a few huge enterprises, taking a serious role in economy. In article, is discussed economic activity peculiarities' of NKR business entities, from point of view their advance structural contributions, also taking consideration of stable economic development requirements'.



**Հակոբյան Մ.Գ.**

Հյուսիսային համալսարանի հայցորդ  
sejranhakobyan@gmail.com

## **ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր.** ազգային հարստություն, աշխատանքային ռեսուրսներ, մակրոտնտեսական հաշիվներ, կրկնակի գրանցում

Մակրոտնտեսական մակարդակով կազմակերպվող հաշվառման համակարգը նույնպես կազմակերպվում է հաշիվներում կրկնակի գրանցմամբ և նպատակ է հետապնդում ներկայացնելու հաշվետվություն, ընդգրկելով ազգային տնտեսության հաշվեկշիռը և ազգային տնտեսության համակարգը: Մակրոտնտեսության հաշվառման համակարգը ներառում է նյութական բարիքների արտադրության և սպառման բոլոր փուլերը: Մակրոտնտեսական կտրվածքով նյութական բարիքների արտադրության և սպառման գործընթացը ներկայացվում է հետևյալ փուլերով:

Արտադրության սկզբնական փուլ, երբ օգտագործվում են ընթացիկ ակտիվներ (բնական ռեսուրսներ, հումք և նյութեր), հաշվարկվում է ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա, ինչպես նաև կատարվում են աշխատուժի վճարումներ: Արտադրության և սպառման միջանկյալ փուլ, երբ սկզբնական փուլում թողարկված հանրային բարիքների մի մասը ուղղվում է ոչ թե վերջնական, այլ արտադրության միջանկյալ սպառմանը (նյութերի, կիսաֆաբրիկատների տեսքով): Հանրային բարիքների արտադրության այս փուլում այսպիսով ներգրավվում են ոչ միայն ընթացիկ, ոչ ընթացիկ ակտիվներ, աշխատանքային ռեսուրսներ, այլև արտադրության սկզբնական փուլում թողարկված պատրաստի արտադրանքի մի մասը (ցորենի արտադրությունից՝ հացամթերքների պատրաստում, կաշվի արտադրությունից՝ կոշիկի թողարկում և այլն):

Հանրային բարիքների արտադրության ինչպես սկզբնական, այնպես էլ միջանկյալ փուլում տեղի է ունենում ազգային տնտեսությունից հումք, նյութերի, պատրաստի արտադրանքի, մատուցվող ծառայությունների արտահանում և ներմուծում, ուստի արտաքին առևտրի արդյունքները նույնպես գործուն մասնակցություն

են ցուցաբերում տնտեսության համախառն արդյունքի ձևավորման գործընթացում:

Հանրային բարիքների վերջնական սպառում, երբ կատարվում է տնտեսավարման արդյունքների բաշխում և վերաբաշխում: Այս փուլում կատարվում է ոչ ընթացիկ ակտիվների համալրում (տնտեսությունում կապիտալ ներդրումներ, թողարկված նոր ակտիվներով մաշված հիմնական միջոցների վերականգնում), այլև օգտագործված արտադրական ռեսուրսների և ընթացիկ ակտիվների համալրում, ազգաբնակչության վերարտադրության ապահովում, տնային տնտեսությունների սպառման ընդլայնում:

Այսպիսով, հանրային բարիքները արտադրությունը նպատակ է հետապնդում ոչ միայն ազգաբնակչության սպառման կարիքների բավարարմանը, այլև տնտեսավարման ռեսուրսների վերականգնմանը և ազգային հարստության ավելացմանը, որը գուցորդվում է նաև տարվա կտրվածքով հավելյալ արդյունքի ձևավորմամբ: Տարվա կտրվածքով ազգային հարստության փոփոխության վիճակագրական հաշվառման մեխանիզմը ներկայացնենք պայմանական օրինակով:

Երկրի ազգային հարստությունը 2014 թվ. հունվարի 1-ի դրությամբ գնահատվել է 3 000 մլրդ դրամ, որի կազմում առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել ընթացիկ ակտիվները (բնական ռեսուրսները, ֆինանսաարտադրական պաշարները), և փոքր մասնաբաժնով ներկայացվել է մարդկային կապիտալը (տես աղյուսակ 1):

# Աղյուսակ 1

Ազգային տնտեսության հաշվեկշիռը առ 01.01.2014 (մլրդ դրամ)

| Ակտիվներ                | գումար       | Պասիվներ             | գումար       |
|-------------------------|--------------|----------------------|--------------|
| Ոչ ընթացիկ ակտիվներ     | 1 000        | Ազգային հարստություն | 3 000        |
| Ընթացիկ ակտիվներ        | 1 950        |                      |              |
| Աշխատանքային ռեսուրսներ | 50           |                      |              |
| <b>Հաշվեկշիռ</b>        | <b>3 000</b> | <b>Հաշվեկշիռ</b>     | <b>3 000</b> |

2014թ. ընթացքում երկրում կազմակերպվել է հանրային բարիքների արտադրություն և սպառում հետևյալ կտրվածքով (տես գծապատկեր 1).

➤ նյութական բարիքների թողարկման սկզբնական փուլում ծախսվել է 20 մլրդ դրամի հումք և ապրանքանյութական արժեքներ, 10 մլրդ դրամի աշխատավարձ, հաշվարկվել է 7 մլրդ դրամի ամորտիզացիա,

➤ նյութական բարիքների թողարկման սկզբնական փուլում 40 մլրդ դրամ համախառն արտադրանքի կազմում հավելյալ արդյունքը կազմել է 3 մլրդ դրամ,

➤ միջանկյալ արտադրության և սպառման փուլում ծախսվել են ապրանքանյութական արժեքներ 21 մլրդ դրամի (որից 16 մլրդ դրամը ստացվել է նյութական բարիքների թողարկման սկզբնական փուլից), ինչպես նաև 10 մլրդ դրամի աշխատավարձ, հաշվարկվել է 6 մլրդ դրամի ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա

➤ նյութական բարիքների թողարկման և սպառման միջանկյալ փուլում 45 մլրդ դրամ համախառն արտադրանքի կազմում հավելյալ արդյունքը կազմել է 8 մլրդ դրամ,

➤ հաշվետու տարում տնտեսություն ներմուծվել և տնտեսությունից արտահանվել է համապատասխանաբար 12 մլրդ և 7 մլրդ դրամի ապրանքանյութական արժեքներ, որոնց շարժը տեղի է ունեցել միջանկյալ սպառման և արտադրության փուլում,

➤ հաշվետու տարում թողարկված հանրային բարիքների վերջնական սպառումը կատարվել են հետևյալ ուղղություններով. ոչ ընթացիկ ակտիվների համալրում՝ 25 մլրդ դրամ, ընթացիկ ակտիվների համալրում՝ 22 մլն դրամ, աշխատուժի վերականգնում՝ 27 մլրդ դրամ:

Օգտվելով 2014թ. ընթացքում երկրում հանրային բարիքների արտադրության, բաշխման, վերաբաշխման և սպառման վերոնշյալ տեղեկատվությունից, մակրոտնտեսական հաշվառման համապատասխան հաշիվներով կազմենք կրկնակի գրանցման հաշվապահական թղթակցություններ:

1. Հաշվետու տարում ծախսվել են 20 մլրդ դրամի հումք և ապրանքանյութական արժեքներ՝ նյութական բարիքների թողարկման սկզբնական փուլում.

Դտ «Բարիքների թողարկում» .....20

Կտ «Ընթացիկ ակտիվներ».....20

2. Հաշվետու տարում ծախսվել է 10 մրդ դրամի աշխատավարձ՝ նյութական բարիքների թողարկման սկզբնական փուլում.

Դտ «Բարիքների թողարկում» .....10

Կտ «Աշխատանքային ռեսուրսներ».....10

3. Հաշվետու տարում հաշվարկվել է 7 մրդ դրամի ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա՝ նյութական բարիքների թողարկման առաջին փուլում.

Դտ «Բարիքների թողարկում» .....7

Կտ «Ոչ ընթացիկ ակտիվներ».....7

4. Ձևակերպվել է սկզբնական փուլում թողարկված արտադրանքի հավելյալ արդյունքը.

Դտ «Բարիքների թողարկում» .....3

Կտ «Հավելյալ արդյունք».....3

5. Ձևակերպվել է հաշվետու տարվա սկզբնական փուլով թողարկված արտադրանքի ընդհանուր արժեքը.

Դտ «Համախառն արդյունք».....40

Կտ «Բարիքների թողարկում».....40

6. Սկզբնական փուլով թողարկված 16 մրդ դրամ արտադրանք օգտագործվեց միջանկյալ սպառման փուլում.

Դտ «Բարիքների թողարկում».....16

Կտ«Համախառն արդյունք».....16

7. Հաշվետու տարում ծախսվել են 5 մրդ դրամի ապրանքանյութական արժեքներ՝ միջանկյալ սպառման փուլում.


Դտ «Բարիքների թողարկում» .....5

Կտ «Ընթացիկ ակտիվներ».....5

8. Հաշվետու տարում ծախսվել է 10 մրդ դրամի աշխատավարձ՝ միջանկյալ սպառման փուլում.

Դտ «Բարիքների թողարկում» .....10

Կտ «Աշխատանքային ռեսուրսներ».....10



**Գծապատկեր 1.** Հանրային բարիքների արտադրության և սպառման ամփոփ մեխանիզմը

9. Հաշվետու տարում հաշվարկվել է 6 մլրդ դրամի ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա՝ միջանկյալ սպառման փուլում.

Դտ «Բարիքների թողարկում» .....6

Կտ «Ոչ ընթացիկ ակտիվներ».....6

10. Ձևակերպվել է միջանկյալ սպառման փուլում թողարկված արտադրանքի հավելյալ արդյունքը.

Դտ «Բարիքների թողարկում» .....8

Կտ «Հավելյալ արդյունք».....8

11. Ձևակերպվել է հաշվետու տարվա միջանկյալ փուլով թողարկված արտադրանքի արժեքը.

Դտ «Համախառն արդյունք».....50

Կտ «Բարիքների թողարկում».....50

12. Ձևակերպվել է տնտեսություն հաշվետու տարում ներմուծված 12 մլրդ դրամի ապրանքանյութական արժեքը.

Դտ «Բարիքների թողարկում».....12

Կտ «Ներմուծում/արտահանում».....12

13. Ձևակերպվել է հաշվետու տարում տնտեսությունից արտահանված 7 մլրդ դրամի ապրանքանյութական արժեքը.

Դտ «Ներմուծում/արտահանում».....7

Կտ «Բարիքների թողարկում».....7

14. Ձևակերպվել է արտադրության բարիքների վերջնական սպառումը հետևյալ ուղղություններով՝ ոչ ընթացիկ ակտիվների համալրում՝ 25 մլրդ դրամ, ընթացիկ ակտիվների համալրում՝ 22 մլրդ դրամ, աշխատուժի վերականգնում՝ 27 մլրդ դրամ.

Դտ «Ոչ ընթացիկ ակտիվներ».....25

Դտ «Ընթացիկ ակտիվներ».....22

Դտ «Աշխատանքային ռեսուրսներ».....27

Կտ «Համախառն արդյունք».....74

15. Հաշվետու տարում տնտեսությունում ձևավորված 11 մլրդ դրամի հավելյալ արդյունքը վերագրվել է ազգային հարստությանը.

Դտ «Հավելյալ արդյունք».....11

Կտ «Ազգային հարստություն».....11

Ոչ ընթացիկ ակտիվներ

|        |      |
|--------|------|
| 1 000  |      |
| 14) 25 | 3) 7 |
|        | 9) 6 |
| 1 012  |      |

Ընթացիկ ակտիվներ

|        |       |
|--------|-------|
| 1 950  |       |
| 14) 22 | 1) 20 |
|        | 7) 5  |
| 1 947  |       |

Աշխ. ռեսուրսներ

|        |       |
|--------|-------|
| 50     |       |
| 14) 27 | 2) 10 |
|        | 8) 10 |
| 57     |       |

Ազգային հարստություն

|        |
|--------|
| 3 000  |
| 15) 11 |
| 3 011  |

Հավելյալ արդյունք

|        |       |
|--------|-------|
| 15) 11 | 4) 3  |
|        | 10) 8 |
|        | 0     |

Բարիքների թողարկում

|        |        |
|--------|--------|
| 1) 20  | 5) 40  |
| 2) 10  | 11) 50 |
| 3) 7   | 13) 7  |
| 4) 3   |        |
| 6) 16  |        |
| 7) 5   |        |
| 8) 10  |        |
| 9) 6   |        |
| 10) 8  |        |
| 12) 12 |        |
| 97     | 97     |
|        | 0      |

Համախառն արդյունք

|        |        |
|--------|--------|
| 5) 40  | 6) 16  |
| 11) 50 |        |
|        | 14) 74 |
| 90     | 90     |
| 0      |        |

Արտահանում/ներմուծում

|       |        |
|-------|--------|
| 13) 7 | 12) 12 |
|       | 5      |

**Գծապատկեր 2.** Ազգային տնտեսության հաշվառման հաշիվներ

Ազգային տնտեսության սկզբնական հաշվեկշռի (առ 01.01.2014) հիման վրա բացենք համապատասխան մակ-րոտնտեսական հաշիվներ, օգտագործելով նաև հաշվետու տարում հանրային բարիքների արտադրության և սպառման ամփոփման

հաշիվները, նրանցում կատարենք վերոնշյալ հաշվային թղթակցություններով կրկնակի գրանցումներ (տես գծապատկեր 2):

«Բարիքների թողարկում» մակրոտնտեսական հաշիվը ամփոփում է հաշվետու տարում երկրում թողարկված արտադրանքի և մատուցած ծառայությունների ծավալը, ինչպես արտադրության սկզբնական փուլում, այնպես էլ սպառման միջանկյալ և վերջնական փուլում: Տարվա վերջին հաշիվը մնացորդ չի ունենում, քանի որ թողարկված հավելյալ արդյունքի և վերջնական սպառման տեղեկատվությունը փոխանցվում համապատասխան հաշիվներ:

Ամփոփելով ազգային տնտեսության հաշվառման արդյունքները, մակրոտնտեսական հաշիվների սկզբնական և վերջնական մնացորդներով ներկայացնենք ազգային տնտեսության համեմատական հաշվեկշիռը մեկ տարի անց, այսինքն՝ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ:

## Աղյուսակ 2

Ազգային տնտեսության հաշվեկշիռը առ 01.01.2015 (մլրդ. դրամ)

|                         | սկզբ.        | վերջն.      |                        | սկզբ.        | վերջն.       |
|-------------------------|--------------|-------------|------------------------|--------------|--------------|
| Ոչ ընթացիկ ակտիվներ     | 1 000        | 1 012       | Ազգային հարստություն   | 3 000        | 3 011        |
| Ընթացիկ ակտիվներ        | 1 950        | 1 947       | Արտահանում/ ներմուծում | 0            | 5            |
| Աշխատանքային ռեսուրսներ | 50           | 57          |                        |              |              |
| <b>Հաշվեկշիռ</b>        | <b>3 000</b> | <b>3016</b> | <b>Հաշվեկշիռ</b>       | <b>3 000</b> | <b>3 016</b> |

Ազգային հարստության բաղադրիչների տարեսկզբի նկատմամբ տարեվերջի շեղումների հաշվեկշիռը հիմք է տալիս իրականացնելու մակրոտնտեսական գնահատումներ: Այսպես, 2014թ. ընթացքում երկրի ազգային հարստության աճը հիմնականում պայմանավորվել է կապիտալ ներդրումների ավելացումներով և ոչ ընթացիկ ակտիվների ընդլանված վերարտադրությունով (12 մրրդ դրամ), ինչպես նաև մարդկային կապիտալի հավելաճով (7 մլրդ դրամ): Այսինքն, այդ ժամանակահատվածում երկրում իրականացվել է կայուն տնտեսության զարգացման քաղաքականություն, ապահովելով հանրային բարիքների հետագա արտադրության անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և հիմնական կապիտալ:



Մակայն մյուս կողմից, պետությանը չի հաջողվել հաշվետու տարում վերարտադրել ծախսված ընթացիկ ակտիվների ծավալները, որը վկայում է էկոլոգիական տեսանկյունից բնական պաշարների, ապրանքանյութական արժեքների, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների անարդյունավետ օգտագործման մասին:

### **Ամփոփում**

Մարդկային կապիտալի չափման և հաշվառման խնդիրները ակտիվորեն քննարկվում են հաշվապահական հաշվառման և վիճակագրության տեսության ոլորտում: Ներկայումս կարևորվում է մարդկային կապիտալի միկրո և մակրոտնտեսական հաշվառման փոխկապակցումը, որի լուծման ուղիներ են առաջարկվում ներկայացվող հոդվածում: Մասնավորապես, հիմնավորվում է կրկնակի գրանցման հիման վրա վիճակագրական նոր հաշիվների վարումը, որը հնարավորություններ է ստեղծում մակրոտնտեսական մակարդակով հաշվառելու մարդկային կապիտալի շարժը:

**Hakobyan S.G.**

Post Graduating program researcher at the Northern University

### **HUMAN CAPITAL STATISTICAL ACCOUNTING ISSUES**

**Key words:** national wealth, workforce recourses, macro-economic accounts, double entry

Human capital assessment and accounting issues in currently is extensively taking discussions in accounting and statistical theoretical framework. Its coming inevitability making interrelations between human capital micro and macro accounting systems, which solution ways is presented in article. Particularly, is making corroboration for implementation new microeconomic accounts, processing on base of double entry, which will give us opportunity for accounting of human capital alterations.

**Акопян С.Г.**

Соискатель Северного университета

## **ПРОБЛЕМЫ СТАТИСТИЧЕСКОГО УЧЕТА ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА**

**Ключевые слова:** национальное богатство, трудовые ресурсы, макроэкономические счета, двойная запись

Проблемы измерения и учета человеческого капитала ныне активно обсуждаются в теоретических сферах бухгалтерского учета и статистики. Представляется важным формирование взаимосвязей между уровнями микро и макроэкономического учета человеческого капитала, о возможностях которого в статье приводятся аргументы. В частности, обосновывается внедрение новых статистических счетов, действующие на основе двойной записи, что даст возможность на макроэкономическом уровне организовать учет движения человеческого капитала.

**Փահլևանյան Ս.Վ.**

Հյուսիսային համալսարանի հայցորդ  
pahlevanyan@bk.ru

## **ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՔՐՍԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՑՆ ԲԱՂԱՂԴԻՉ**

**Բանալի բառեր.** մաքսային զննում, մաքսային փաստաթղթեր, մաքսային հաշվառում, մաքսային հաշվետվություններ

Արտաքին տնտեսական գործունեությունը և առաջին հերթին արտաքին առևտուրը կապված են երկրի մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման հետ ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց կողմից: Ընդ որում, ապրանքները և տրանսպորտային միջոցները ենթակա են մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող միասնական մաքսային քաղաքականությունը հանդիսանում է ՀՀ համընդհանուր տնտեսական քաղաքականության անբաժանելի մասը, որի նպատակներից մեկն էլ հանդիսանում է ՀՀ մաքսային սահ-

մանով տեղափոխվող և մաքսային տարածքում արդեն տեղափոխված ապրանքների ու տրանսպորտային միջոցների մաքսային հսկողությունը:

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության էությունը և մեխանիզմը հասկանալու համար կարևոր է հաշվի առնել այդ գործընթացների հետ կապված հիմնական տերմինների և հասկացությունների նշանակությունը, ինչպիսիք են ՀՀ մաքսային տարածքը, մաքսային սահմանը, ապրանքները, տրանսպորտային միջոցները, մաքսային սահմանով տեղափոխումը, ապրանքներ տեղափոխող անձինք, հայտարարատուները, մաքսային միջնորդները (բրոքերները), փոխադրողները, մաքսային ռեժիմը և այլն:

ՀՀ մաքսային օրենսդրության համապատասխան՝ մաքսային մարմինների կարևորագույն գործառնություններից է հանդիսանում արտաքին տնտեսական գործունեության (ԱՏԳ) մասնակիցների կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման իրականացումը:

Մաքսային հսկողության նպատակն է հայտնաբերել պատահական կամ մտածված իրավախախտումները, իմանալ իրավական նորմերի խախտման պատճառները, կանխել հնարավոր վնասները, որոնք հասցվում են պետությանը: Այն հնարավորություն է տալիս նաև օրենքների և ենթաօրենսդրական ակտերի կիրառման միջոցով գտնել իրավախախտներին, արարքներին տալ իրավաբանական որակավորում, որն էլ նպաստում է ԱՏԳ կարգավորմանը: Մաքսային հսկողության նպատակներից մեկն էլ հանդիսանում է ՀՀ օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի իրականացման հսկողությունը, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը արտաքին առևտրի կարգավորման և այլ հարցերում:

Մաքսային նպատակներով անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ստուգումը իրականացվում է փաստաթղթերի ուսումնասիրությամբ, սահմանվում է դրանց ձևակերպման և սահմանված կանոններով ու նորմերով լրացման համապատասխանությունը: Մաքսային հսկողության այս ձևը կարող է նախորդել

մաքսային հսկողության այլ ձևերին՝ զննման, քննման, հաշվառման և այլն: Մակայն առանձին դեպքերում մաքսային հսկողությունը կարող է սահմանափակվել միայն փաստաթղթերի ստուգմամբ:

Մաքսային նպատակներով անհրաժեշտ փաստաթղթերը ըստ իրենց նշանակման, որպես կանոն, բաժանվում են հետևյալ խմբերի՝

1. տրանսպորտային,
2. առևտրային,
3. մաքսային,
4. այլ փաստաթղթեր:

Տրանսպորտային փաստաթղթերին վերաբերում են ապրանքագիրը (բեռնագիր), նավաբեռնագիրը, մանիֆեստները, ուղևորության ամփոփագիրը, փոխանցման ամփոփագիրը, ուղեբեռի ստացականները և այլն:

Առևտրային փաստաթղթերին վերաբերում են պայմանագրերը, համաձայնագրերը, հաշիվ-ֆակտուրաները, բնորոշող փաստաթղթերը, ինվոյսները, փաթեթավորման թերթերը և այլն:

Մաքսային փաստաթղթերին վերաբերում են այն փաստաթղթերը, որոնք տրվում կամ ձևակերպվում են մաքսային մարմինների կողմից, օրինակ՝ լիցենզիաներ մաքսային պահեստի, ժամանակավոր պահպանման պահեստի, անմաքս առևտրի խանութի հիմնման (բացման), մաքսային ձևակերպման համար մասնագետի որակավորման ատեստատի, առաքման հսկողության փաստաթղթի, մաքսային արժեքի հայտարարագրի, բեռնային մաքսային հայտարարագրի, մաքսային հսկողության ներքո տրանսպորտային միջոցների տեղափոխման համար թույլտվության վկայագրի համար:

Այլ փաստաթղթերին վերաբերում են անձանց այն հիմնադիր փաստաթղթերը, որոնք հաստատում են անձի իրավունքը իրականացնելու արտաքին առևտրային գործունեություն, օրինակ՝ անասնաբուժական և ֆիտոսանիտարական հսկողություն իրականացնող մարմինների թույլտվություն, մշակույթի նախարարության թույլտվություն և այլն:

Մաքսային հսկողության նշված ձևի օրինակ կարող է լինել մաքսային սահմանով ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխող անձանց, մաքսային բրոքերների ֆինանսատնտես-

սական գործունեության ստուգումը: Դրա հետ մեկտեղ մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն պահանջելու մաքսային գործին առնչվող արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար ցանկացած փաստաթղթերի և տեղեկատվության անհատույց տրամադրում:

Մաքսային զննումը վարչական գործողություն է, որը ենթադրում է մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման օրինականության սահմանման, բեռնային մաքսային հայտարարագրերում ամփոփված տվյալները ստուգվող ապրանքների հետ համապատասխանության, արգելված ապրանքների ներմուծման կամ արտահանման կանխարգելման, ապրանքների մաքսանենգ տեղափոխման հայտնաբերման նպատակներով ապրանքների և տրանսպորտային միջոցների փաստացի ստուգում:

Զննումը իրականացվում է ապրանքների փաթեթավորումը բացելու, նրանց անվանացանկը պարզելու, ապրանքի քանակը հաշվելու, ապրանքի որակը գնահատելու, թաքցրած ապրանքները հայտնաբերելու նպատակով ապրանքների և տրանսպորտային միջոցների վայրերը, կոնստրուկտիվ առանձնահատկությունները ստուգելու ճանապարհով: Նշված նպատակների իրականացման համար կիրառվում են մաքսային հսկողության տեխնիկական միջոցներ և այլ մեթոդներ:

Մաքսային զննումը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

- նույնական զննում, որն իրականացվում է պարզեցված կարգով հայտարարատուի կողմից հայտարարագրված ապրանքների նկարագրի և քանակի փաստացի համապատասխանությունը պարզելու, ապրանքի ծագման երկիրը սահմանելու նպատակով,

- զննում բեռնման վայրերի (բեռնատեղ) քանակի հաշվարկման միջոցով՝ առանց դրանց բացման,

- զննում բեռնման վայրերում առարկաների քանակի հաշվարկման միջոցով,

- զննում չափման և ապրանքի բնութագրի սահմանման միջոցով՝ նմուշներ և փորձանմուշներ վերցնելով,

- զննում՝ ուղղված գաղտնարանների, մաքսանենգության բացահայտմանը:

Զննումն իրենից ներկայացնում է ապրանքների և տրանսպորտային միջոցների հսկողության և ձևակերպման առանձին

փուլ: Հսկողության արդյունքների հիման վրա կազմվում է մաքսային զննման ակտ (արձանագրություն):

Ֆիզիկական անձանց բանավոր հարցումը մաքսային հսկողության այնպիսի ձև է, որի դեպքում մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողությունն իրականացվում է ՀՀ մաքսային սահմանը հատող ֆիզիկական անձանց բանավոր հարցմամբ:

Ֆիզիկական անձանց ուղեբեռի զննման ժամանակ տարածաշրջանային մաքսատան կամ մաքսային կետի պաշտոնատար անձն իրավունք ունի կատարել ուղեբեռի զննում՝ բացելով այն, երբ հիմքեր կան ենթադրելու, որ ֆիզիկական անձը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխում է այնպիսի ապրանքներ, որոնք այլ պետական մարմինների կողմից ենթակա են հսկողության, հաշվառման կամ մաքսային վճարներով հարկման, ինչպես նաև ապրանքներ, որոնց տեղափոխումն արգելված կամ սահմանափակված է: ՀՀ մաքսային մարմիններն իրավունք ունեն նաև կատարել ՀՀ մաքսային տարածքով տարանցիկ ուղևորություն կատարող ֆիզիկական անձանց ուղեբեռի զննում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ դրանք պարունակում են տարանցիկ փոխադրման համար արգելված ապրանքներ:

Ֆիզիկական անձանց ուղեբեռի զննումը կատարվում է միայն նրա կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի ներկայությամբ: Եթե ֆիզիկական անձը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը բացակայում է, ապա ուղեբեռի զննումը կատարվում է՝

- եթե բավարար հիմքեր կան, որ ուղեբեռը պարունակում է մարդու կյանքի և առողջությանը, կենդանիների ու բույսերի համար վտանգ ներկայացնող կամ անձանց նյութական վնաս պատճառող ապրանքներ,

- ուղեբեռի ստացման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, ֆիզիկական անձի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կայանալու դեպքում,

- միջազգային փոստառաքումով ապրանքների առաքման դեպքում:

Ֆիզիկական անձի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի բացակայության դեպքում ուղեբեռի զննումը կատարվում է դրա փոխադրումը, առաքումը կամ պահպանումն իրականացնող կազմակերպության ներկայացուցչի ներկայությամբ:

Մաքսային ապահովումների կիրառումը մաքսային մարմինների կողմից կարող է կիրառվել այն տրանսպորտային միջոցների, շինությունների և այլ վայրերի նկատմամբ, որտեղ գտնվում են կամ կարող են գտնվել մաքսային հսկողության ենթակա ապրանքներ կամ տրանսպորտային միջոցներ, և որտեղ մաքսային մարմինների կողմից իրականացվում են վերահսկվող գործողություններ:

Մաքսային ապահովման միջոցներ կիրառվում են կնիքների, կապարակնիքների, դրոշմելու, թվային, տառային և այլ դրոշմավորման, նույնականացնող նշանների կիրառմամբ, դրոշմներ նշելով, նշումներ կամ փորձանմուշներ վերցնելով, ապրանքների և տրանսպորտային միջոցների նկարագրությամբ, գծագրեր կազմելով, մասշտաբային պատկերների, լուսանկարների, իլյուստրացիաների պատրաստմամբ, ապրանքներն ուղեկցող փաստաթղթերի և մաքսային ապահովման այլ միջոցների օգտագործմամբ:

Մաքսային ապահովման միջոցները կարող են փոփոխվել կամ վերացվել միայն մաքսային մարմինների կողմից կամ նրանց թույլտվությամբ, բացառությամբ ապրանքների և տրանսպորտային միջոցների անվերադարձ կորստի, շոշափելի փչացման կամ ոչնչացման իրական վտանգի առկայության դեպքերի: Մաքսային մարմիններն անհապաղ պետք է տեղեկացվեն մաքսային ապահովման միջոցների փոփոխման կամ վերացման մասին, և պետք է ներկայացվեն վտանգների գոյության ապացույցներ:

Ապրանքների և տրանսպորտային միջոցների հաշվառումը: Մաքսային հսկողության տվյալ ձևը կիրառվում է այն պայմանով, որ մաքսային մարմինների վրա պարտավորություն է դրված մաքսային սահմանով տեղափոխվող, մաքսային պահեստներում, ժամանակավոր պահպանման պահեստներում տեղավորված, մաքսային փոխադրողների կողմից տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների համար վարել վիճակագրական հաշվառում: Մասնավորապես, հաշվառումն իրականացվում է տարբեր գրանցման գրքերի և մատյանների վարման միջոցով, որոնցում լրացվում է ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը: Դրանք կարող են լինել բեռնային մաքսային հայտարարգրի (ԲՄՀ) գրանցման մատյանները, այն մատյանները, որոնցում նշվում են ժամանակավոր պահպանման պահեստում տեղավորված ապրանքների վերաբերյալ տեղեկատ-

վությունը, ՀՀ մաքսային սահմանը հատող տրանսպորտային միջոցների հաշվառման մատյանները և այլն:

Մաքսային հսկողության ձևերից է հանդիսանում նաև հաշվառման և հաշվետվությունների ստուգումը, որի համաձայն մաքսային մարմինները հսկում են ժամանակավոր պահպանման պահեստում ապրանքների հաշվառման վիճակը: Մաքսային մարմնի լիազոր պաշտոնատար անձի գրավոր պահանջի հիման վրա պահեստի տնօրենը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել պահեստում պահպանվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ: Մաքսային մարմինը պարտավոր է իրականացնել պահեստում պահպանվող ապրանքների և տրանսպորտային միջոցների գույքագրումը:

### **Ամփոփում**

Մաքսային վիճակագրությունը դեռևս ՀՀ-ում զարգացման անհրաժեշտություն ունի: Պաշտոնական վիճակագրությունը առնչվում է հիմնականում ներկրվող և արտահանվող ապրանքների շարժի, մաքսավճարների հավաքագրման հետ, միայն հպանցիկ անդրադարձ կատարելով մաքսային գնումների արդյունքներին: Հոդվածում ընդգծվում է ՀՀ վիճակագրության դերի բարձրացման անհրաժեշտությունը մաքսային հսկողության գործիքակազմի շրջանակում:

**Пахлеванян С.В.**

соискатель Северного университета

## **СТАТИСТИКА КАК ВАЖНОЕ СОСТАВЛЯЮЩЕЕ ТАМОЖЕННОГО КОНТРОЛЯ**

**Ключевые слова:** таможенный осмотр, таможенная документация, таможенный учет, таможенные отчетности

Статистика таможенной деятельности все еще нуждается в совершенствовании в РА. Официальная статистика в основном относится к изменению экспорта, импорта товаров, степени собираемости таможенных пошлин, лишь косвенно касаясь результатам таможенного досмотра. В статье подчеркивается необходимость повышения роли статистики в рамках инструментов таможенного досмотра, осуществляемых в РА.



**Pahlevanyan S.V.**  
Post Graduate Participant at the Northern University

## STATISTICS AS AN IMPORTANT COMPONENT IN CUSTOM CONTROL

**Key words:** custom inspection, customs documentation, custom accounting, statements of custom activity

Statistics of customs activity is still requiring development in the Republic of Armenia. Currently the official statistics is mainly relevant to outflows and inflows commodities, and also collections of customs fees, simultaneously having poor reflections from assessment of customs inspection results. In the article is underlined the necessity of raising role of statistics in framework of custom inspections tolls at the Republic of Armenia.

**Խալատյան Հ.Ա.**  
Հյուսիսային համալսարանի դասախոս  
harutyun.khalatyan@gmail.com

### ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

**Բանալի բառեր.** միգրացիա, քաղաքական և սոցիալ-տնտեսական դրդապատճառներ, բնակչության բնական աճ

Բնակչության թվաքանակի, կառուցվածքի, ինչպես նաև աշխատանքային ռեսուրսների կազմի և որակի վրա մեծ ազդեցություն է թողնում միգրացիան, որի մասշտաբները և ինտենսիվությունը մեծ չափով կախված է երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից:

Միգրացիան (լատիներեն՝ migratio-վերաբնակեցում) մարդկանց տեղաշարժն է վիճակագրական հաշվառման մի վայրից (երկրից, քաղաքից, գյուղից) մյուսը՝ մշտական կամ ժամանա-

կավոր բնակության համար: Օգտագործվում է նաև «գաղթ» հասկացությունն այն դեպքում, երբ տեղի է ունենում բնակչության տեղաշարժերը երկու երկրների միջև:

Միգրացիայի պատճառներից (տնտեսական, սոցիալական, քաղաքական, ազգային, կրոնական, ընտանեկան, կենցաղային) տարածվածը տնտեսականն է, որը կատարվում է նախ աշխատանք, ապա բարձր աշխատավարձ և ռեալ եկամուտներ ու բարձր կենսամակարդակ ունենալու հեռանկարով: Ըստ դրդապատճառների բնույթի առանձնացնում են կամավոր և հարկադրական միգրացիաներ: Մասնագետների մեծամասնությունը հարկադրական միգրացիան դիտարկում են որպես այն մարդկանց տեղաշարժ, որոնք բնակության վայրը լքել են իրենց կամ իրենց ընտանիքների անդամների նկատմամբ կիրառված բռնության կամ հետապնդման ու հալածանքի պատճառով: Հարկադրական միգրանտներ են նաև այն անձինք, որոնք իրենց մշտական բնակության վայրը լքել են ռազմական միջադեպերի, զինված կոնֆլիկտների, բախումների, մարդու իրավունքների սիստեմատիկ խախտման, ռոնահարման, բնական ու տեխնոգեն աղետների հետևանքով:

Հարկադրական միգրացիոն պրոցեսներ իրականացվել են նաև վաղ անցյալում: Օրինակ՝ սևամորթ ստրուկների բռնի տեղահանությունը (դեպորտացիան) Աֆրիկայից և վաճառքն Ամերիկայում, մարդկանց բռնի վերաբնակեցումը, Ուրալի մետալուրգիական և ծանր մեքենաշինության տարբեր ենթաճյուղերի գործարաններում աշխատելու համար:


Հարկադրական միգրացիաների մասշտաբներն ու հաճախությունը մեր օրերում ավելի է մեծացել: Բավական է նշել այն փաստը, որ 1974-2013թթ. ընկած ժամանակահատվածում աշխարհում փախստականների թիվն աճել է գրեթե 15 անգամ (2.5մլն-ից մինչև 33.3մլն): Վերջին ժամանակներս հենց Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում նկատվում է միգրացիայի աճ:

Հայտնի է, որ բազմաթիվ երկրներում բացակայում է պետական մարմինների կողմից հարկադրական միգրանտների հաշվառման և հաշվարկման խիստ կանոնակարգված գործընթացը և չի կատարվում փախստականների, ապաստան փնտրողների (քաղաքական ապաստան փնտրողները մեկ այլ կատեգորիայի մեջ

են մտնում, քանի որ սա միջազգային իրավական գործընթաց է) և արտաքսվածների սիստեմատիկ վիճակագրական հաշվառում:

### Քարտեզ 1

Բնակչության հիմնական միգրացիաները  
XVIIդ.-ից մինչև XIXդ. առաջին կեսը



Բնակչության հիմնական միգրացիաները XVIIդ.-ից մինչև XIXդ. առաջին կեսը

- Միգրացիաներ եվրոպայից: ① դեպի Հյուսիսային Ամերիկա: ② դեպի Հարավային և Կենտրոնական Ամերիկա:  
③ դեպի Հարավային Աֆրիկա (բուրեր) և Ավստրալիայի գաղութացման սկիզբը: ④ ասիական տարուկների տարածումը Ամերիկա:  
⑤ ռուս և նմանոր ուկրաինացի ժողովուրդների վերաբնակեցումը: ⑥ չինացիների միգրացիան դեպի Հարավ-Արևելյան Ասիա:  
⑦ հնդիկ ժողովուրդների միգրացիան դեպի Արևելյան և Հարավային Աֆրիկա: ⑧ մերձիկ միգրացիան ԱՄՆ-ում

Աշխարհաքաղաքական իրավիճակից ելնելով միջազգային օրակարգի կարևոր խնդիրներից մեկը փախստականների և նրանց ճիշտ հաշվարկման խնդիրն է: Մերձավոր Արևելքում ԱՄՆի փախստականների և իմիգրանտների կոմիտեի (USCRT)-ի տվյալներով դեռևս 2005թ.-ին կազմել է 4.9մլն մարդ: Վերջին տարիներին այդ ցուցանիշները կտրուկ ավելացել են: Ներկայումս Սիրիայի հարյուր հազարավոր քաղաքացիներ գտնվում են Թուրքիայի տարածքում (484.320), իսկ փախստականի կարգավիճակին սպասողների թիվը՝ 8936 է<sup>2</sup>, Լիբանանում ըստ գրանցված տվյալների՝ 654.115 է եղել<sup>3</sup>, Հորդանանում կազմել է՝ 523.607 փախստական<sup>4</sup>:

<sup>2</sup>data.unhcr.org(16/19.09.2013)

<sup>3</sup> data.unhcr.org(21.09.2013)

<sup>4</sup> data.unhcr.org(23.09.2013)

Տարածաշրջանում փախստականների ամենակարևոր հարցերից մեկը՝ քրդականն է: Այս հարցը միանգամից հուզում է մի քանի երկրների (Թուրքիա, Իրաք, Սիրիա, Իրան): Ներկայումս իրավիճակն էլ ավելի է սրվել իսլամիստ ծայրահեղականների ռազմական գործողությունների պատճառով: Որի հետևանքով հազարավոր արաբներ, քրդեր, եզդիներ, հայեր դարձել են հարկադիր միգրանտներ՝ քաղաքական դրդապատճառներից ելնելով: Փաստորեն այս տարածաշրջանը ոչ թե դիվեմայի, այլ տրիվեմայի լուծման խնդիր ունի: Ինչպես աշխարհի տարբեր ռեգիոններում, այնպես էլ այստեղ հարկադրական միգրացիաներ լինում են ոչ միայն քաղաքական, ռազմական, այլև՝ սոցիալ-տնտեսական դրդապատճառներով: Ամբողջ աշխարհում օրեցօր սրվում է պարենային հիմնախնդիրը, որն էլ ինքնին առաջացնում է միգրացիա՝ սոցիալ-տնտեսական դրդապատճառով:

Այս ռեգիոնից նկատվում է միգրացիաների գլխավորապես երկու հոսք՝ դեպի Եվրոպա և Պարսից ծոցի նավթով ու գազով հարուստ այլ արաբական երկրներ: Մահմեդական միգրանտները հաստատվելով եվրոպական երկրներում առաջացնում են ժողովրդագրական հիմնախնդիրներ: Ինչպես հայտնի է եվրոպական որոշ երկրներում բնակչության բնական աճը զրո է կամ բացասական: Բնական է այդ երկրներում տեղի է ունենում դեպոպուլյացիա: Փաստորեն եվրոպական այն երկրներում, որտեղ բնակչության բնական աճ չկա կամ բացասական է, ընդունում են մահմեդական միգրանտներին իրենց ընտանիքներով և որոնք էլ աչքի են ընկնում բնակչության համեմատաբար բնական աճի բարձր ցուցանիշներով, սրում են սոցիալ-տնտեսական իրավիճակն այդ երկրներում: Հարցի սուբստանցիան կայանում է նրանում, որ որոշ եվրոպական երկրներում անհրաժեշտ է կոնսոլիդացնել հասարակությանը իրականացնելով՝ նոր ժողովրդագրական քաղաքականություն:

Հարկադրական միգրանտների որոշ մասն էլ հաստատվում է Պարսից ծոցի ավազանի նավթով և գազով հարուստ այլ արաբական երկրներում: Միգրանտներն այստեղ ներգրավվում են որպես էժան աշխատուժ: Դա է պատճառը, որ մի շարք երկրներում բնակչությունն աճում է ներգաղթի շնորհիվ: Քուվեյթը, Քաթարը, Մաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ

Էմիրությունները (ԱՄԷ), Բահրեյնը, Օմանը որպես վառելիքային ռեսուրսներով հարուստ երկրներ աշխատուժի կարիք են զգում և դեպի ռեզիդենտ են ձգում աշխատանքային միգրանտներին: Արդյունքում ոչ միայն ավելանում է Պարսից ծոցի ավազանի երկրների բնակչությունը, այլև փոխվում է բնակչության սեռային կազմը(տե՛ս աղյուսակ 1):

### Աղյուսակ 1

Պարսից ծոցի ավազանի երկրների բնակչության սեռային կազմը<sup>5</sup>

| Պետություն         | Ընդհանուր բնակչ.<br>(մարդ) 2014 սեպտեմբեր | Տղամարդ-<br>կանց թիվը(%) | Կանանց<br>թիվը(%) |
|--------------------|-------------------------------------------|--------------------------|-------------------|
| Քուվեյթ            | 3.404.678                                 | 59.6                     | 40.4              |
| Քաթար              | 2.087.969                                 | 75.9                     | 24.1              |
| Սաուդյան<br>Արաբիա | 29.267.123                                | 55.2                     | 44.8              |
| Ա.Մ.Է.             | 9.844.464                                 | 69.5                     | 30.5              |
| Բահրեյն            | 1.401.321                                 | 62.6                     | 37.4              |
| Օման               | 3.464.926                                 | 59                       | 41                |

Բավական է նշել այն փաստը,որ նավթարդյունաբերությունը ծանր արդյունաբերության ճյուղ է,որում զբաղված են հիմնականում տղամարդիկ,իսկ տղամարդկանց մեջ էլ առավելապես երիտասարդներն ու առողջները: Մեկ կարևոր հանգամանք ևս կա.այս աշխատուժ միգրանտների (մեծամասամբ քաղաքական, սոցիալ-տնտեսական դրդապատճառներից ելնելով հարկադիր միգրացիա կատարողների) ճնշող մեծամասնությունը մենակյացներ են: Գցելով «թռուցիկ հայացք», կատարելով որոշակի անալիզ և սինթեզ, կարելի է եզրակացնել, որ ծոցի որոշ երկրներում ստեղծվել է ունիկալ իրավիճակ,այսինքն՝իմիգրանտները կազմում են բացարձակ մեծամասնություն (տե՛ս աղյուսակ 2): Քննարկելով միգրացիա պրոցեսի սուբստանցիան որպես համաշխարհային երևույթ պետք է փաստել, որ այն համարվում է ժամանակակից քաղաքակրթության սուր հիմնախնդիրներից մեկը: Ընդ որում վերջին տասնամյակներում նկատվում է միգրացիոն պրոցեսների որոշակի թարմացում, որը կապված է մի շարք երկրներում քաղաքական և սոցիալ-տնտեսական գործոնների հետ:

<sup>5</sup> www.countrymeters.info-ի տվյալներով աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

Ներկայումս միգրացիան այս կամ այն չափով ընդգրկել է աշխարհի բոլոր երկրները, սակայն դրանցից յուրաքանչյուրում՝ մասնավորապես Մերձավոր Արևելքում, նկատվում է ներգաղթողների և արտագաղթողների համամասնությունների յուրահաստկություն:

## Աղյուսակ 2

Պարսից ծոցի ավազանի երկրների բնակչության կազմն ըստ բնիկների և միգրանտների<sup>6</sup>

| Պետություն      | 2010-2013թթ. բնակչ. թիվը (մլն մարդ) | Բնիկներ(բնիկ -արաբներ)-% | Միգրանտներ-% |
|-----------------|-------------------------------------|--------------------------|--------------|
| Քուվեյթ         | 2,8/3,3                             | 45                       | 55           |
| Քաթար           | 1,7/1,9                             | 40                       | 60           |
| Սաուդյան Արաբիա | 26,9                                | 70                       | 30           |
| Ա.Մ.Է.          | 7,8/8,5                             | 33                       | 67           |
| Բահրեյն         | 1,2                                 | 50                       | 50           |
| Օման            | 2,7/2,97                            | 80                       | 20           |

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ցանկացած պետության բնակչության թվաքանակի, կառուցվածքի, ինչպես նաև աշխատանքային ռեսուրսների կազմի և որակի վրա մեծ ազդեցություն են թողնում միգրացիաները, որոնց մասշտաբները և ինտենսիվությունը մեծ չափով կախված են երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից:

Մերձավոր Արևելքում միգրացիայի գլխավոր դրդապատճառներից՝ սոցիալ-տնտեսականին ավելանում է նաև քաղաքական շարժառիթներով կատարվող միգրացիան: Այս ռեզիդուր դարձել է պալքարի թատերաբեմ և ունենալով վառելիքային ռեսուրսների մեծ պաշարներ գտնվում է աշխարհի գերտերությունների ուշադրության կենտրոնում:

<sup>6</sup>(ru.wikipedia.org-ի տվյալներով աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից)

## **THE MAIN DIRECTIONS AND TRENDS OF FORCED MIGRATION PROCESSES IN THE MIDDLE EAST**

**Key words:** migration, political and socio-economic reasons, natural growth of population

The migrations, which scales and intensity to a large extent depend on the socio-economic level of the countries, have a huge impact on the population size, structure, as well as on the composition and quality of labor resources of any state.

In the Middle East migration increases due to political motives are added to the main socio-economic reasons. This region has become an arena of struggle and having large reserves of fuel resources is in the center of attention of the world superpowers.

**Халатян А.А.**  
Лектор Северного университета

## **ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ И ТЕНДЕНЦИИ ВЫНУЖДЕННЫХ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ**

**Ключевые слова:** миграция, политические и социально-экономические причины, естественный прирост населения

На численность и структуру населения любого государства, а также на состав и качество трудовых ресурсов большое влияние оказывают миграции, масштабы и интенсивность которых в большинстве зависят от уровня социально-экономического развития стран. На Ближнем Востоке к социально-экономическим причинам миграции прибавляется также миграция по политическим мотивам. Этот регион находится в центре внимания мировых сверхдержав, и стал ареной борьбы из-за имеющихся больших запасов топливных ресурсов.

**Ավետիսյան Մ. Ս.**  
ՀՊՏՀ, Վիճակագրության ամբիոն,  
ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու,  
Maravetisyan78@gmail.com

## **ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԼԱՍՏԵՐԱՑԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Հիմնադրամեր.** կլաստերային վերլուծություն, սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական գործոն, համախառն տարածաշրջանային արդյունք, դենդոգրամա, աղքատության մակարդակ, գործազրկության գործակից, բնակչության մեխանիկական հավելաճի գործակից:

Սույն հոդվածի շրջանակներում ՀՀ տարածաշրջանների զարգացման ուսումնասիրության համար հույժ կարևոր են համարվել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական փոփոխականների համատեղ հետազոտման անհրաժեշտությունը, քանզի վերջին երկու տասնամյակներում ՀՀ մարդկային կապիտալի կորուստները, թե՛ տարածական և թե՛ ժամանակային առումներով, մեծամասամբ անվերադարձ են և չվերականգնվող:

ՀՀ տարածաշրջանների զարգացման անհամաչափությունը բացահայտելու նպատակով կիրառվել է կլաստերային վերլուծության մեթոդ: *Կլաստերային* վերլուծությունը համանման է գործոնային վերլուծությանն այն իմաստով, որ նույնպես թույլ է տալիս ընդգծել վիճակագրորեն միանման փոփոխականները միավորող գործոնները (կլաստերները): Սակայն վերջինիս ժամանակ փոփոխականները դասակարգվում են ոչ թե կոռելյացիոն կապի սերտության աստիճանի, այլ առավել բարդ վիճակագրական ընթացակարգերի հիման վրա: Չնայած, կլաստերային վերլուծությունը հնարավորություն է ընձեռում դասակարգել փոփոխականները, այնուամենայնիվ վերջինս ավելի հաճախ օգտագործվում է դիտարկվող օբյեկտներն ըստ խմբերի դասակարգելու համար:

ՀՀ մարզերն, ըստ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի, առանձին կլաստերների բաժանելու համար կիրառվել են աղյուսակ 1-ում բերված ցուցանիշները: Այժմ համառոտակի նկարագրենք դրանց տնտեսագիտական բովանդակությունը և հաշվարկման մեթոդը: Առաջին ցուցանիշը բնակչության մեխանիկական (միգրացիոն) հավելաճի գործակիցն է, որը ցույց է տալիս



2002թ. տարեսկզբի համեմատությամբ հետագա տաս տարիների ընթացքում միգրացիայի սալըն՝ հազար բնակչի հաշվով:


Երկրորդ ցուցանիշը բնակչության զբաղվածության գործակիցն է, որը բնութագրում է աշխատունակ տարիքի բնակչության մեջ (15-75 տարեկան) զբաղվածների տեսակարար կշիռը, իսկ գործազրկության գործակիցը՝ տնտեսապես ակտիվ բնակչության մեջ գործազուրկների կշիռը: Նշված ցուցանիշների մարզային մակարդակներում դիտվում է հետևյալ օրինաչափությունը՝ որպես կանոն, բոլոր մարզերում բնակչության զբաղվածությունը զգալիորեն բարձր է գյուղական վայրերում, հետևաբար՝ նույն վայրերում են ցածր գործազրկության գործակիցները: Հաջորդ երկու ցուցանիշների՝ 15 տարեկանից բարձր բնակչության մեջ տղամարդկանց ու բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռները (տոկոսով) ստացվել են 2011թ. Մարդահամարի մարզային տվյալների հիման վրա: Աշխատանքային ռեսուրսների կազմում տղամարդկանց բարձր տեսակարար կշիռով, ինչպես և սպասվում էր, կրկին աչքի է ընկնում գյուղական բնակչությունը:

*Համախառն տարածաշրջանային արդյունքը* (ՀՏԱ) համախառն ավելացված արժեքը չափող ցուցանիշն է, այսինքն՝ տարածաշրջանի տնտեսական տարածքում բոլոր ինստիտուցիոնալ միավորների կողմից ստեղծված նոր արժեքի հանրագումարը՝ առանց ապրանքների և ներմուծման գույտ հարկերի: Մեկ շնչի հաշվով ՀՏԱ-ի 2012թ. արժեքների դիտարկումից պարզ է դառնում, որ, որպես կանոն, ՀՀ մարզերի քաղաքային բնակավայրերի տվյալ ցուցանիշի մակարդակը բարձր է գյուղականի մակարդակից, բացառությամբ Արմավիրի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի: Ընդ որում, քաղաքային բնակավայրերի մեկ շնչին ընկնող ավելացված արժեքի գերազանցումը գյուղականին առավել ակնառու է Կոտայքի (44.6%-ով) և Սյունիքի (41.3%) մարզերում:

Աղյուսակ 1-ի վերջին ցուցանիշը մեկ շնչի հաշվով ներմուծման ծավալն է՝ արտահայտված ազգային դրամական միավորով: Կլաստերային վերլուծությունում ներմուծման ցուցանիշի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այն մոդելում ընտրված այլ փոփոխականների հետ ավելի սերտ է կոռելացվում, քան մեկ շնչի հաշվով արտահանման կամ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշները:

**Աղյուսակ 1. ՀՀ մարզերի 2012թ. սոցիալ-տնտեսական զարգացման որոշ փոփոխականներ**

| Մարզ           | Բնակավայրի տիպը | Միջա-<br>ցին<br>գործակից,<br>պրոմիլ | Զբաղվ-<br>գործա-<br>կից,<br>տոկոս | Գործ-<br>գործակից,<br>տոկոս | Տղամ.<br>կշիռը աշխ.<br>ռես-րուս<br>տոկոս | Բարձր. կրթ.<br>անձանց<br>կշիռը,<br>տոկոս | Արդատ.<br>գործա-<br>կից,<br>տոկոս | ՀՏԱ մեկ<br>շնչի հաշվով,<br>հազ. դրամ | Ներմու-<br>ծում մեկ շնչի<br>հաշվով, հազ.<br>դրամ |
|----------------|-----------------|-------------------------------------|-----------------------------------|-----------------------------|------------------------------------------|------------------------------------------|-----------------------------------|--------------------------------------|--------------------------------------------------|
| 1. Նրևան       | Քաղաք           | -77.3                               | 44.9                              | 25.8                        | 44.8                                     | 37.1                                     | 25.6                              | 1838                                 | 1266                                             |
| 2. Արագածոտն   | Քաղաք           | -112.4                              | 60.3                              | 11.0                        | 48.0                                     | 21.8                                     | 24.6                              | 830                                  | 200                                              |
| 3. Արագածոտն   | Գյուղ           | -80.0                               | 80.1                              | 2.1                         | 49.3                                     | 10.6                                     | 20.2                              | 790                                  | 145                                              |
| 4. Արարատ      | Քաղաք           | -133.9                              | 48.0                              | 14.7                        | 46.1                                     | 15.5                                     | 42.1                              | 930                                  | 154                                              |
| 5. Արարատ      | Գյուղ           | -71.5                               | 74.1                              | 2.7                         | 48.4                                     | 11.2                                     | 31.6                              | 750                                  | 94                                               |
| 6. Արմավիր     | Քաղաք           | -181.2                              | 39.9                              | 16.8                        | 45.7                                     | 19.8                                     | 37.7                              | 625                                  | 125                                              |
| 7. Արմավիր     | Գյուղ           | -36.4                               | 80.1                              | 3.6                         | 48.5                                     | 9.6                                      | 32.7                              | 768                                  | 154                                              |
| 8. Գեղարքունիք | Քաղաք           | -134.6                              | 37.2                              | 25.2                        | 47.9                                     | 17.0                                     | 39.4                              | 604                                  | 112                                              |
| 9. Գեղարքունիք | Գյուղ           | -28.8                               | 61.2                              | 4.9                         | 50.2                                     | 8.3                                      | 33.8                              | 754                                  | 138                                              |
| 10. Լոռի       | Քաղաք           | -209.4                              | 37.0                              | 31.9                        | 44.9                                     | 21.0                                     | 40.3                              | 634                                  | 170                                              |
| 11. Լոռի       | Գյուղ           | -176.7                              | 67.8                              | 5.4                         | 47.8                                     | 8.3                                      | 36.4                              | 521                                  | 102                                              |
| 12. Կոտայք     | Քաղաք           | -168.2                              | 35.5                              | 26.1                        | 46.5                                     | 18.6                                     | 45.2                              | 940                                  | 340                                              |
| 13. Կոտայք     | Գյուղ           | -59.1                               | 54.9                              | 14.8                        | 48.7                                     | 13.2                                     | 39.3                              | 650                                  | 175                                              |
| 14. Շիրակ      | Քաղաք           | -174.1                              | 28.6                              | 36.3                        | 45.6                                     | 22.9                                     | 48.3                              | 580                                  | 105                                              |
| 15. Շիրակ      | Գյուղ           | -89.9                               | 63.4                              | 6.3                         | 49.0                                     | 11.0                                     | 42.8                              | 605                                  | 88                                               |
| 16. Սյունիք    | Քաղաք           | -99.1                               | 57.4                              | 19.4                        | 48.3                                     | 19.3                                     | 26.5                              | 1540                                 | 340                                              |
| 17. Շիրակ      | Գյուղ           | -100.8                              | 69.4                              | 4.1                         | 49.3                                     | 9.7                                      | 23.7                              | 1090                                 | 119                                              |
| 18. Վայոց ձոր  | Քաղաք           | -104.7                              | 56.7                              | 18.6                        | 46.9                                     | 20.8                                     | 24.0                              | 673                                  | 40                                               |
| 19. Վայոց ձոր  | Գյուղ           | -99.9                               | 73.1                              | 2.6                         | 48.8                                     | 9.6                                      | 18.9                              | 616                                  | 15                                               |
| 20. Տավուշ     | Քաղաք           | -6.6                                | 52.0                              | 20.7                        | 46.2                                     | 17.7                                     | 30.4                              | 620                                  | 45                                               |
| 21. Տավուշ     | Գյուղ           | -102.2                              | 70.7                              | 6.3                         | 48.1                                     | 9.8                                      | 25.4                              | 501                                  | 31                                               |
| Հնդաններ       | Քաղաք           | -112.6                              | 42.5                              | 25.5                        | 45.5                                     | 29.4                                     | 32.5                              | 1240                                 | 630                                              |
|                | Գյուղ           | -76.3                               | 69.4                              | 5.3                         | 48.8                                     | 10.2                                     | 32.1                              | 920                                  | 363                                              |




**Գծապատկեր 1.** ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման դենդոգրամ:

Այժմ քննարկենք աղյուսակ 1-ի տվյալների հիման վրա SPSS ծրագրային փաթեթի միջոցով կլաստերային վերլուծության ստացված արդյունքները: Գծապատկեր 1-ում ցուցադրվում է ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի, ըստ սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանի, առանձին կլաստերներում ընդգրկվելու դենդոգրաման: Գծապատկերի վերին մասում բերված մեծություններն արտահայտում են ոչ թե փոխկապվածության գործակիցները, այլ 0-ից 25-ը բերված սանդղակի արժեքները:

Դենդոգրաման ցուցադրում է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման վառ արտահայտված անհամաչափությունը:

Նախ, ՀՀ մարզերը ստորաբաժանված են ըստ երկու կլաստերի՝ ք. Երևան և մնացած մարզեր, ընդ որում երկու և երեք կլաստերների ձևավորման միջև հեռավորությունը շատ մեծ է՝ վերոնշյալ սանդղակի 7.5-ից մինչև 25-ը: Երեք կլաստերի դեպքում ՀՀ մարզերը բաժանված են 2 կլաստերի. թիվ 3-ում ընդգրկված են 6 մարզերի քաղաքային բնակավայրեր, իսկ թիվ 2-ում՝ 14 բնակավայրերի տիպեր՝ 4 քաղաքային և 10 գյուղական:



**Գծապատկեր 2.** ՀՀ մարզերի սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական գործոնների ցրվածության դիագրամ

Թիվ 3 կլաստերում ընդգրկված քաղաքային բնակավայրերը աննախանձելի վիճակում են հայտնվել նախնառաջ շնորհիվ սոցիալ-ժողովրդագրական գործոնի: Ասվածը հատկապես վերաբերում է Լոռու (10) և Շիրակի (14) մարզերի քաղաքային բնակավայրերին, որոնք, ըստ երևույթին, ամբողջապես դեռ չեն ապաքինվել 1988թ. երկրաշարժի հասցրած բարոյա-հոգեբանական և սոցիալ-տնտեսական վնասներից: Ասվածն առավել ակնառու է ցուցադրում գծապատկեր 1-ը: Ավելացնենք, որ թիվ 3 կլաստերում բացի նշվածներից, մտնում են նաև Արմավիրի (6), Գեղարքունիքի (8), Արարատի (4) և Կոտայքի (12) մարզերի քաղաքային բնակավայրերը, ընդ որում տնտեսական գործոնի արժեքով հանրա-

պետական միջինից բարձր արժեք է արձանագրել միայն Կոտայքի մարզը:

Ըստ երկու գործոնով հանրապետական միջինին մոտ են Վայոց ձորի (18), Տավուշի (20) և Արագածոտնի (2) մարզերի քաղաքային բնակավայրերը, որոնց տնտեսական գործոնի արժեքով մի փոքր զիջում են Կոտայքի (13), Լոռու (11) և Շիրակի (15) մարզերի գյուղական բնակավայրերը (տե՛ս գծապատկեր 2-ը):

### **Ամփոփում**

Հոդվածում կլաստերային վերլուծության մեթոդով ուսումնասիրվել է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունը 2012թ. համար: SPSS համակարգչային փաթեթի կիրառմամբ ՀՀ տարածաշրջանների գյուղական և քաղաքային բնակավայրերը, սոցիալ-տնտեսական ուր փոփոխականների հիման վրա, ստորաբաժանվել են առանձին կլաստերների, որոնց մասնագիտական զննումը կհանգեցնի արժեքավոր եզրահանգումների:

**Аветисян М. С.**

АГЭУ, ассистент кафедры «Статистика»,  
кандидат экономических наук

## **КЛАСТЕРНЫЙ АНАЛИЗ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕГИОНОВ РА**

**Ключевые слова:** кластерный анализ, социально-демографический, экономический, валовой региональный продукт, дендограмма, уровень бедности, коэффициент безработицы, механический прирост.

В статье с использованием кластерного анализа изучается неравномерность социально-экономического развития регионов РА. С помощью прикладной статистической программы SPSS, на основе восьми социально-экономических переменных, сельские и городские поселения регионов РА были разделены на отдельные кластеры, профессиональное рассмотрение которых приведет к ценным выводам.

**Avetisyan Marieta**  
ASUE, Chair of Statistics, Candidate of Economics,  
Assistant Professor

## **CLUSTER ANALYSIS OF SOCIAL AND ECONOMIC DEVELOPMENT OF REGIONS OF RA**

**Key words:** cluster analysis, social and demographic, economic, gross regional product, dendogramm, poverty level, unemployment coefficient, mechanical gain.

In this article with use of the cluster analysis unevenness of social and economic development of regions of RA is studied. By means of the applied statistical SPSS program, on the basis of eight social and economic variables, rural and city settlements of regions of RA were divided into the separate clusters which professional consideration will give valuable conclusions.

**Պողոսյան Մ.Ռ.**  
Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական համալսարանի դասախոս  
maga.am@mail.ru

### **ՄՈՐՏՍՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԱՅԱՆ ԿԱՌԵՍԱԼԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր.** բյուջետային ֆինանսավորում, սպորտային ծառայություններ, մարդկային կապիտալի վերարտադրություն, կորելիացիա:

Ֆիզիկական դաստիարակության և սպորտային ծառայությունների ազդեցության գնահատումը տնտեսական աճի վրա ներկայումս արդիական է համարվում մի շարք առումներով: Ավանդաբար սպորտի զարգացումը մասնագետների շրջանում առավելապես դիտարկվել է սոցիալական և առողջապահական խնդիրների տեսանկյունից, հետին պլան թողնելով սպորտի տնտեսական հետևանքների գնահատումը: Սակայն, սպորտային ինդուստրիայի բուռն զարգացումը, այս բնագավառում խոշոր ներդրումները ներկայումս խնդիր են դնում գնահատելու նաև

ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների տնտեսական հետևանքները համակարգված գնահատումների ոլորտում:

ՀՀ պաշտոնական վիճակագրությունը պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում սպորտի ոլորտի գործունեության վերաբերյալ: Ըստ սպորտային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, 2013թ. հանրապետությունում գործել է 169 սպորտային կազմակերպություն: Երևան քաղաքում գործող սպորտային կազմակերպություններից 12-ը գտնվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, 2-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, 25-ը՝ Երևանի քաղաքապետարանի, 8-ը՝ վարչական շրջանների, 6-ը՝ «Հայաստան» մարզական միության և 2-ը՝ «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպության ենթակայության տակ:<sup>19</sup>

Սակայն, դրան զուգահեռ, հանրային ոլորտում ֆիզիկական կուլտուրային և սպորտին առնչվող տնտեսական տեղեկատվությունը հրապարակվող հաշվետվություններում բացակայում է: Նույն իրավիճակն է արձանագրվում մասնավոր ֆինանսներով կազմակերպվող սպորտային ծառայությունների տնտեսական հետևանքների հրապարակման ոլորտում: Հանդես գալով որպես մասնավոր գործարարության սուբյեկտներ, պրոֆեսիոնալ սպորտի կառույցները մակերեսային տեղեկատվություն են ներկայացնում իրենց գործունեության տնտեսական հետևանքների վերաբերյալ, համարելով այն առևտրային գաղտնիք:<sup>20</sup> Նման պայմաններում դժվարություններ են ստեղծվում ֆիզկուլտ-սպորտային գործունեության տնտեսական արդյունքների գնահատման ոլորտում, այդ թվում, նաև ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների ծավալների և մարդկային կապիտալի կուտակման փոխառնչության միջև միկրո և մակրոտնտեսական միջավայրում:

Հաշվի առնելով սպորտային ինդուստրիայի զարգացման բարձր տեմպերը, մասնագիտական գրականությունում փորձ է

---

<sup>19</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվ. հունվար-հունիսին, Էջ 220,

<sup>20</sup> Johnson, B. K., Groothuis, P. A., & Whitehead, J. C. (2001). The Value of Public Goods Generated by a Major League Sports Team: The CVM Approach. *Journal of Sports Economics* 2001, 2(1), 6 – 21.

արվում գնահատելու տարածքային լոկալ շրջանակում սպորտային ծառայությունների մատուցման սոցիալ-տնտեսական հետևանքները: Մասնավրապես, տնտեսական վերլուծություններ են իրականացվում քաղաքներում և մարզերում մարզադաշտերի կառուցման, զանգվածային սպորտային միջոցառումների հետևանքով հյուրանոցային բիզնեսի զարգացման, հասարակական սննդի սպասարկումների արժեքային աճի վերաբերյալ, սակայն դրանցում չեն ընդգրկվում ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների և մարդկային կապիտալի փոփոխությունների փոխառնչության գնահատականներ:<sup>21</sup>

Կատարվում են նաև խոշորամասշտաբ սպորտային միջոցառումների արդյունքների և տարբեր երկրների տնտեսական զարգացվածության փոխկապակցվածության ոլորտում մասնագիտական հետազոտություններ, որոնց արդյունքները վկայում են, որ գոյություն ունեն բավականին սերտ կապեր կոնկրետ երկրի վաստակած օլիմպիական մեդալների և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի միջև:<sup>22</sup> Որպես կանոն, օլիմպիական մեդալներ են վաստակում առավելապես զարգացած տնտեսությամբ երկրները, որտեղ մեծ ուշադրություն է դարձվում ֆիզիկական դաստիարակության արմատավորմանը և սպորտի զարգացմանը: Սակայն, ինչպես նշվում է մասնագիտական գրականությունում, դրան զուգահեռ, անհրաժեշտություն է առաջանում տնտեսական գնահատականներ տալու ոչ միայն սպորտի զարգացման արդյունքներին, այլև՝ դրանցից բխող երկրում կուտակված մարդկային կապիտալի որակական փոփոխություններին:

---

<sup>21</sup> Sharienne W, Michael Enz, //The impact of professional sports on the local economy, Issues in Community Economic Development Symposium held at Western New England College School of Law, on March 24, 2006. pp. 46-58

Lavoie, M. and Rodríguez, G. (2005) "The Economic Impact of Professional Teams on Monthly Hotel Occupancy Rates of Canadian Cities: A Box-Jenkins Approach," *Journal of Sports Economics*, Vol. 6, No. 3: pp. 314-324.

<sup>22</sup> Baade, R., Baumann, R. and Matheson, V. "Selling the Game: Estimating the Economic Impact of Professional Sports through Taxable Sales," *Southern Economic Journal*, (2008) Vol. Vol. 74, No. 3: pp. 794-810.



# Աղյուսակ 1

ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան 2008-2013 թթ<sup>23</sup>

| Ցուցանիշներ                                                                     |     | 2008   | 2009   | 2010   | 2011   | 2012    | 2013    |
|---------------------------------------------------------------------------------|-----|--------|--------|--------|--------|---------|---------|
| Սպորտային խմբերի քանակը մեկ մարզիչ-մանկավարժի հաշվով                            | X1  | 2,1    | 2      | 2      | 1,9    | 1,7     | 1,9     |
| Մարզիկների թվաքանակը մեկ խմբի հաշվով                                            | X2  | 11,3   | 11,1   | 11,4   | 11,5   | 12,3    | 11,8    |
| Մարզիկների թվաքանակը մեկ մարզիչ-մանկավարժի հաշվով                               | X3  | 23,6   | 21,9   | 22,4   | 22     | 21,4    | 22      |
| Մարզիկների թվաքանակը                                                            | X4  | 40 382 | 40 902 | 40 299 | 39 676 | 44 764  | 42 897  |
| Մարզիչ-մանկավարժների թվաքանակը                                                  | X5  | 1 711  | 1 865  | 1 799  | 1 803  | 2 089   | 1952    |
| Սպորտային խմբերի քանակը                                                         | X6  | 3 568  | 3 687  | 3 549  | 3 451  | 3 631   | 46897,7 |
| ՀՀ պետբյուջեի կազմում հանգստի և սպորտի ծախսերը 100 000 դրամ                     | X7  | 1163   | 1558   | 1364   | 1429   | 1443    | 1560    |
| ՀՆԱ մեկ դրամ                                                                    | X8  | 3 568  | 3 141  | 3 460  | 3 777  | 3 997,6 | 4266,2  |
| Հանրակրթական դպրոցներում սովորողների թվաքանակը 1000 մարդ                        | X9  | 414,8  | 392,9  | 370,9  | 386,4  | 368,7   | 391,2   |
| ՄՌԻՀ-երում սովորողների քանակը 1000 մարդ                                         | X10 | 30     | 29     | 29,6   | 29,2   | 29,3    | 29,5    |
| ԲՌԻՀ-երում սովորող ուսանողներ 1000 մարդ                                         | X11 | 90     | 77     | 74     | 68     | 65      | 63,0    |
| Առաջին անգամ բացահայտված հիվանդությունների քանակը 1000                          | X12 | 799,7  | 897,9  | 911,1  | 904,0  | 904,4   | 902,1   |
| Ակտիվիզմով և թմրամոլության հիվանդացությունը 100 000 բնակչի հաշվով               | X13 | 21     | 18,3   | 18,9   | 15,5   | 34,6    | 35,2    |
| Բնակչության ապահովվածությունը հիվանդանոցային մահճակալներով 10 000 բնակչի հաշվով | X14 | 38,1   | 37,1   | 37,3   | 37,4   | 40,4    | 41,2    |
| Հետազոտության ենթարկված երեխաների թվաքանակը 0-14 տարեկան                        | X15 | 577,5  | 575,8  | 574,1  | 571,4  | 574,9   | 576,8   |
| Աշխատանք ունեցող բնակչության թվաքանակը 1000 մարդ                                | X16 | 1183,1 | 1152,8 | 1185,2 | 1175,1 | 1172,8  | 1171,3  |
| Գործազրկության մակարդակ %                                                       | X17 | 16,4   | 18,7   | 19     | 18,4   | 18,3    | 18,9    |

<sup>23</sup> ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք, //www. armsta.am

Այս առումով, մեր կողմից փորձ է արվել ՀՀ-ում իրակա-  
նացվող ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների և մարդկային  
կապիտալի աճի փոխկապակցվածության քանակական գնահա-  
տականներ տալ: Ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների և  
մարդկային կապիտալի որակական փոփոխությունների փոխկապ-  
վածության գնահատման համար կորելյացիոն կապերի բացա-  
հայտումը և ստացված արդյունքներով որակական վերլուծություն-  
ները իրականացվել է գծապատկեր աղյուսակ 1-ի տվյալներով:

Ստոխաստիկ կապերի սերտության գնահատման դեպքում  
համընդհանուր կիրառության մեջ է դրվում կորելյացիայի գոր-  
ծակիցը ( $r$ ), որը գտնվելով -1ից մինչև +1 միջակայքում, ցույց է  
տալիս վերլուծվող ցուցանիշների փոփոխման փոխառնչության  
աստիճանը.

$$r = \frac{n \sum YX - \sum Y \cdot \sum X}{\sqrt{[n \sum Y^2 - (\sum Y)^2] [n \sum X^2 - (\sum X)^2]}}$$

Օգտվելով աղյուսակ 1-ի տվյալներից, մեր կողմից հաշվար-  
կվել են ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների զարգացման և  
մարդկային կապիտալի որակական ցուցանիշների փոփոխման  
միջև կապի սերտության գործակիցներ, որոնք ներկայացված են  
հավասարակողմ մատրիցայում (տես աղյուսակ 2): Ընդ որում,  
փոխկապակցվածությունները գնահատվել են համակողմանի,  
հաշվի առնելով վերլուծությունում ընդգրկված բոլոր ցուցանիշ-  
ների փոխառնչությունները, որակական գնահատականներում  
մեղմվելու համար ավտոկորելյացիայի ազդեցությունը:

Կատարված ուսումնասիրության նպատակադրման առու-  
մով, ներկայացվող մատրիցայում ուսումնասիրման շրջանակ չեն  
ընդգրկվել ( $X6 : Y6$ ) և ( $X7 : Y17$ ) դաշտերը և հաշվի են առնվել  
հիմնականում ( $X7 : Y6: X17$ ) դաշտում ընդգրկված կապի սերտու-  
թյան ցուցանիշները: Ընդ որում, կապի սերտությունը դիտարկվել է  
կորելյացիայի գործակցի 0.65 տոկոսից առավել զույգային փո-  
խառնչությունում ( $r > /0,65/$ ):

Աղյուսակ 2-ում ընդգծվել են 0.65 գործակիցը գերազանցող  
ուղիղ և հակադարձ փոխառնչությունները: Այսպես, ՀՀ պետբյու-  
ջեյի կազմում հանգստի և սպորտի ծախսերը ( $X7$ ) սերտ առնչու-  
թյան մեջ են գտնվում մեկ մարզիչ-մանկավարժի հաշվով սպոր-

տային մարզիկների թվաքանակի (Y3) հետ: Բացի այդ, ՀՀ պետ-  
բյուջեի կազմում հանգստի և սպորտի ծախսերի (X7) փոփոխու-  
թյունը փոխկապակցված է նաև մարզիչ-մանկավարժների թվա-  
քանակի (Y5) փոփոխությունների հետ:

#### Աղյուսակ 2<sup>24</sup>

Զույգային կորելյացիայի գործակիցների մատրիցա

|     | Y1     | Y2     | Y3     | Y4     | Y5     | Y6     |
|-----|--------|--------|--------|--------|--------|--------|
| X7  | -0,483 | 0,444  | -0,743 | 0,498  | 0,671  | 0,569  |
| X8  | -0,625 | 0,682  | -0,428 | 0,643  | 0,586  | 0,038  |
| X9  | -0,302 | -0,843 | 0,673  | -0,512 | 0,674  | -0,163 |
| X10 | -0,149 | 0,167  | -0,194 | -0,001 | 0,132  | -0,065 |
| X11 | 0,747  | 0,669  | 0,798  | -0,632 | -0,779 | -0,268 |
| X12 | -0,550 | 0,669  | -0,696 | 0,433  | 0,627  | 0,307  |
| X13 | -0,631 | 0,639  | -0,521 | 0,925  | 0,818  | 0,550  |
| X14 | -0,631 | -0,364 | -0,484 | 0,769  | 0,684  | 0,298  |
| X15 | 0,393  | -0,364 | 0,423  | 0,236  | -0,041 | 0,628  |
| X16 | -0,082 | 0,484  | 0,225  | 0,181  | 0,034  | -0,243 |
| X17 | 0,057  | -0,015 | -0,250 | -0,106 | 0,098  | 0,247  |

Հանրակրթական դպրոցներում սովորողների թվաքանակի (X9) փոփոխությունը էականորեն ազդում է մեկ մարզիչ-մանկա-  
վարժի հաշվով սպորտային մարզիկների թվաքանակի աճի վրա  
(Y3): Սերտ փոխառնչություն է արձանագրվում նաև հանրա-  
կրթական դպրոցներում սովորողների թվաքանակի (X9) և մարզիչ-  
մանկավարժների թվաքանակի միջև (Y5):

Առանձնապես զգալի փոխառնչություն է արձանագրվում  
ԲՈՒՀ-ներում սովորող ուսանողների թվաքանակի (X11) և մեկ մար-  
զիչ-մանկավարժի հաշվով սպորտային մարզիկների թվաքանակի  
(Y3) փոփոխությունների միջև: Սակայն, հակադարձ կապով են  
դրսևորվում ուսանողների թվաքանակի և մարզիչ-մանկա-  
վարժների թվաքանակի (Y5) փոփոխությունները:

Առաջին անգամ բացահայտված հիվանդությունների քանակը  
(X12) հակադարձ կապի մեջ է գտնվում մեկ մարզիչ-մանկավարժի  
հաշվով սպորտային մարզիկների թվաքանակի հետ (Y3), որը ևս

<sup>24</sup> Կազմված է աղյուսակ 1-ի տվյալներով:

մեկ անգամ փաստում է ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների ընդլայնման կարևորությունը՝ կուտակված մարդկային կապիտալի որակական կազմի դրական փոփոխությունների վրա:

Այսպիսով, վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ՀՀ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմամբ՝ մարդկային կապիտալի որակական բաղադրիչները բնութագրող ցուցանիշների փոփոխման դինամիկայում լուրջ տեղաշարժեր չեն կատարվում: Առանձնակի փոխառնչություն չի նկատվում ցուցանիշների այնպիսի խմբերի միջև, ինչպիսիք են, մի կողմից, ալկոհոլիզմով և թմրամոլությամբ հիվանդացությունների, պարբերաբար հետազոտության ենթարկված երեխաների թվաքանակի, գործազրկության մակարդակի, աշխատանքային ակտիվության, և մյուս կողմից, սպորտային խմբերի, մարզիչների թվաքանակի, զանգվածային սպորտային ծառայությունների բաշխվածության փոփոխությունները: Դրան զուգահեռ, էական փոխկապվածություն է նկատվում մի կողմից ՀՆԱ-ի աճի, ՀՀ պետբյուջեյի միջոցներով սպորտային ոլորտի ֆինանսավորման, և մյուս կողմից, մարզիկների, մարզիչ մանկավարժերի թվաքանակի, սպորտային խմբերի քանակի փոփոխությունների միջև:

### **Ամփոփում**

Քանակական չափումները վկայում են, որ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը ՀՀ-ում հիմնականում ծառայում է սպորտային միջավայրին, և դեռևս իր զգալի դերակատարում չունի կուտակված մարդկային կապիտալի որակական հատկանիշների բարելավման ոլորտում: Հոդվածում ներկայացվում են ՀՀ-ում սպորտային ծառայությունների մատուցման ճանապարհով մարդկային կապիտալի վերարտադրության արդյունավետության բարելավման առաջարկություններ:

Погосян М.Р.  
преподаватель  
Армянского государственного института физической культуры

## ПРОБЛЕМЫ КОЛИЧЕСТВЕННОГО ИЗМЕРЕНИЯ ВЗАИМОСВЯЗЕЙ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА И СПОРТИВНЫХ УСЛУГ

### Резюме

**Ключевые слова:** бюджетное финансирование, физкультурно-спортивные услуги, воспроизводство человеческого капитала, корреляция.

Количественные измерения показывают, что развитие физической культуры и спорта в основном служит спортивной среде и все еще не имеет значительной роли в повышении качества накопления человеческого капитала в РА. В статье представлены рекомендации по повышению эффективности воспроизводства человеческого капитала путем совершенствования качества физкультурно-спортивных услуг.

Pogosyan M.R.  
Professor assistant  
Armenian State institute of Physical Culture

### Quantity Mesurment Issues of Human Capital and Sports Providing Service Interrilations

**Keywords:** government funding, physical culture and sports services, reproduction of human capital, correlation scope.

Quantitative measurements show that the development of physical culture and sports mainly serves to sports environment and still does not have a significant role in improving the quality of human capital accumulation in RA. This article presents recommendations for improving the reproduction of human capital by improving the quality of services of physical culture and sport.

**Բոյաջյան Կ.Մ.**  
Հյուսիսային համալսարանի դասախոս տ.գ.թ. դոցենտ  
karen\_b74@mail.ru  
**Կլեկյան Լ. Ռ.**  
Երևանի Պետական Համալսարանի ասպիրանտ  
levrub@inbox.ru

**ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ  
ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԶՈՐՄ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

***Բանալի բաներ.*** մասնավոր կապիտալ ներդրումներ, բարձր  
տեխնոլոգիաներ, ներդրումների հիմնական ռազմավարություններ

Յուրաքանչյուր տարի աշխարհում նախաձեռնում են ավելի  
ու ավելի մեծ նախագծեր, որոնք արժենում են միլիոնավոր, իսկ  
հաճախ նաև միլիարդավոր ԱՄՆ դոլարներ. մեզանախագծեր,  
որոնք փոխում են շրջակա միջավայրը և տնտեսությունները: Ընդ-  
հանուր հատկանիշը, որը միավորում է այս նախագծերը, հայտնի  
սոցիոլոգ Բաումանի խոսքերով «մարդկության ձգտումն է անկա-  
խանալ տարածությունից և ժամանակից»<sup>25</sup>: Վերոնշյալ նախագծերի  
շարքին են դասվում Լա-Մանշի թունելը, Վասկո դա Գամա  
կամուրջը Պորտուգալիայում, Սան-Պաուլոյի և Բուենոս-Այրեսի  
միջև ձգվող հսկա ավտոճանապարհը, Գերմանական արագընթաց  
գնացքը (MAGLEV) և այլն: Անընդհատ փոխվող աշխարհում  
մեզանախագծերը ոչ միայն դառնում են առօրյա կյանքի  
անբաժանելի մասը, այլ նաև տնտեսության զարգացման խթանը:

Զարգացող երկրներում, հատկապես հետխորհրդային այն  
երկրներում, որտեղ չկան բավականաչափ հումքային ռեսուրսներ,  
տնտեսության զարգացման համար լավագույն միջոցը այս  
նախագծերի և դրանցով պայմանավորված հսկայական ներդրում-  
ների ներհոսքն է: Սակայն այս նախագծերի համար առաջնայինը  
հարկավոր է ապահովել բարձր տեխնոլոգիաների մուտքը հայրե-  
նական շուկա, որպեսզի ինչ-որ չափ մեծանա ներդրողների հետա-  
քրքրությունը տնտեսությունում ներդրումներ կատարելու համար:

---

<sup>25</sup> Liquid modernity, Zygmunt Bauman: Cambridge, UK, 2006

Համաձայն ԵՄ վիճակագրական գրասենյակի (EUROSTAT), վերոնշյալ նպատակի համար բարձր տեխնոլոգիաների ոլորտում Եվրոպայում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները.

➤ 2007 թվականից սկսած բարձր տեխնոլոգիաների ոլորտում ներդրվել է 233 միլիարդ եվրո<sup>26</sup>:

➤ Տարեկան մոտ 5000 բարձր տեխնոլոգիաների ոլորտում աշխատող ընկերություններ ստացել են ֆինանսավորում, որոնցից 83%-ը փոքր և միջին ընկերություններ են: Վիճակագրության համաձայն ներդրողները նախընտրում են ստարտափները, որոնք ավելի ռիսկային են, սակայն հաջողության դեպքում ապահովում են ավելի մեծ շահույթ:

➤ Ներդրումներ կատարվել են միջինը 5 տարի ժամկետով:

➤ Մեծ ընկերություններում գուտ շահույթի միջինը 7 տոկոսը վերաներդրվում է սեփական ընկերությունում բարձր տեխնոլոգիաներ զարգացնելու մեջ:

Վերոնշյալից հետևում է, որ ժամանակակից աշխարհում առանց բարձր տեխնոլոգիաների հնարավոր չէ հասնել հաջողության ոչ միկրո, ոչ մակրո ոլորտում: Հետևաբար հարց է առաջանում, թե ինչպես է հարկավոր ներդրումներ կատարել, և որոնք են «խաղի կանոնները»: Այս հարցին պատասխանելու համար հարկավոր ենք համարում ուսումնասիրել հիմնական ներդրումային ռազմավարությունները, որոնք արևմտյան և եվրոպական ներդրողներն օգտագործում են բարձր տեխնոլոգիաներում ներդրում կատարելու համար:

Եվ այսպես, բարձր տեխնոլոգիաների ոլորտում առանձնացվում են չորս հիմնական ռազմավարություններ, որոնք գործնականում օգտագործում են ներդրումային շուկայի գրեթե բոլոր մասնակիցները:

**1. Ֆինանսավորված հետգնում** - Մասնավոր կապիտալ ներդրումների ռազմավարության տեսակ է, որի ժամանակ ներդրողները գնում են ընկերության բաժնետոմսերի կառավարող փաթեթը՝ ի հաշիվ փոխառու միջոցների: Այս դեպքում փոխառու կապիտալը ընդհանուր կապիտալի 60-90%-ն է կազմում<sup>27</sup>:

<sup>26</sup> Եվրոպական միության վիճագրական գրասենյակի պաշտոնական համացանցային էջ <http://epp.eurostat.ec.europa.eu/portal/page/portal/statistics/>

<sup>27</sup> International Private equity and venture capital Valuation guidelines, December 2012

Ֆինանսավորված հետգնումը արդարացված է համարվում, եթե ROA (ակտիվների շահութաբերություն) ավելի մեծ է լինում, քան պարտքի դիմաց գանձվող տոկոսավճարները:

Նմանատիպ ռազմանավորություններն օգտագործվում են ոչ բոլոր ընկերությունների համար: Ռազմավարության օբյեկտը պետք է բավարարի հետևյալ չաջանիշներին.

➤ Կայուն ֆինանսական հոսքեր կամ կայուն EBITA (շահույթ մինչև տոկոսավճարներ, հարկեր և ամորտիզացիա)

➤ Ընթացիկ ժամանակահատվածում ցածր ֆինանսական լծակ

➤ Կապիտալ ծախսերի կանխատեսելի մակարդակ

Մյուս կողմից ցանկալի է օգտագործել ֆինանսավորման հետևյալ 4 աղբյուրները.

i. Բանկային ապահովված վարկ. Այս տեսակը ունի նվազագույն տոկոսադրույք և ավելի նպատակահարմար է օգտագործել այս ռազմավարության համար

ii. Բանկային չապահովված վարկ կամ սուբորդինացված վարկ

iii. Արտոնյալ բաժնետոմսեր

iv. Բաժնետերերի սեփական միջոցներ

Այս ռազմավարության նպատակն է 3-5 տարի անց վաճառել ընկերությունը՝ մի քանի անգամ ավելի բարձր գնով:

**2. Վենչուրային կապիտալ** – Ներդրումների տեսակ է, որի դեպքում ներդրում է կատարվում դեռ չգրանցված կամ նոր ստեղծված փոքր ընկերություններում՝ հիմնականում գնելով բաժնետոմսերի կառավարող փաթեթը: Հաճախ այս ընկերություններն ունենում են աճի մեծ պոտենցիալ, սակայն այդ պոտենցիալը ուղեկցվում է բարձր ռիսկով և ոչ կայուն հասույթով: Այս ռազմավարության համար նախընտրելի են այնպիսի ընկերություններ, որոնք ունեն նոր բիզնես մոդել կամ նոր տեխնոլոգիաներ՝ ուղղված հիմնականում դեպի IT ոլորտ:

Էժան ձեռքբերման գին և հաջողության դեպքում բարձր հասույթ. Այս երկու հատկանիշներով կարելի է բնորոշել այն նախագծերը, որոնցում ներդրում կատարելու համար ընտրում են վենչուրային ռազմավարությունը:



Ներքոնշյալ նախապայմանները պարտադիր են այս ռազմավարության համար.

➤ Հստակ ձևակերպված բիզնես պլան

➤ Լավ մենեջմենթ

➤ Ելքի լավ ռազմավարություն (3-7 տարվա համար)<sup>28</sup>

➤ Ֆինանսական հաշվարկների արդյունքում նվազագույն զուտ շահույթը պետք է լինի տարեկան 40 տոկոս<sup>29</sup>

**3. Ձեռնարկատիրական ռազմավարություն** - Այս ռազմավարությունն օգտագործվում է համեմատաբար երկար կյանք ունեցող ընկերություններում ներդրումներ կատարելու համար: Ներդրման նպատակը այդ ընկերությունները նոր շուկաներ տանելը, իրենց գործունեությունը մեծացնելը կամ առկա լիցենզիաներով ավելի մեծ նախագծեր իրականացնելն է: Արևմտյան գրականությունում այս ռազմավարությունն ունի «Growth capital» անվանումը, սակայն քանի դեռ այն մուտք չի գործել հետխորհրդային երկրների ներդրումային շուկաներ, ռուսերեն կամ հայերեն ճշգրիտ թարգմանություն չկա: Այս պատճառով մենք ներմուծել ենք «ձեռնարկատիրական ռազմավարություն» տերմինը, որը, ըստ մեր ուսումնասիրությունների, լավագույնս բնորոշում է այս ռազմավարությունը:

Համեմատաբար երկարամյա կյանք ունեցող ընկերությունների սեփականատերերը նոր շուկա դուրս գալու կամ բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր արտադրանք թողարկելու հնարավորություն են տեսնում, սակայն չեն ցանկանում ռիսկերը միայնակ կրել: Այս պատճառով ներդրողները գնում են ընկերությունների կամ նախագծի մի մասը և ռիսկի հետ միասին կիսում են նաև ստացված հասույթը:

Այս ռազմավարությամբ ներդրումները հիմնականում օգնում են ընկերություններին օգտագործել իրենց պոտենցիալը:

**4. Հատուկ դեպքերի ռազմավարություն** - Տնտեսության ցանկացած ոլորտում գոյություն ունեն իրավիճակներ, որոնք չեն ենթարկվում ընդունված օրինաչափություններին և դուրս են վիճակագրական տվյալներից: Էկոնոմտրիկայում կառուցելով ցանկացած ֆունկցիա սովորաբար վերջում ավելացնում ենք սխալի գոր-

<sup>28</sup> International Private equity and venture capital Valuation guidelines, December 2012

<sup>29</sup> Рынок венчурных инвестиций: мировая тенденция: Москва, 2010

ծակից, ինչի իմաստներից մեկը նշված կախումից դուրս գտնվող դեպքերը չանտեսելն է:

Բարձր տեխնոլոգիաներում ներդրումների ռազմավարությունների մեջ նույնպես կա հատուկ ռազմավարություն, որը քննարկում է հատուկ դեպքեր, որոնք դուրս են վերը նշված 3 ռազմավարություններից:

Այս ռազմավարությունը կարող է օգտագործվել ինչպես հրատապ ֆինանսավորում պահանջող նախագծերի համար, որոնց մասին չկա բավականաչափ տեղեկություն, այնպես էլ սնանկության եզրին կանգնած ընկերությունների վերակազմավորման համար, ինչպես մակրո միջավայրի բարելավմանն ուղղված ենթակառուցվածքների ստեղծման, այնպես էլ սպեցիֆիկ ոլորտների զարգացմանն ուղղված ֆինանսավորման:

Ընդհանրացնելով տեղին ենք համարում նշել, որ այս ռազմավարությունը չունի հստակ ընդգծված կանոններ, քանզի չունի հստակ ընդգծված սահմաններ: Այդ պատճառով այստեղ ավելի շատ անհրաժեշտ են ներդրողների կուտակված գործնական գիտելիքները, քան տեսականը:

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

Հստակ ընդգծելով ներդրումների ներհոսքի կարևորությունը ՀՀ տնտեսություն, կարևոր ենք համարում ուշադրություն դարձնել բարձր տեխնոլոգիաների ոլորտում ներդրումային միջավայրի և ենթակառուցվածքների ստեղծմանը, քանզի ներդրումների հիմնական ուղղությունը գնալով ուղղվում է դեպի բարձր տեխնոլոգիաները և, համաձայն մեր և եվրոպացի տնտեսագետների կանխատեսումների, առաջիկայում օտարերկրյա ուղղակի ներդրումները դեպի բարձր տեխնոլոգիաներ մի քանի անգամ կաճեն, իսկ Հայաստանի Հանրապետությունն իր գիտական պոտենցիալով կարող է նախընտրելի օբյեկտ դառնալ այդ ներդրումների համար:

**Boyajyan K.M.**

Klekchyan L. R.

PhD student in Yerevan State University

## **FOUR MAIN STRATEGIES OF PRIVATE EQUITY INVESTMENTS IN THE SPHERE OF THE HIGH TECHNOLOGIES**

**Key words:** private equity, high technologies, main strategies of investments

Every year billions of dollars are being invested in the high-tech sector all over the world, as high tech gives good potential for growth both for individuals and for governments. This trend has brought big investments in high-tech sectors of the economy. Statistics records over EUR 233 billion received by high-tech startup enterprises in EU during the recent years. These projects are often viewed as too risky, but they offer high profits and good opportunity for development. Investors have their rules in this market and they use unique strategies for choosing the right project to invest.

**Бояджян К. М.**

К.э.н., доцент Северного университета,

**Клекчян Л. Р.**

Аспирант Ереванского Государственного Университета

## **ЧЕТЫРЕ ОСНОВНЫХ СТРАТЕГИИ ДЛЯ ЧАСТНЫХ ИНВЕСТИЦИЙ В СФЕРЕ ВЫСОКИХ ТЕХНОЛОГИЙ**

**Ключевые слова:** частный капитал, высокие технологии, основные стратегии для инвестиций

Каждый год миллиарды долларов инвестируются в высокотехнологичный сектор по всему миру, так как высокие технологии дают хороший потенциал для роста как для отдельных лиц, так и для правительств. Эта тенденция привела к большим инвестициям в сектор высоких технологий. Статистика показывает, что более 233 млрд. евро получили стартапы в сфере высоких технологий в ЕС в последнее время. Эти проекты часто рассматриваются как слишком рискованные, но они предлагают высокие прибыли и хорошую возможность для развития. Инвесторы имеют свои правила на этом рынке, и они используют уникальные стратегии для выбора правильного проекта для инвестирования.

**Ավետիսյան Ս.Ս.**

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր  
smvelser@gmail.com

**Ավետիսյան Ա.Ս.**

ՀԱԱՀ դասախոս, տ. գ. թ.  
controlchambler@gmail.com

**Հունանյան Լ. Ս.**

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հայցորդ  
hunanyan-85@mail.ru

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ  
ՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՃՅՈՒՂԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՄԵՐԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ**

**Բանալի բառեր.** գյուղատնտեսություն, վիճակագրություն, ռեգիստր, բյուջե, աջակցություն, արդյունավետություն, նախահաշիվ

Տնտեսության ճյուղերի վիճակագրության համակարգում առանձնակի բարդություն ունի գյուղատնտեսության վիճակագրությունը: Վերջինս պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով.

- հողի սեփականաշնորհման պայմաններում հողոգտագործող սյուբեկտերի թվաքանակը մեծ է և միասնական վիճակագրական հաշվառում չի իրականացվում,
- գյուղատնտեսության հիմնական արտադրության միջոցը հողն է, որի արտադրողականությունը կայուն չէ, կախված կլիմայական պայմանների փոփոխությունից,
- գյուղական բնակչության աղքատության նպաստների համակարգում էական դերակատարություն ունեն գյուղատնտեսական արտադրության ցուցանիշները, որը երբեմն պատճառ է դառնում վիճակագրական տվյալների խեղաթյուրման,
- գյուղատնտեսության պետական աջակցության կառուցակարգերում սուբսիդավորման չափը կախվածության մեջ է դրվում ոչ թե արդյունքային, այլ ծախսային և ծավալային ցուցանիշներից:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության վիճակագրության կատարելագործումը միջազգային առումով ևս կարևոր հիմնախնդիր է: Այդ նկատառումով, ՊԳԿ-ի

Գյուղատնտեսության կոմիտեի 23-րդ նստաշրջանը ընդունել է 2012թ. սկսյալ, 15 տարվա գործողությունների ծրագիր, որտեղ կարևորվում է նաև ազգային մակարդակով գյուղատնտեսության վարչական ռեգիստրի վարման անհրաժեշտությունը<sup>30</sup>:

Հայաստանի Հանրապետության տնտեսության ագրարային հատվածում իրականացվող քաղաքականության հասցեականության և արդյունավետության բարձրացման, հատկապես գյուղատնտեսական ներուժի օգտագործման մակարդակի գնահատման, արտադրության ծավալների և պարենային հաշվեկշռի ծրագրավորման, անասնաբուժական և բույսերի պաշտպանության հակահամաճարակային և կարանտին միջոցառումների կազմակերպման, պետության, դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրերի ու դրանց արդյունքների մոնիթորինգի անցկացման, ինչպես նաև բազմաբնույթ այլ գործառույթների առումով անհրաժեշտ է առանձին տնտեսավարող սուբյեկտների, համայնքների, տարածաշրջանների, մարզերի և ազգային մակարդակով արտադրության գործոնների և արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալների անընդհատ նորացվող բազայի (շտեմարանի) ստեղծումը: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում վիճակագրական տվյալների հիմնական տեղեկատվական բազան Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներն են: Տեղեկատվական աղբյուր են հանդիսանում նաև զարնանացանի ու բերքահավաքի շրջանում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից հավաքագրվող օպերատիվ տվյալները, որոնք հիմնականում տրամադրվում են մարզպետարանների համապատասխան ստորաբաժանումների, ինչպես նաև գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-երի) կողմից: Հրապարակվող վիճակագրական և օպերատիվ տվյալները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության մարզերի և հանրապետության կտրվածքով: Մակայն, ըստ նախկին վարչական տարածաշրջանների, համայնքների և տնտեսավարողների վիճակագրական տեղեկատվությունը

<sup>30</sup> Совершенствование статистики в целях обеспечения продовольственной безопасности и устойчивого развития сельского хозяйства и сельских районов. ФАО, Двадцать третья сессия, Рим, 21-25 мая 2012 года. <http://www.fao.org/docrep/meeting/025/md309R.pdf>

բացակայում է: Ստեղծված վիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարչական և վիճակագրական նպատակներով տվյալների հավաքագրման և օգտագործման բնագավառում առկա են էական տարբերություններ: Վիճակագրական նպատակով տվյալների հավաքագրումը կատարվում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից և դրանք օգտագործվում են միայն վիճակագրական նպատակով: Ի դեպ, սկզբնական (անվանական) տվյալները համարվում են վիճակագրական գաղտնիք և դրանք հրապարակման (այլ անձանց փոխանցման) ենթակա չեն: Վիճակագրական նպատակով հավաքագրված տվյալներն ամփոփվում, մշակվում և հրապարակվում են միայն խմբավորված և ամփոփ՝ վիճակագրական ցուցանիշների տեսքով: Այս բացերը վերացնելու և գյուղատնտեսության վիճակագրությունը առավել համակարգված ու ամբողջական դարձնելու համար կարևոր խնդիր է գյուղատնտեսական վիճակագրական ռեգիստրի վարումը: Այսինքն, ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում գյուղատնտեսական վարչական ռեգիստրի աստիճանական ձևավորման անհրաժեշտություն է առաջացել: Այս նախարարության համակարգում ներկայումս գործում են գյուղատնտեսական տեխնիկայի և անտառային տնտեսության վարչական վիճակագրական ռեգիստրները: Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման հարաբերությունները կարգավորվում են «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Նշված օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ պետական վիճակագրություն իրականացնող մարմինը (Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը) վարում է վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վիճակագրական ներքին ռեգիստրներ, որոնք ապահովում են դրանցում կուտակվող տեղեկությունների հաշվառումն ու ցուցանիշների նույնականացումը (իդենտիֆիկացումը): Նշված հոդվածով սահմանվում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային)

հաշվառում (վիճակագրություն) վարչական ռեգիստրների վարման միջոցով<sup>31</sup>: Համաձայն վերը նշված օրենքի՝ պետական վիճակագրական և վարչական դիտարկումների միջոցով հավաքագրված տեղեկությունների (տվյալների) ամբողջությունը կազմում է Հայաստանի Հանրապետության պետական վիճակագրական տեղեկատվության միասնական համակարգը և պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով նախատեսված վարչական տեղեկատվության հավաքագրման մեթոդաբանությունը, ինչպես նաև փաստաթղթերի ձևերը սահմանվում են վիճակագրության պետական խորհրդի կողմից: Վերլուծելով վարչական ռեգիստրի վարման բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշմամբ «Վարչական վիճակագրական ռեգիստրի վարումը» ընդգրկված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գործառույթների թվում, սակայն 2014 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով, ինչպես նաև 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նշված գործառույթի իրականացման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի մայիսի 10-ի N 109 որոշմամբ հաստատված «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգով» սահմանվում է վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման, ինչպես նաև դրանց միջոցով հավաքագրվող տեղեկությունների՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն ներկայացման կարգն ու պայմանները: Նշված կարգով, մասնավորապես, սահմանված է, որ ճյուղային (գերատեսչական) վարչական ռեգիստրների վարման համար անհրաժեշտ վարչական բնույթի դիտարկումներն իրականացվում են վարչական վիճակագրական հաշվետվությունների, հարցաթերթերի, տեղեկանքների և վարչական այլ փաստաթղթերի միջոցով:

---

<sup>31</sup> <http://www.armstat.am/file/doc/99486043.pdf>

Գյուղատնտեսական վարչական ռեգիստրի գործունեությունը համակարգելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համակարգում առաջարկում ենք ստեղծվել աշխատանքային պայմանագրերի հիման վրա ձևավորվող 2 հոգուց բաղկացած փորձագիտական խումբ: Մեր կարծիքով ռեգիստրի ձևավորման և վարման աշխատանքներն անհարաժեշտ է կազմակերպվել հետևյալ հաջորդական գործողություններով.

1) ՀՀ գյուղատնտեսության նախարարության վարչական ռեգիստրի համայնքային պատասխանատուները վարում են (լրացնում են) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի կողմից հաստատված գյուղատնտեսական վարչական ռեգիստրի համար անհրաժեշտ տվյալների հաշվետվական ձևերը, որոնցում արտացոլվում են գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց (գյուղացիական տնտեսությունների) վերաբերյալ անվանական՝ հասցեական տվյալները: Հաշվետվական ձևերում ներառված տվյալների արդիականացման պարբերականությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի կողմից հաստատված՝ դրանց լրացման հրահանգներին համապատասխան: Հաշվետվական ձևերում գետեղված բոլոր տվյալները համայնքային պատասխանատուն տրամադրում է ռեգիստրի տարածաշրջանային համակարգողին (գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի աշխատողին) (ռեգիստրի 3-րդ հարթություն)՝ տարածաշրջանի մակարդակով ըստ համայնքների և դրանցում ներառված անձանց վերաբերյալ էլեկտրոնային շտեմարան (անվանական տվյալների էլեկտրոնային արխիվացման եղանակով) ձևավորելու և տվյալների այդ համախումբը ռեգիստրի վերադաս հարթություններին փոխանցելու նպատակով,

2) տարածաշրջանային համակարգողը ստացած տվյալները ներկայացնում է գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի աշխատողին (մարզային համակարգողին) (ռեգիստրի 2-րդ հարթություն), որը կատարում է ստացված տվյալների ստուգաճշտում ընդունված մեթոդաբանությանը համապատասխան և ամփոփում մարզային կտրվածքով,



3) մարզային կտրվածքով ստացված ամփոփ տվյալները (անասնազվիսաքանակի տվյալները) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարան,

մարզային կտրվածքով ելակետային և ամփոփ տվյալները ներկայացվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության փորձագիտական խմբին (ռեզիստրի 1-ին հարթություն), որն իրականացնում է դրանց ամփոփումը հանրապետության կտրվածքով և էլեկտրոնային արխիվացումը: Վարչական ռեզիստրի շրջանակում ձևավորված անվանական տվյալների (ցուցանիշների) բոլոր շտեմարանները՝ էլեկտրոնային (ըստ անհրաժեշտության նաև թղթային) տարբերակով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով սահմանված աշխատանքներին (ցուցանիշներին) համապատասխան ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն՝ ծրագրում նախանշված ժամկետներում և պարբերականությամբ, Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրությանը սկզբնական տեղեկատվություն ներկայացնողների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու գործում նպաստելու համար: Վարչական ռեզիստրի ներդրման համար պահանջվող ֆինանսական միջոցները հիմնականում ուղղվելու են հանրապետության բոլոր համայնքների վարչական ռեզիստրի վարման համար համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերմանը, հաշվետվական ձևերի տպագրմանը, գործուղումներին:

Մեր կողմից մշակված նախահաշվի տվյալներով վիճակագրական վարչական ռեզիստրի համակարգի ներդրման համար առաջին տարում պահանջվում է 31.8 մլն դրամ: Փորձենք որոշակի պարզաբանումներ տալ առանձին ծախսերի հաշվարկմանը: Այսպես, հաշվետվական ձևերի տպագրում՝ հանրապետությունում գործում են շուրջ 190 հազ. խոշոր եղջերավոր անասուններ տնօրինող գյուղացիական (ընտանեկան) տնտեսություններ, աջակցության ծրագրերով շահառուների թիվը և վերամշակող ոլորտի հաշվառվող սուբյեկտների թիվը գնահատվում է շուրջ 40.0 հազ., ընդամենը 230 հազ.: 1 հաշվետվական ձևի արժեքը 10 դրամ, ընդամենը պահանջվում է 2300 հազ. դրամ (230 հազ.\*10 դրամ), գրանցամատյանների տպագրում՝ հաշվառման ենթակա համայնքները կազմում են 915: Յուրաքանչյուր համայնքի համար

նախատեսվում է 2 գրանցամատյանի տպագրում, շուրջ 1850 գրանցամատյան: Մեկ գրանցամատյանի գինը գնահատվում է 1200 դրամ, ընդամենը 2220.0 հազ. դրամ (1850\*1200), հաշվետվական ձևերի լրացման հրահանգների տպագրում՝ նախատեսվում է տպագրել 1200 հրահանգ (յուրաքանչյուր համայնքային պատասխանատուին, տարածաշրջանային և մարզային պատասխանատուներին, աշխատանքային խմբի անդամներին մեկ օրինակ 1040 հատ և 160 հատ ավել), պահանջվում է 42.0 հազ. դրամ (1200\*35 դրամ), ուսուցման կազմակերպում՝ ուսուցումը կազմակերպվելու է խմբային եղանակով ՀՀ մարզերում: Մեկ ուսուցանվողի համար պահանջվող ծախսը կազմում է 15.0 հազ. դրամ, որից առանձին ծախսեր՝

ա. գիշերավարձ – 5 հազ. դրամ x 1 օր,

բ. օրապահիկ - 2 օր x 3 հազ. դրամ,

գ. տրանսպորտային ծախսեր- 20 հազ. դրամ,

դ. ուսուցման գործընթացի կազմակերպում – 2 հազ. դրամ:

Գործուղման ծախսերի հաշվարկ: Գործուղումներ նախատեսվում է տարածաշրջանային, մարզային պատասխանատուների և փորձագիտական խմբի անդամների համար: Տարվա ընթացքում նախատեսվում է յուրաքանչյուրի համար 10 օր գործուղում: 1 մարդ/օրվա համար ծախսը կազմում է 9 հազ. դրամ, այդ թվում՝ գիշերավարձ – 5000 դրամ, օրապահիկ - 3000 դրամ, տրանսպորտային ծախսեր- 1000 դրամ:

Չնախատեսված միջոցառումների համար ծախսեր: Այդ բնույթի ծախսերը նախատեսված են հետևյալ աշխատանքների համար՝ անհրաժեշտությունից ելնելով կրկնակի հաշվառման իրականացում, լրացուցիչ գործուղումներ, հաշվետվական ձևերի տպագրում և ուսուցում, համակարգչային ծրագրի փոփոխություն, մասնագետների հրավիրում և այլն:

Վիճակագրական վարչական ռեգիստրի համակարգի ներդրումից կարելի է ակնկալ հետևյալ արդյունքները.

➤ ագրարային ոլորտում համակարգված քաղաքականության իրականացման, ծրագրերի, հայեցակարգերի, առաջարկությունների մշակման համար կձևավորվի տեղեկատվական հիմք՝ հանրապետության համայնքների, գյուղատն-

տեսությունում տնտեսավարողների, համայնքների, տարածաշրջանների, մարզերի և հանրապետության կտրվածքով,

➤ կատեղծվեն հանրապետության բոլոր համայնքների համար՝ գյուղատնտեսական կենդանիների՝ ըստ սեռահասակային խմբերի, ցուցանիշների հավաքագրմամբ և համակարգչային մշակմամբ տեղեկատվական բազաներ (շտեմարաններ),

➤ ըստ տնտեսավարող սուբյեկտների (շահառուների) կատեղծվեն տեղեկատվական բազաներ գյուղատնտեսությունում իրականացված ծրագրերի ընթացքի և արդյունքների վերաբերյալ,

➤ կատեղծվեն տեղեկատվական բազաներ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների կողմից մթերումների ծավալների, կնքված պայմանագրերի թվի և ծավալների վերաբերյալ,

➤ գյուղատնտեսական վարչական ռեգիստրի տվյալներն ելակետ կհանդիսանան Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համար ագրարային հատվածի տարբեր ոլորտներում ուսումնասիրությունների իրականացման համար,

➤ պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրին համապատասխան՝ կապահովվի Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն համապատասխան ցուցանիշներ ներկայացնելը,

➤ վարչական ռեգիստրի տվյալներն ելակետ կհանդիսանան նաև գյուղատնտեսության ոլորտում խորհրդատվության, համայնքների գյուղատնտեսական և համայնքային ծրագրերի ուղղվածության ընտրության համար,

➤ վարչական ռեգիստրի տվյալները հիմք կհանդիսանան մոնիթորինգի անցկացման ընթացքում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող բյուջետային ծրագրերի արդյունավետության գնահատման համար:

Այսպիսով, գյուղատնտեսական վիճակագրական ռեգիստրի ստեղծումը և վարումը կարևոր պայմաններ է ստեղծում ոլորտի վերաբերյալ տեղեկատվության լիարժեքության ապահովման և հավաստիության մակարդակի բարձրացման համար, իսկ վերջինս առաջնահերթ նախապայման է գյուղատնտեսության պետական

աջակցության ծրագրերի որակի և բյուջետային ծախսումների արդյունավետության բարձրացման համար:

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում վեր է հանվում ՀՀ գյուղատնտեսության վիճակագրության համակարգի թերությունները, որոնք բացասաբար են անդրադառնում նաև պետական աջակցության ծրագրերով հատկացվող բյուջետային ծախսերի արդյունավետության վրա: Մտեղծված վիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարչական և վիճակագրական նպատակներով տվյալների հավաքագրման և օգտագործման բնագավառում առկա են էական տարբերություններ

**Avetisyan S.S**

Doctor of Economic Sciences, Professor, Director of ASUE "Amberd" Research Center

**Avetisyan A.S.**

Doctor of Economic Science, Lecturer, Armenian National Agrarian University

**Hunanyan L.S.**

Researcher, Armenian National Agrarian University

### **AGRICULTURAL STATISTICS REGISTER MAINTENANCE AS EFFICIENCY ENHANCEMENT TOOL FOR BRANCH BUDGET EXPENDITURES**

**Key Words:** Agriculture, Statistics, Register, budget, support, efficiency, outlay

The Article touches upon the issues of statistic system drawbacks of the sphere in the RA that have their negative impact upon budget expenditure efficiency provided by the State support. Current situation is conditioned by the tangible differences between data accumulated and applied for administrative and statistical purposes. Data accumulation for statistical purposes is implemented by the National Statistic Service of the RA and those are intended for only statistical use. By the way initial (nominal) data is considered statistical secret and they are not subject to publication (providing others). So, it is offered to have

a statistical administrative register at the Ministry of Agriculture of the RA and its structure, function and necessary expenditures are discussed.

**Самвел Аветисян**

д.э.н., профессор, директор исследовательского центра “Амберд” АГЭУ

**Ашот Аветисян**

-преподаватель НАУА, к.э.н.

**Луиза Аветисян**

соискатель НАУА

## **ВЕДЕНИЕ РЕГИСТРА СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЙ СТАТИСТИКИ КАК ИНСТРУМЕНТ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ БЮДЖЕТНЫХ РАСХОДОВ ОТРАСЛИ**

**Ключевые слова:** сельское хозяйство, статистика, регистр, бюджет, поддержка, эффективность, смета.

В данной статье рассмотрены недостатки статистической системы сельского хозяйства Республики Армения, отрицательно влияющие на эффективность бюджетных расходов, предоставляемых в рамках программ государственной поддержки. Данная ситуация обусловлена значительными различиями в сборе и использовании данных в административных и статистических целях. Сбор данных в статистических целях осуществляется Национальной статистической службой РА, которые используются только в статистических целях. Начальные (номинальные) данные считаются статистической тайной и не подлежат опубликованию (передаче другим лицам). Поэтому предлагается в системе министерства сельского хозяйства РА вести административный регистр статистики. В статье подробно представлены структура, функции регистра, а также расходы, необходимые для его создания.

**Մարգարյան Ն. Ա.**  
Տ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ  
hmarzpanyan@ysu.am

**Հարությունյան Ա. Ա.**  
ասպիրանտ, Արցախի պետական համալսարան  
nushyano87@bk.ru

**ՄԱՐԴԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՄՈՏԵՑՈՒՄԵՐԸ**

**Բանալի բառեր.** մարդկային կապիտալ, տնտեսական ռեսուրս, ֆինանսական գնահատում, մարդկային կապիտալի կառավարում, ոչ նյութական ակտիվ

Մարդկային կապիտալի հայեցակարգը որպես համակարգված տեսություն ձևավորվեց 20-րդ դարի 60-ական թվականներին՝ զարգացած երկրներում մարդկային գործոնի դերակատարության աննախադեպ աճի արդյունքում: Դեռևս կես դար առաջ ինչպես տեսականորեն, այնպես էլ՝ գործնական ձեռքբերումներով հիմնավորվեց, որ գիտատեխնիկական հեղափոխությունը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում դրա արդյունքների ներդրումը ոչ միայն կտրուկ բարձրացրել են մարդկային գործոնի սոցիալ-տնտեսական նշանակությունը, այլև՝ հասարակության արտադրողական ուժերը հասցրել զարգացման մի այնպիսի աստիճանի, երբ գիտությունը վերածվել է անմիջական արտադրողական ուժի:

Այս կապակցությամբ հիրավի մարգարեական հնչեղություն ձեռք բերեցին ամերիկացի սոցիոլոգ Դ.Բեյլի կանխատեսումները հասարակության զարգացման նոր փուլի (խնդրո առարկայի առումով էական չէ դրա անվանումը՝ հետարդյունաբերական, գիտելիքահենք, տեղեկատվական) վերաբերյալ. «Հետարդյունաբերական տնտեսությունում նախապատվություն է տրվում ծառայությունների արտադրությանը, հետազոտությունների իրականացմանը, կրթական համակարգի կազմակերպմանը և կյանքի որակի բարձրացմանը, որտեղ տեխնիկական մասնագետները վերափոխվում են բարձրորակ մասնագիտական խմբի, և, ամենակարևորը, նորարարությունների ներդրումը ... առավելապես կախված է տեսական գիտելիքների նվաճումներից... Հետարդյունաբերական հասարակու-

բյուրն ... ենթադրում է նոր դասակարգի ձևավորում, որի ներկայացուցիչները քաղաքական մակարդակում հանդես կգան իբրև խորհրդատուներ, էքսպերտներ կամ տեխնոկրատներ»<sup>32</sup>: Ամերիկյան տնտեսագետների հաշվարկներն էլ իրենց հերթին ապացուցեցին, որ երկրի տնտեսության մեջ գիտության և գիտատեխնիկական կադրերի պատրաստման բնագավառներում կատարվող ներդրումների շնորհիվ արդեն ձեռք է բերվում նոր ստեղծված արժեքի հավելաճի ավելի քան 3/4 –ը: Այսպիսով, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները և, մասնավորապես, մտավոր ներուժի՝ տնտեսական առաջընթացի հիմնական շարժիչ ուժի վերաճելը, օբյեկտիվ հիմքեր հանդիսացան մադկային կապիտալի ժամանակակից հայեցակարգի մշակման, հիմնավորման ու կայացման համար:

Մարդկային կապիտալի հասկացության որոշակիացմանը գուզրնթաց գիտական շրջանառության մեջ դրվեց նաև այն գաղափարը, որ գոյություն ունի ոչ բնական կապիտալային ռեսուրսների երկու հիմնական տարատեսակ՝ մարդկային կապիտալը և ֆիզիկական կապիտալը: Ընդ որում՝ աշխատուժի մեջ մարմնավորված համախառն մարդային կապիտալը մրցակցային առավելությամբ ներուժային տնտեսական ռեսուրս է այնքանով, որքանով ի գործու է առաջ բերել եկամուտների ապագա հոսքեր:

Ինչպես հայտնի է, տնտեսական ռեսուրսները արժեքային արտահայտությամբ կարող են գնահատվել որոշակի ժամանակային կտրվածքով: Մարդկային կապիտալի՝ որպես տնտեսական ռեսուրսի ֆինանսական գնահատումն անհրաժեշտ է ոչ միայն դրա ապագա հատույցի մակարդակի պարզորոշման կամ մարդկային ռեսուրսների ռազմավարական կառավարման նպատակներով. այն կարող է մեծապես նպաստել տնտեսվարող սուբյեկտների մրցակցային առավելությունների բացահայտման տեսանկյունից գործնական նշանակություն ունեցող մի շարք խնդիրների արդյունավետ լուծմանը, խնդիրներ, որոնք կազմակերպություններում ծագում են իրական ակտիվների հաշվառման, կառավարչական որոշումների ընդունման, ֆինանսական կառավարման, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և այլ կարևոր գործառնություններ իրականացնելիս:

Սակայն վերոնշյալ անհրաժեշտությունից բխող գործընթացների պլանավորումն ու իրականացումը տնտեսվարման պրակ-

---

<sup>32</sup> Bell D., Notes on the Post-Industrial Society (The Public Interest, 1967, N 7, p. 102).

տիկայում բախվում է լուրջ բարդությունների կամ ֆինանսական ու վիճակագրական հաշվառման անհամադրելիության, քանի որ մարդկային կապիտալը չի դիտարկվում որպես հաշվապահական հաշվառման օբյեկտ: Օրինակ՝ ԼՂՀ հաշվապահական հաշվառման մասին օրենքով նախատեսված ՀՀՄՄ 38-ը ոչ նյութական ակտիվների շարքին չի դասում կազմակերպության աշխատողների գործարար հմտությունները, նրանց որակավորումը և աշխատանքային ունակությունները<sup>33</sup>: Նման մոտեցման պարագայում կազմակերպության հաշվեկշռում մարդկային կապիտալի՝ որպես ակտիվի, գրանցումը պարզապես հնարավոր չէ օրենքի ուժով: Այդ իսկ պատճառով հաշվապահական պրակտիկայում կազմակերպության՝ մարդկային կապիտալի գծով բոլոր ներդրումները հաշվառվում են որպես «ծախսեր»: Օրինակ, սեփական աշխատակիցների ուսումնառության կամ վերապատրաստման նպատակով կազմակերպության կատարած ներդրումները նրա հաշվեկշռում գնահատվում են որպես կրթության վրա կատարված ծախսեր: Այսինքն՝ մարդկային կապիտալը, որը ֆորմալ ճանաչվում է որպես տնտեսական ակտիվ, ըստ էության, չի կարող հաշվառվել հաշվապահական փաստաթղթերում: Այս հանգամանքը, բնականաբար, կազմակերպության իրական վիճակը գնահատելու կամ նրա զարգացման հեռանկարները հստակեցնելու հարցերում կարող է ծնել մարդկային կապիտալի իրական դերակատարման թերագնահատման՝ տեսամեթոդաբանական առումով չհիմնավորված, իսկ գործնական առումով՝ ոչ իրատեսական միտումներ:

Ներկայումս դեռևս չի մշակված կազմակերպության մարդկային կապիտալի ֆինանսական գնահատման համընդունելի և բավականաչափ հիմնավորված հայեցակարգ, որը լայնորեն կիրառություն կգտներ նաև նրա կառավարման գործընթացում: Հասկանալի է, որ կոնկրետ նպատակով այդպիսի գնահատում իրականացնելու համար պահանջվում են կոնկրետ գործիքներ՝ ներառյալ կազմակերպության կառավարչական գործունեության կոնկրետ մեխանիզմները կամ դրանց ազդեցության ֆինանսական գնահատումները: Հենց այս առումով գործնական հարթության մեջ գտնվող խնդիր է դառնում մարդկային կապիտալի ֆինանսական գնահատման մոտեցումների մշակումը, մտավոր ներուժի կիրառման արդյունքներն ու աշխա-

---

<sup>33</sup> ԼՂՀ հաշվապահական հաշվառման մասին օրենք, 14.04.2004, գլուխ 2, հոդված 6:



տողների ինտելեկտուալ և գործարար հմտություններն արտացոլող ֆինանսական ցուցանիշների համակարգի մշակումն ու ներդրումը:

Անշուշտ, մարդը որպես ֆեոդոնալ տնտեսական ռեսուրս պետք է գնահատվի ինչպես իր կարողությունների, ունակությունների, հմտությունների, այդ թվում՝ ստեղծարար գործունեության ներուժի, չափման, այնպես էլ՝ դրանից ակնկալվող տնտեսական օգուտի տեսանկյունից: Ստեղծագործական աշխատանք կատարող անհատը հարաբերականորեն անկախ է հասարակությունից, քանի որ այդպիսի աշխատանքը ձեռք է բերում զգալիորեն անհատական բնույթ՝ միաժամանակ բավարարելով նրա պահանջմունքները:

Վերոնշյալի հիման վրա որոշ գիտնականներ պնդում են, որ ժամանակակից՝ «նոր» տեսակի աշխատողը տնտեսական շահագործման չի ենթարկվում: Այլ կերպ ասած՝ շահագործումը տնտեսականից վերածվում է հոգեբանականի. «Ժամանակակից պայմաններում շահագործման ֆեոդոնալ պետք է իմաստավորվի փոփոխություններ կրած սոցիալական իրականության տեսակետից ... Այն չի կարող հաղթահարվել հասարակական արդյունքի վերաբաշխման միջոցով ... Շահագործման վերացումը հնարավոր է միայն գիտակցության «ֆեոդոնալ» հաղթահարմամբ: Հասարակությունում, որտեղ մարդը հիմնական է համարում նյութական պահանջմունքները, դրանց կրճատումը ընկալվում է որպես շահագործում, իսկ այնտեղ, որտեղ հետաքրքրությունները խստորեն կախված չեն նյութական նպատակներից, շահագործումը դադարում է սոցիալական հարաբերությունների էական տարր լինելուց: Տնտեսական դարաշրջանին բնորոշ շահագործման հատկանիշի հաղթահարումը երկարատև գործընթաց է՝ կապված մարդկային գիտակցության իներտության հետ»<sup>34</sup>:

Այդուհանդերձ, առավելապես «տնտեսական» դարաշրջանում մարդկային կապիտալի ֆինանսական արժեքն անհրաժեշտաբար պետք է համադրելի լինի այլ ակտիվների գնահատման հետ: Ժամանակակից տնտեսական համակարգերի «ինտելեկտուալացումը», արտադրական գործընթացներում մտավոր ունակությունների առաջատար դերը, առաջին պլան մղեցին «մտավոր կապիտալ» կատեգորիայի տնտեսավիճակագրական մեկնաբանությունները. դրանում այսպես թե այնպես ներառվեցին կազմակերպության տնօրինության տակ գտնվող մի շարք ոչ նյութական տարրեր, որոնք կապահովելին ինչպես մարդկային, այնպես էլ «ոչ մարդկային» կապիտալի

<sup>34</sup> Иноземцев В. Л., За пределами экономического общества, М., 1998, с. 8.

արդյունավետ օգտագործումը: Ցավոք, խնդրո առարկայի վերաբերյալ ձևավորվեց մեթոդաբանորեն անհամադրելի երկու մոտեցում.

1. Մտավոր կապիտալը մարդկային կապիտալի մի մասն է, որի կայացումը պայմանավորված է գործունեության արդյունքների փոխանակման հատուկ ոլորտի ձևավորմամբ՝ կապված աշխատաժամանակի տնտեսման, սպառման արդյունավետության բարձրացման, աշխատանքի և կենսագործունեության պայմանների փոփոխության, տեղեկատվության փոխանցման, «նոու-հաուների» հետ<sup>35</sup>:

2. «Մտավոր կապիտալ» հասկացությունը ավելի լայն է, քան մարդկային կապիտալը և ներառում է տեղեկատվությունը՝ որպես առանձին արտադրական գործոն<sup>36</sup>:

Հասկանալի է, որ վերոնշյալ բնույթի տարբերակումներն ավելի են բարդացնում են մարդկային կապիտալը որպես տնտեսական ակտիվ գնահատելու և հաշվառելու խնդիրը: Հիմնական բարդություն այն է, որ մարդկային կապիտալը որպես ոչ նյութական ակտիվ չունի ինքնուրույն նշանակություն, նրա արժեքը կարող է գնահատվել միայն ապագա եկամուտների ձևավորման վրա ունեցած ներգործության համատեքստում: Այդ պատճառով էլ հաշվապահական հաշվառման ներկայիս ստանդարտները շրջանցում են մարդկային կապիտալի տնտեսական արժեքի հաշվառման խնդիրը: Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ ֆինանսական հաշվառումը վերջին հաշվով բնութագրում է գործողություն, որը վերաբերում է արտաքին օգտագործման հաշվետվությունների ներկայացմանը, մինչդեռ կառավարչական հաշվառումը ենթադրում է գործառնություններ, որոնք առնչվում են որոշումների ընդունման ներքին գործընթացին:

Որպեսզի մարդկային կապիտալը ֆինանսական փաստաթղթերում դիտարկվի որպես ակտիվ, նախ և առաջ այն պետք է համապատասխանի ակտիվի ներկայումս ընդունված բնորոշմանը: Այլապես՝ մարդկային կապիտալի չափման ինստիտուցիոնալ մոտեցումների բացակայության պայմաններում, այդ գործընթացը փոխարինվում է այլ-ընտրանքային գնահատման տարատեսակ մեթոդներով, ինչպիսիք են՝

---

<sup>35</sup> Сту` Критский М. М., Критский М. М. Человеческий капитал в системе экономических отношений, М., 1995, с. 223.

<sup>36</sup> Сту` Цвылев Р., Цвылев Р. Социальный конфликт в постиндустриальной экономике. Институт мировой экономики и международных отношений, 1998, N 10, с. 38-39.

✓ մարդկային կապիտալի վրա կատարված ծախսումների հաշվառման մեթոդը,

✓ մարդկային ռեսուրսների անհատական արժեքների հանրագումար ստանալու մեթոդը,

✓ կազմակերպության աշխատակիցների վրա կատարված ուղղակի ծախսումների հաշվարկի մեթոդը,

✓ մարդկային կապիտալի մրցակցային արժեքի գնահատման մեթոդը,

✓ մարդկային կապիտալի ապագա արժեքի որոշման մեթոդը:

Մարդկային կապիտալի ներկազմակերպական հաշվառումից ու գնահատումից զատ, հատկապես ԼՂՀ – ի պես փոքր տնտեսություն ունեցող երկրում, պահանջվում է նաև համապատասխան մոտեցումների որդեգրում առավել լայն՝ մեզո և մակրոմասշտաբներում, որոնք հնարավորություն կընձեռեին ֆինանսական հաշվառման խնդիրներից անցում կատարել մարդկային կապիտալի սոցիալական հատույցի գնահատմանը:

### ԱՄՓՈՓՈՒՄ

Մարդկային կապիտալի չափման ներկայիս դժվարությունները վկայում են այն մասին, որ անհրաժեշտ է մի կողմից՝ առավել հիմնավորել տնտեսավիճակագրական մասնագիտական մոտեցումները, մյուս կողմից՝ հնարավորինս ճշտորեն գնահատել այն բոլոր գործոնների համատեղ ազդեցությունը, որոնք տվյալ երկրի կոնկրետ-պատմական պայմաններում, ազդեցացման տարբեր մակարդակներում, կազմակերպությունների արտաքին ու ներքին միջավայրերում ի վերջո պայմանավորում են մարդկային կապիտալի ֆինանսական արժեքի մեծությունը:

**Марзпаян А. А.**

д.э.н., проф. , Иджеванский филиал ЕГУ

**Арутюнян А. А.**

аспирант Арцахского государственного университета

### МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ФИНАНСОВОЙ ОЦЕНКЕ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА КАК ЭКОНОМИЧЕСКОГО РЕСУРСА

**Ключевые слова:** человеческий капитал, экономический ресурс, финансовая оценка, управление человеческим капиталом, нематериальный актив

Накопление человеческого капитала является необходимым условием развития бизнеса и роста экономики. Финансовая оценка человеческого капитала имеет важное значение для функционирования практически любого предприятия. Использование лиц, которые имеют необходимые знания, опыт и способность функционировать в своих назначенных ролях, позволяет бизнесу работать с максимальной эффективностью. Неспособность идентифицировать людей с необходимыми сочетаниями навыков, опыта, и образования может подорвать усилия даже самых хорошо организованных компаний. Однако, на практике не все руководители могут определить финансовую стоимость такого актива, или оценить человеческий капитал в финансовом плане. На величину и размер человеческого капитала организации влияет состав рабочей силы, культура, практика управления человеческим капиталом.

**Marzpanyan A. A.**

Doctor of Economics, Professor, YSU, Ijevan Branch

**Harutyunyan A.A.**

PhD Student, Artsakh State University

## **METHODOLOGICAL APPROACHES FOR THE FINANCIAL EVALUATION OF HUMAN CAPITAL AS AN ECONOMIC RESOURCE**

**Key words:** human capital, economic resource, financial evaluation, human capital management, non-material assets

Accumulation of human capital is a pre-requisite for business development and the growth of an economy. The quantity and quality of human capital is essential to the operation of just about any type of enterprise. Employing individuals who have the necessary expertise, judgment, and ability to function within their assigned roles allows the business to operate at maximum efficiency. A failure to identify individuals with the necessary combination of skills, experience, and education can undermine the efforts of even the most well organized company. However, not all managers can determine the financial value of the assets, or include the human capital in the financial plan. On the amount and size of the human capital of the organization affects the workforce, culture, human capital management practices.

**Վարդանյան Գ.Վ.**

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դոցենտ, տ.գ.թ.  
vardgohar@yandex.ru

**Մամիկոնյան Լ.Լ.**

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

**ՄԱՄԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՈՐՊԵՏ  
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՆԴԻԿՍՏՈՐՆԵՐ**

**Բանալի բառեր.** սնման ֆիզիոլոգիական նորմեր, պարենային ապահովություն, բնակչության փաստացի սնում, աշխատունակ բնակչություն, սննդանյութեր և էներգիա:

Ինչպես հայտնի է, 2002թ. մայիսի 7-ին ընդունվել է «Պարենային անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքը», որտեղ որպես ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը համարվել է սննդամթերքի որակական հատկանիշներ իապահովումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան:

Որպես օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններ շեշտադրում է կատարված «սնվելու ֆիզիոլոգիական նորմեր» և «կենսապես կարևորագույն սննդամթերք» հասկացությունների վրա<sup>37</sup>:

Հանրապետությունում մշակվել է նաև ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգ, որի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ կառավարության 2008-2012թթ. Գործունեության ծրագրի, կայուն զարգացման ծրագրի ռազմավարական բնույթի այլ իրավականակ տերի պահանջներից:

Բացի այդ, վերջին տարիներին իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումների շնորհիվ ՀՀ-ում ձևավորվել են պարենային անվտանգության մակարդակի բարձրացման որոշակի նախադրյալներ, սակայն բնակչության կայուն և լիարժեք պարենապահովման հարցում դեռևս առկա են լուծում պահանջող

---

<sup>37</sup> «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, 07.05.2002 թ.

բազմաթիվ խնդիրներ, ինչն ավելի արդիական է դարձնում հայեցակարգի ընդունումը:

Հայեցակարգում որպես պարենային անվտանգության ապահովման նույն ժամանակահատվածում իրականացվող անվտանգության գնահատականը, սննդամթերքի անվտանգության, ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումը, սնուցման լիարժեքության ապահովումը, տարածքային համաչափ զարգացման խթանումը, արտակարգ դեպքերում վիճակներում պարենային անվտանգության ապահովումը և շրջական միջավայրի պահպանությունը:

Ըստ հայեցակարգի «Յուրաքանչյուր երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության զարգացման այնպիսի մակարդակ, որն երաշխավորում է բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը և բացառում արտակարգ իրավիճակներում պարենային ճգնաժամերի առաջացումը»<sup>38</sup>:

Բնակչության սնման նորմաները սահմանվում են սննդային նյութերի և էներգիայի նկատմամբ մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքների նորմաներին համապատասխան: Դրանք գիտականորեն հիմնավորված նորմաներ են, որոնք ամբողջությամբ ծածկում են օրգանիզմի ծախսումները և ապահովում են նրան պահանջվող քանակությամբ ու օրգանիզմի համար առավել շահավետ հարաբերակցությամբ անհրաժեշտ բոլոր սննդային նյութերով:

Սննդանյութերի և էներգիայի նկատմամբ ֆիզիոլոգիական պահանջմունքների նորմաները (ՖՊՆ) հաստատուն մեծություններ չեն, դրանք պարբերաբար ճշգրտվում և վերանայվում են՝ կապված տվյալների բնակչության ժողովրդագրական կառուցվածքում, մարդկանց կյանքի և աշխատանքի պայմաններում տեղի ունեցող փոփոխությունների, սնման հիգիենայի ոլորտում գիտության և պրակտիկային որ տվյալների ի հայտ գալու հետ:

Մնման նորմաներ ընախատեսում են սնման քանակական և որակական կողմերը: Մնման քանակական կողմը արտահայտվում է. ա). Մարդու էներգածախսումներով, հիմնական փոխա-

---

<sup>38</sup> ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգ, նախագիծ

նակության մեծությամբ և ֆիզիկական ակտիվության գործակցով, ք). Գործունեության որոշակի տեսակների դեպքում ընդհանուր էներգա ծախսումների մեծությամբ:

Մնան որակական կողմը արտահայտվում է. ա). Մննդային նյութերի և էներգիայի նկատմամբ պահանջով, բ). Սպիտակուցների նկատմամբ պահանջով, գ). Ճարպերի նկատմամբ պահանջով, դ). Ածխաջրերի նկատմամբ պահանջով, ե). Վիտամինների նկատմամբ պահանջով:

Հայտնի է, որ գոյություն ունի “առողջ սնունդ” հասկացությունը, այն հիմնված է հետևյալ երեք սկզբունքների վրա՝ բազմազան սնունդ, ըստ ածխաջրեր-սպիտակուցներ-ճարպեր համադրության հավասարակշռված սնունդ, չափավոր սնունդ:

Գաղտնիք չէ, որ ԱՄՆ-ում բնակչության առողջ սնման հոգսերը դրված են երկու նախարարությունների վրա՝ առողջապահության և գյուղատնտեսության: Այդ նախարարություններին առընթեր սկսած դեռևս XIX դարավերջից գործում էին գիտական և փորձարարական ստորաբաժանումներ, որոնք ուսումնասիրում էին սննդամթերքների կազմը, դրանց էներգետիկական արժեքը, ինչպես նաև սնման ազդեցությունը բնակչության առողջական վիճակի վրա: Խմբերը առանձնացվում է ինսնդարար նյութերի, սպիտակուցների, ածխաջրերի, վիտամինների և հանքանյութերի, ճարպերի և շաքարի գլխավոր բաղադրիչներից կախված: Հանձնարարականներում ըստ մթերքների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր օրվա համարտրվում էին որոշակի քանակություններ, ինչպես նաև օրինակելի ճաշացանկը և բաղադրատոմսերը:

1930-1980-ական թթ. համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ սննդամթերքների քանակությունները մնացել են նույնը: 1980-1990-ական թթ. Մնման գծով հանձնարարականները լրջորեն վերամշակվեցին՝ հաշվի առնելով վերջին հետազոտությունները և ըստ կալորիաների, վիտամինների, հանքային նյութերի, խոլեստերինի, աղի և այլ նյութերի գծով նորմատիվները, որոնք համարվում էին մարդու առողջության կարևորագույն բաղկացուցիչներ:

Կալորիաների և սնուցող նյութերի քվանտավորմանը զուգընթաց որոշվեց առանձնահատուկ ուշադրություն դարձնել նաև

հանձնարարականների գրաֆիկական արտապատկերմանը, ինչին և ծառայեցսնման բուրգը:

Այս սկզբունքների հիման վրա ամերիկյան դիետոլոգները 1992 թ. Ստեղծեցին սնմանբուրգը, որում ցույց տվեցին յուրաքանչյուր օրվա օրաբաժնում սննդամթերքների առավելագույնս օգտակար հարաբերակցությունը: Սննդամթերքները նրան ում տեղակայված են հիմքից դեպի գագաթը՝ ըստ նրանց օգտակարության նվազման չափի և կազմված է մթերքների վեց խմբից: Բուրգի հիմքում գտնվում են ամենաօգտակար մթերքները, դրանք պետք է օգտագործել մեծ քանակությամբ և հաճախ: Որքան մոտ են ու մենք գագաթին, այնքան փոքր պետք է լինեն նշված մթերքների սննդաբաժինները և այդքանով էլ հազվադեպ պետք է դրանք ուտել, իսկ գագաթին տեղադրված են ամենավնասակար մթերքները, դրանք պետք է սահմանափակել կամ էլ առհասարակ բացառել:

2008 թվականին սնման բուրգը աննշան կերպով փոփոխության ենթարկվեց ամերիկացի դիետոլոգ, սննդաբան Ուոլտեր Վիլլետտի կողմից, ըստ նրա հայեցակարգի գլխավորը ֆիզիկական ակտիվության և կալորիականության միջև հաշվեկշռի պահպանումն է: Բուրգի հիմքում ընկած է ֆիզիկական ակտիվությունը և հեղուկների բավականաչափ սպառումը, ինչը առողջ ապրելակերպի անհրաժեշտ պայմանն է: Բուրգի II աստիճանում գտնվում են մրգերը և բանջարեղենը, ամբողջական հատիկավոր մթերքները, որոնք պարունակում են “երկարաժխաջրատներ”, բազմա չհագեցած ճարպաթթուներ պարունակող բուսական ճարպերը: Բուրգի III աստիճանում գտնվում են սպիտակուցներ պարունակող մթերքներ, որոնք ունեն բուսական և կենդանական ծագում: Բուրգի IV աստիճանում տեղակայված են կաթը և կաթնամթերքները: Բուրգի ամենավերևում գտնվում են այնպիսի մթերքներ, որոնք անհրաժեշտ է սահմանափակել կամ ընդհանրապես բացառել: Դրանց են վերաբերում կենդանական ճարպերը, ինչպես նաև մեծաքանակ “արագաձխաջրատներ” պարունակող մթերքները: Այս հայեցակարգում առանձնահատուկ տեղ է հատկացվում ալկոհոլի սահմանափակ օգտագործման և վիտամինա-հանքային համալիր միջոցների կիրառման անհրաժեշտության վրա:

2011 թ.-ին ԱՄՆ-ում հայտնվեց առողջ սնման նոր խորհրդանիշ և նոր տեսակետ, այն իրենից ներկայացնում է



առողջության սննդային ավսեն, որը եկավ փոխարինելու “սնման բուրգին”: Վերջինս մշակվել է ԱՄՆ-իցյուղ. Դեպարտամենտի (USDA) կողմից և նրա խորագիրն է. “Կերբազմազան, բայցբիչ”: Ըստ այս նոր տեսակետի, մթերքների բոլոր խմբերը կարելի է օգտագործել համարյա թե հավասար համամասնություններով և անձնական նախապատվությունների համաձայն: Գլխավորը մեծաքանակ չափաբաժիններից և յուղոտ սննդից խուսափումն է:


Տվյալ հայտնագործության էությունը կայանում է նրանում, որ սովորական ճաշի ավսեն բաժանվում է բազմազույն հատվածների. կանաչ՝ բանջարեղենի համար, կարմիր՝ մրգերի համար, նարնջագույն՝ հատիկավորների համար, մանուշակագույն՝ սպիտակուցների համար: Ինչպես նաև այդ մեծափսենի ամրացվում է կապույտ գույնով եզրագծված “Dairy” կոչվող շրջագծային էլեմենտը, ինչը հիշեցնում է ամենօրյա կաթնամթերք օգտագործելու անհրաժեշտության մասին: Պետք է նշել, որ սննդային ավսենի գլխավոր արժանիքը նրա պարզությունը և ակնառու լինելն է՝ շրջանագիծը, չորսմասերը, մասերի պարզ անվանումները<sup>39</sup>:

Ափսեի խորհրդանշանը կոչված է տալ ուսնման գծով հետևյալ հիմնական հանձնարարականները. Փոքր չափաբաժինները, օրաբաժնի կեսը՝ մրգեր-բանջարեղեն, ամբողջական հատիկներ՝ մաքրվածի և վերամշակվածի փոխարեն, ճարպազերծված կաթնամթերքներ, աղի նվազագույն քանակություն, ջուր՝ շաքար պարունակող ըմպելիքների փոխարեն:

Հաշվի առնելով սնման ժամանակակից պահանջները, մեր կողմից մշակվել են սննդամթերքների առաջարկվող քանակները և դրանց տեսակարար կշիռը (%-ով) ըստ սպառման ռացիոնալ նորմաների, որոնք անհրաժեշտ են ակտիվ կենսակերպի ու առողջության ամրապնդման համար: Այն ներկայացված է գծապատկեր 1-ում: Կարծում ենք այս տարբերակը կնպաստի մարդկանց առողջության պահպանմանն ու նրանց նորմալ կենսագործունեությանը, սակայն այն հնարավոր կլինի իրագործել միայն պետական շահագրգիռ մոտեցման պայմաններում:

---

<sup>39</sup><http://bodysekret.ru/forum/showtread.php?t=1422>



**Գծանկար 1.** Բնակչության կողմից սպառման ենթակա սննդամթերքների առաջարկվող քանակությունները ըստ սպառման ռացիոնալ նորմաներին դրանց տեսակարար կշիռները

## ԱՄՓՈՓՈՒՄ

Բնակչության սնման նորմաները սահմանվում են սննդային նյութերի և էներգիայի նկատմամբ մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքների նորմաներին համապատասխան: Դրանք ամբողջությամբ ծածկում են օրգանիզմի ծախսումները և ապահովում են նրան պահանջվող քանակությամբ ու օրգանիզմի համար առավել շահավետ հարաբերակցությամբ անհրաժեշտ բոլոր սննդային նյութերով: Սնման նորմաները նախատեսում են սնման քանակական և որակական կողմերը: Դրանք հաստատուն մեծություններ չեն, և պարբերաբար ճշգրտվում ու վերանայվում են:

**Vardanyan G.V.**  
P.h.d., docent, NAUA  
**Mamikonyan L.L.**  
NAUA

## **PHYSIOLOGICAL NORMS OF NUTRITION AS THE MOST IMPORTANT INDICATORS OF FOOD SECURITY OF THE POPULATION**

**Key words:** nutrition physiological norms, food safety, actual nutrition of population, working-age population, nutrients and energy.

The article explored the quantitative and qualitative aspects of food, "healthy food" concept, and nutrition pyramid and nutrition plate created by American nutritionists. Given the current nutrition requirements the author developed recommended amount of food on the basis of rational consumption norms (the weight is also given) which are necessary for the enhancement of health and active lifestyle.

**Вардanian Г.В.**  
к.э.н., доцент, НАУА  
**Мамиконян Л.Л.**  
НАУА

## **ФИЗИОЛОГИЧЕСКИЕ НОРМЫ ПИТАНИЯ КАК ВАЖНЕЙШИЕ ИНДИКАТОРЫ ПРОДОВОЛЬСТВЕННОГО ОБЕСПЕЧЕНИЯ НАСЕЛЕНИЯ**

**Ключевые слова:** физиологические нормы питания, продовольственная обеспеченность, фактическое питание населения, трудоспособное население, питательные вещества и энергия

В статье рассмотрены количественные и качественные стороны питания населения, понятие «здоровая пища», пирамида питания и тарелка питания, созданные американскими диетологами. Учитывая современные требования питания, автором разработаны рекомендуемые количества продуктов питания на основе рациональных норм потребления (дан также их удельный вес), необходимые для активного образа жизни людей и укрепления их здоровья.

Այվազյան Ա. Ս.  
Հյուսիսային համալսարանի հայցորդ  
alina\_ayvazyan@mail.ru  
Կարապետյան Գ. Է.  
ՀՊՏՀ «Հարկաբյուջետային իրավունք»  
մասնագիտության մագիստրանտ  
g.karapetyan@list.ru

## **ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր.** հարկաբյուջետային քաղաքականություն, հարկային քաղաքականություն, հարկային բեռ, հարկային եկամուտներ, հարկային վերահսկողություն

Ֆիսկալ քաղաքականությունը պետության կողմից իրականացվող քաղաքականություն է, որն անմիջականորեն կապված է պետական մարմինների և տնտեսական գործունեություն ծավալող բոլոր մնացած սուբյեկտների փոխգործողության հետ: Այդ փոխգործողությունը իրականացվում է պետական պատվերների, հարկման և տրանսֆերային վճարների համակարգի միջոցով: Քանի որ պետական ծախսերի իրականացումը նշանակում է պետական բյուջեի միջոցների օգտագործում, իսկ հարկերը հանդիսանում են դրանց գոյացման հիմնական աղբյուրը, ապա հարկաբյուջետային քաղաքականությունը պետական բյուջեի կառավարմանն ուղղված միջոցառումների համակարգ է:

Հարկաբյուջետային քաղաքականությունը հանդիսանում է մակրոտնտեսական հարաբերությունների կարգավորման ուժեղ գործիք: Հարկաբյուջետային քաղաքականության թեման ներկայումս բավականին արդիական է, քանի որ բոլոր երկրներում և, մասնավորապես, անցումային շրջանում գտնվող երկրների համար տնտեսական կյանքում առկա են բազմաթիվ խնդիրներ և, կախված նրանից, թե ինչպես կառավարությունը կիրականացնի հարկաբյուջետային քաղաքականությունը, այնպիսին էլ կլինի երկրի տնտեսական զարգացման պատկերը, ինչպես նաև յուրաքանչյուր մարդու և ամբողջ երկրի ճակատագիրը:

Ըստ էության, հարկաբյուջետային քաղաքականությունն իրենից ներկայացնում է տնտեսական գործունեության տարբեր բնագավառներում հարկ վճարողների և հարկման ենթակա եկամուտների որոշման, հարկատեսակների, դրանց դրույքաչափերի սահմանման, հարկերի գանձման ու վճարումների կանոնակարգման, դրանց օրենսդրաիրավական ապահովվածության, ինչպես նաև այդ գործընթացների ներքին և արտաքին կապերի ու բյուջեի եկամտային մասի ձևավորման հիմնական աղբյուրների մի ամբողջական համակարգ: Կախված տնտեսական բազիսից և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից՝ տարբեր երկրներ տարբեր լուծումներ են տալիս վերոհիշյալ խնդիրներին: Տնտեսության և հարկման համակարգի համարժեքությունը բնութագրվում է դրանց միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապով, քանի որ դրանցից մեկի անկատարությունը անխուսափելիորեն հանգեցնում է մյուսի անկանոն զարգացմանը: Այդ առումով, էական նշանակություն ունի հարկային համակարգի որակական կազմի և կառուցվածքի հստակ սահմանումը:

Բյուջետային հարաբերությունների առանցքը, բնականաբար, կազմում է հարկային քաղաքականությունը: Դա տրամաբանական է, քանի որ ցանկացած ծախսերի կատարման կարևորագույն պայմանը համապատասխան ծավալով եկամուտների առկայությունն է: Իր հերթին, եկամուտների ավելացման խնդիրը կարող է լուծվել հարկային համապատասխան քաղաքականության իրականացման պարագայում: Այդ քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի հարկերի ֆիսկալ և կարգավորիչ ֆունկցիաների զուգակցումը: Այլապես, դրանց միջև հաշվեկշռվածության բացակայությունը կտանի տնտեսության զարգացման արգելակմանը: Հարկային քաղաքականությունը պետք է բխի հասարակության և տնտեսության զարգացման գերակայությունների ու շահերի ներ-դաշնակեցումից: Այլ խոսքով, տնտեսության պետական կարգավորման գործում չափազանց մեծ է պետական բյուջեի դերը, որը հիմնավորված տնտեսական քաղաքականության դեպքում դառնում է տնտեսության զարգացման գլխավոր գործիք:

Տնտեսության կայուն զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկն է արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականությունը, որի կիրառման դեպքում պետական բյուջեի եկամուտ-

ները ծածկում են փաստացի ծախսերը, կամ այնքան մոտ են դրանց, որ բյուջետային դեֆիցիտը կազմում է ՀՆԱ-ի թույլատրելի տոկոսը:

Ակնհայտորեն, նշված խնդիրների լուծմանը պետք է ուղղված լինի տնտեսության հարկաբյուջետային կարգավորումը, որն իրենից ներկայացնում է կառավարության կողմից իրականացվող միջոցառումների մի համալիր՝ ուղղված պետական եկամուտների և ծախսերի կառավարմանը, առավելագույն զբաղվածության ապահովմանը, սղաճի ծրագրային մակարդակի ձեռք բերմանը, ՀՆԱ-ի և տնտեսական աճի խթանմանը:

Հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը պետք է միտված լինի տնտեսության աշխուժացմանը և ենթադրի այնպիսի մոտեցումների կիրառում, որոնց առկայությունը կհանգեցնի տվյալ քաղաքականությամբ պայմանավորված գործունեության արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ իրականացվող հարկային քաղաքականությունը դեռևս հեռու է կատարյալ լինելուց: Տնտեսական նոր հարաբերություններին անցման փուլի համար հարկային բեռը բավականաչափ բարձր է, օրենսդրությունը մեծամասամբ խիստ, բարդ, հարկային ծառայությունների մասնագիտական և տեխնիկական հազեցվածությունը լիարժեք կատարյալ չէ և այլն<sup>40</sup>: Նման պայմաններում ստեղծվում է մի իրավիճակ, երբ բարեխիղճ հարկատուները կրում են ամբողջ հարկային ճնշումը, այն դեպքում, երբ մի շարք խոշոր տնտեսավարող սուբյեկտներ խուսափում են հարկերի վճարումից:

Հարկային համակարգի որակական բնութագրիչներից է հանդիսանում հարկային բեռի գնահատումը: Հարկային վերափոխումների ընթացքում հիմնական շեշտը պետք է դրվի հարկային բեռի թեթևացման և ստվերային տնտեսության ծավալների կրճատման վրա: Հարկային թույլ վարչարարության պայմաններում հարկային բեռի թեթևացումը պետք է ուղեկցվի հարկային համակարգի պարզեցմամբ, ինչը հնարավորություն

---

<sup>40</sup> Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում, Արթուր Ղուլյան, Ֆինանսներ և էկոնոմիկա, #9, 2011:

կտա ուժեղացնել հարկային վերահսկողությունը: Ստվերային տնտեսության դեմ պայքարը չի կարող սահմանափակվել միայն վարչարարական մեթոդներով: Դրա համար պետք է երկրում ձևավորել այնպիսի տնտեսական միջավայր, որի պայմաններում գործող տնտեսավարող սուբյեկտները ցանկություն ունենան վճարել հարկեր և ստանալ օրինական եկամուտներ: Այդ նպատակով անհրաժեշտ է հարկային քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ նախապատվությունը տալ հարկերի կարգավորիչ ֆունկցիայի իրացմանը: Հարկային եկամուտների կառուցվածքում պետք է փոխվի նաև պետական բյուջեի ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: Համաձայն ենք այն հիմնավորման հետ, որ հատկապես անուղղակի հարկերը վնասակար են, դրանք հիմնականում ծանրանում են հասարակության վրա, վատթարացնում սոցիալական վիճակը<sup>41</sup>: Ի տարբերություն անուղղակի հարկերի՝ ուղղակի հարկերն իրենց բովանդակությամբ ավելի առաջադիմական են: Դա կարելի է հիմնավորել այն բանով, որ մի կողմից հարկի այդ ձևի հաշվարկը կատարվում է հարկ վճարողների ստացված եկամուտներից և գանձվում է եկամտի ստացման ժամանակ, իսկ մյուս կողմից՝ հարկ վճարողներին նախապես հայտնի է դառնում վճարվող հարկի գումարը՝ ելնելով նախապես սահմանված դրույթաչափերից: Այս առումով գերմանացի պրոֆեսոր Լ. Էրհարդը նշել է, որ բոլոր քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների ցանկությունների արդարացի բավարարումը հնարավոր է երաշխավորել միայն հարկային բազայի ընդլայնման, հարկային համակարգի խթանիչ դերի բարձրացման և հարկային բեռի թեթևացման ճանապարհով<sup>42</sup>: ՀՀ-ում բարձր հարկերը հանդես են գալիս որպես ընդհանուր պահանջարկի զսպման գործոն, ինչը տնտեսության անկման պատճառ է: Հանրապետության հարկային համակարգում անուղղակի հարկերի տեսակարար կշռի աստիճանական և ոչ թե կտրուկ կրճատումը, կարծում եմ, պետք է դառնա տնտեսական վերափոխումների հիմնական ուղղություններից մեկը:

---

<sup>41</sup> Селигман Э., Струм Р., Методы по теории обложения, СПб. 1908, стр. 91.

<sup>42</sup> Эрхард Л., Благополучия для всех, М. 1991, стр. 18.

Հարկային մեխանիզմը պետք է արդյունավետ փոխգործունեության մեջ գտնվի նաև դրամավարկային քաղաքականության հետ՝ որոշակի արտոնություններ տրամադրելով այն ֆինանսական և վարկային հաստատություններին, որոնք օգտագործում են երկարաժամկետ փոխառությունները ներդրումային նպատակներով: Անհրաժեշտ է նաև որակապես նոր մոտեցումներ ցուցաբերել հարկային արտոնությունների ինստիտուտի նկատմամբ: Արտոնությունների տրամադրումը պետք է համապատասխանի պետական ներդրումային այն ծրագրերին, որոնց արդյունավետության կանխատեսելիության աստիճանը բավականաչափ բարձր է: Հարկային քաղաքականության ծրագրերում պարտադիր կերպով առաջնայնություն պետք է տրվի բարձր տեխնոլոգիական և գիտատարողունակ արտադրությունների զարգացմանը: Անհրաժեշտ է բարձրացնել պետական ծախսերի ծավալը՝ ուղղված գիտատեխնիկական զարգացման խթանմանը, ընդ որում, նախապատվություն պետք է տրվի այն ճյուղերի զարգացմանը, որոնք տնտեսական համակարգի համար ունեն առաջնային նշանակություն: Խիստ կարևոր է հարկային և բյուջետային ընթացակարգերի առավելագույն կայունությունը և դրանց հաճախակի փոփոխությունների անթույլատրելիությունը, եթե այդպիսի փոփոխություններն էականորեն չեն բարելավում ձեռներեցության զարգացման պայմանները կամ պայմանավորված չեն տնտեսական խնդիրների լուծման անհետաձգելիությամբ: Կարծում ենք՝ հարկային քաղաքականության գլխավոր խնդիրը պետք է լինի հարկային բեռի հավասարաչափ բաշխումը՝ հաշվի առնելով սոցիալական արդարության ապահովման և տնտեսության զարգացման անհրաժեշտությունը:

Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, ՀՀ կառավարությունը ծրագրել էր 2011-2013թթ. ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ-ի 28.3-27.3% սահմաններում: 2011-2013թթ պետական եկամուտների քաղաքականությունը իրականացվեց ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության ծրագրով ամրագրված սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների հարաբերությունը պետք է ավելացվեր



տարեկան միջին հաշվով 0.3-0.4 տոկոսային կետով, պետական բյուջեի ծախսերն առավելապես ապահովված կլինեն ներքին ռեսուրսներով և կնվազեն պետական ծախսերի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից, կառավարությունը հարկային եկամուտների ավելացման իր հիմնական նպատակին կհասնե՝ հատկապես տնտեսության ստվերային հատվածի կրճատման հաշվին՝ բացառելով տնտեսավարող սուբյեկտների հանդեպ օրենքի պահանջներով չպայմանավորված վարչարարական ճնշումները:

Ստորև ներկայացնում ենք պետական բյուջեի ցուցանիշների հետ կապված որոշ վիճակագրական տվյալներ.

### Աղյուսակ 1

2011-2013 թվականների համար ծրագրային բյուջետային եկամուտները (մլրդ դրամներով)

| Եկամտատեսակը                                                                     | 2011թ  | 2012թ  | 2013թ  |
|----------------------------------------------------------------------------------|--------|--------|--------|
| Պետական բյուջեի եկամուտներ, որից՝                                                | 833.8  | 882.6  | 964.6  |
| հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)                                            | 23.36% | 23.01% | 23.33% |
| 1. Հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ | 771.3  | 851.6  | 938.6  |
| հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)                                            | 21.6%  | 22.2%  | 22.7%  |
| տոկոսով ընդհանուրի նկատմամբ                                                      | 92.5%  | 96.5%  | 97.3%  |
| 1.1. Հարկային եկամուտներ և պետական տուրք                                         | 650.9  | 718.4  | 790.9  |
| հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)                                            | 18.23% | 18.73% | 19.13% |
| տոկոսով ընդհանուրի նկատմամբ                                                      | 78.06% | 81.40% | 81.99% |
| 1.2. Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ                                    | 120.4  | 133.2  | 147.7  |
| հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)                                            | 3.37%  | 3.47%  | 3.57%  |
| տոկոսով ընդհանուրի նկատմամբ                                                      | 14.44% | 15.09% | 15.32% |
| 2. Պաշտոնական դրամաշնորհներ                                                      | 41.2   | 9.7    | 4.9    |
| հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)                                            | 1.15%  | 0.25%  | 0.12%  |
| տոկոսով ընդհանուրի նկատմամբ                                                      | 4.94%  | 1.10%  | 0.51%  |
| 3. Այլ եկամուտներ                                                                | 21.3   | 21.2   | 21.1   |
| հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)                                            | 0.60%  | 0.55%  | 0.51%  |
| տոկոսով ընդհանուրի նկատմամբ                                                      | 2.56%  | 2.41%  | 2.19%  |

Հարկային ոլորտի արդյունավետությունը բարձրացնելու համար կարևորվում են.

- արտադրության, նոր տեխնոլոգիաների, գիտության և կրթության զարգացման ոլորտներում ներդրումների նկատմամբ հարկային արտոնությունների ճկուն մեխանիզմի կիրառումը,

- սեփական արտադրանքով արտաքին շուկաներ դուրս եկած ընկերություններին սկզբնական փուլում հարկային արտոնությունների տրամադրումը,

- հարկման բազայի ընդլայնման ճանապարհով հարկային բեռի թեթևացումը,

- ակտիվ կառուցվածքային քաղաքականության իրականացման և հայրենական ապրանքների մրցունակության ապահովման անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ տնտեսության տարբեր ճյուղերում հարկային դրույքաչափերի տարբերակված մոտեցման կիրառումը:

Բյուջետային ծախսերի ոլորտում իրականացվող քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները, մեր կարծիքով, պետք է համարվեն հետևյալները.

- պետական մարմինների և բյուջետային հիմնարկների համար անհրաժեշտ է սահմանել ծախսերի հստակ նախահաշիվներ, որոնք պետք է հիմնավորվեն համապատասխան նորմատիվային ակտերով,

- պետք է առավելագույնս մեծացնել պետական գնումների համակարգի գործունեության թափանցիկությունը,

- բարձրացնել պետական ներդրումային քաղաքականության արդյունավետությունը,

- անհրաժեշտ է մեծացնել գիտության, կրթության, առողջապահության ոլորտներին կատարվող հատկացումները՝ հետևելով գիտական նախագծերի կազմմանը և գիտահետազոտական աշխատանքների կատարմանը, աշխատանքի շուկայի պահանջները բավարարող կրթական մակարդակի բարձրացմանը, բուժապասարկման մատչելիության ապահովմանը, ինչպես նաև բժշկական ապահովագրության զարգացմանը և այլն:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հարկաբյուջետային ոլորտի կատարելագործման մեջ կարևոր ուղղություններ պետք է հանդիսանան տնտեսության զարգացմանն ուղղված հարկային օրենսդրության ստեղծումը, արտադրության խթանումը և ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով հարկային համապատասխան ռեժիմի սահմանումը, ներմուծվող որոշ ապրանքատեսակների համար մաքսատուրքերի տարբերակված դրույքաչափերի կիրառումը, արտադրական նպատակով ներմուծվող հումքը, նյութերը և պահեստամասերը ավելացված արժեքի հարկից ազատումը, ներքին շուկայում մեծ պահանջարկ ունեցող հումքատեսակների արտահանումը սահմանափակելու նպատակով արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերի բարձրացումը, ցածր տոկոսադրույքներով վարկային ռեսուրսների տրամադրումը նորաստեղծ ձեռնարկություններին՝ հիմնավորված բիզնես ծրագրերի առկայության դեպքում, նոր տեխնոլոգիաների, գիտության և կրթության զարգացման ոլորտներում ներդրումների նկատմամբ հարկային արտոնությունների, իսկ տնտեսության առանձին ճյուղերում հարկային դրույքաչափերի տարբերակված մոտեցման կիրառումը:

**Ayvazyan A.S.**

Post Graduating Study Participant at the Northern University

**Karapetyan G.E.**

ASUE, Master's degree student of the profession "Fiscal Law"

## STABILITY ISSUES OF TAX POLICY

**Key words:** fiscal policy, tax policy, tax burden, tax income, tax control

This article reveals main problems in regards of stability issues of tax policy, as well as, mentions the most important ways of improving tax policy, particularly making tax legislation which will make the economy to grow, using tax reductions and different taxation rates for different branches of economy, giving lower loan resources to SME for making the business environment better.

**Այվազյան Ա.Շ.**  
соискатель Северного университета  
**Կարապետյան Գ. Յ.**  
АГЭУ, магистрант по профессии “Налоговое право”

## ВОПРОСЫ СТАБИЛЬНОСТИ ФИСКАЛЬНОЙ ПОЛИТИКИ

**Ключевые слова:** фискальная политика, налоговая политика, налоговое бремя, налог на прибыль, налоговый контроль

Эта статья раскрывает основные проблемы в отношении вопросов стабильности налоговой политики, а также, упоминает наиболее важные пути улучшения налоговой политики. В частности, устанавливает налоговое законодательство, которое приводит к росту экономики, используя налоговые льготы и различные ставки налогообложения для различных отраслей экономики, давая более низкие кредитные ресурсы для малого и среднего бизнеса, для улучшения бизнес-среды.

**ՍԱՀԱԿՅԱՆ Ա.Ա.**  
Հյուսիսային համալսարանի հայոցորդ  
xamuriartak@yahoo.com

## ԱՌԵՎՏԴԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

**Բանալի բառեր.** *շահութաբերություն, շահութաբերության գնահատում, բանկային համակարգ, վարկային ներդրումներ, եկամուտներ և ծախսեր*

Քանի որ բանկերը կենտրոնական դեր են խաղում ֆինանսական շուկաներում՝ ներգրավելով ավանդներ և դրանք օգտագործելով վարկային և այլ ներդրումներ իրականացնելու համար, նրանց շահույթը ձևավորվում է տրամադրված վարկերի և այլ ներդրումների դիմաց ստացված և դեպոզիտների դիմաց վճարված տոկոսավճարների տարբերությունից: Այս է պատճառը, որ բանկերի շահույթի վերլուծության համար հիմք է հանդիսանում զուտ տոկոսային եկամուտների գնահատումը: Սակայն վարկային

շուկայի մրցակցության ուժեղացումը ստիպել է բանկերին բացահայտել եկամուտների այլ աղբյուրներ (ոչ տոկոսային եկամուտներ): Արդյունքում, շահույթի խորը վերլուծության համար կարևոր է նրա բոլոր բաղադրիչների վերլուծությունը:

Ռիսկային միջավայրում շահույթի վերլուծության առաջին քայլը պետք է բխի բանկի եկամուտների վերաբերյալ տեղեկատվության պահպանման և հաշվետվական համակարգի համար սահմանված քաղաքականության, ընթացակարգի և գործընթացի ուսումնասիրությունից: Անհրաժեշտ է քննարկել բանկի հաշվապահական համակարգը, գլխավոր գիրքը, բացառությունների վերաբերյալ տեղեկանքները, պարզելու համար, թե որքանով է վերահսկողներին և բանկի կառավարմանը ներկայացվող տեղեկատվությունը համապատասխանում իրականությանը: Հաշվապահական գլխավոր գրքի եկամուտների և ծախսերի հաշիվները ստուգվում են՝ ոչ սովորական և խոշոր հաշվանցումների մասով, և քննարկվում են պարտականությունների ճիշտ տարանջատման ընթացակարգերը: Ուշադրության արժանի եկամուտների և ծախսերի հաշիվները ներառում են՝ խոշոր այլ եկամուտների հաշիվները, վարկերի դիմաց ստացված տոկոսավճարները, ինսայդերների ծախսային հաշիվները, իրավաբանական մարմիններին վճարված գումարները և այլ խոշոր հոդվածներ:

Բանկի եկամուտների վերաբերյալ տվյալների ճշգրտության մեջ համոզվելուց հետո անհրաժեշտ է գնահատել նրա բյուջեն, որը պետք է համահունչ լինի բանկի ռազմավարական նպատակներին և ներառի իրատեսական ենթադրություններ: Բյուջեի համարժեքության քննարկման ժամանակ պետք է կարևորվի այն հանգամանքը, որ հետևյալ գործոնների վերաբերյալ ենթադրությունները ներառված լինեն նրանում.

- տոկոսադրույքների սպասվող (կանխատեսվող) մակարդակը և փոփոխականությունը
- երկրի տնտեսական իրավիճակը
- ֆինանսավորման ռազմավարությունը
- ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը և գինը
- զարգացման (աճի) նպատակները

➤ տոկոսադրույքների և ժամկետայնության անհամապատասխանությունները (ճեղքվածքները):

Բանկի կառավարման ենթադրությունների իրատեսականությունը գնահատելու համար նրա նախկին տարիների շահույթը պետք է համեմատվի այդ ժամանակաշրջանի բյուջեի հետ: Անհրաժեշտ է, որ բանկի տեղեկատվական համակարգը ապահովի բյուջեի տատանումների վերաբերյալ բավարար տեղեկություններ:

Բանկի կառավարումը պետք է ուսումնասիրի բյուջեի փոփոխությունների առաջացման պատճառները:

Շահութաբերության վերլուծությունը պետք է սկսել նրա մակարդակը և միտումները գնահատելուց:

Շահութաբերության մակարդակը գնահատելու ամենատարածված ցուցանիշ է միջին ակտիվների շահութաբերությունը (ROA կամ Ե1՝ ըստ CAMELS -ի):

$$\text{Ե}_1 = \text{ՁՇ} / \text{ԸԱ}$$

որտեղ՝

ՁՇ - զուտ շահույթն է

Դիսամիկ կտրվածքով ROA-ի քննարկման ընթացքում պետք է ուսումնասիրել, թե որ ժամանակահատվածում է հարաբերակցությունը ցանկալի մակարդակից ցածր, կամ, որ ժամանակահատվածում հարաբերակցությունն ունի նվազման միտում: Եթե ROA-ն ցածր է ցանկալի մակարդակից, սակայն աճի միտումներ ունի, նշանակում է բանկը հաղթահարում է դժվարությունները, և շահույթը վերադառնում է նորմալ մակարդակի: Առավել տագնապալի են այն իրավիճակները, երբ բանկի շահույթն ունի նվազման միտում կամ տևականորեն ցածր է մնում ցանկալի մակարդակից: Մյուս կողմից, եթե բանկն ունի շահութաբերության շատ բարձր մակարդակ, նշանակում է, որ այն իրականացնում է բարձր եկամտաբեր և միաժամանակ բարձր ռիսկային գործունեություն: Շահութաբերության նշանակալի տատանումները պետք է ցույց տան բանկային ռիսկերից մեկի կամ մի քանիսի առկայության հնարավորություն:

Այդ ցուցանիշների կիրառումը շահութաբերության գնահատման միայն սկիզբն է, դրա ամբողջական վերլուծության և հա-

մապատասխան որակական գնահատական տալու համար պետք է վերլուծել շահութաբերության 4 հիմնական բաղադրիչները.

- զուտ տոկոսային մարժա (NIM)
- ոչ տոկոսային եկամուտ
- պահուստավորման ծախսեր
- գերատեսչական ծախսեր:

Զուտ տոկոսային մարժան հնարավորություն է տալիս վերլուծությունը կենտրոնացնել եկամտաբեր ակտիվների եկամտաբերության մակարդակի և այդ ակտիվների ֆինանսավորման միջոցների ծախսերի գնահատման վրա:

Ոչ տոկոսային եկամուտները բանկի եկամուտների երկրորդ խոշոր աղբյուրն են և դրանք հիմնականում ունեն պարզավճարների բնույթ. ծառայությունների (չեկային և տրաստային գործարքներ, դեպոզիտների ապահովագրություն, որոնք ոչ տոկոսային հիմք ունեն) դիմաց ստացված եկամուտներ (պարզավճարներ): Եկամուտների վերլուծությունը պետք ներառի ոչ տոկոսային եկամուտների ծավալների վերաբերյալ տեղեկատվություն, որի հիման վրա կարելի է պարզել, թե ընդհանուր եկամուտների որ մասն են կազմում դրանք, և որքանով են իրականանում բանկի կառավարման ծրագրերը ոչ տոկոսային եկամուտների մասով: Մակայն կոնկրետ առանձին գործունեության եկամտաբերության կամ ընդհանուր եկամուտների վրա նրա ազդեցության գնահատման ուղղակի մեթոդ չկա:

Մենք քննարկեցինք շահութաբերության գնահատման համար կիրառվող մի շարք գործակիցներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել նրա մակարդակը՝ վերլուծելով քանակական և որակական պարամետրեր: Մակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ևս մեկ ցուցանիշի վրա, որը հավասարապես կարևոր է շահույթ հետապնդող ցանկացած տնտեսավարող սուբյեկտի և հատկապես՝ բանկերի համար: Դա Ե2-ն է:

Այն բնութագրում է կապիտալի շահութաբերությունը (ROE) և համարվում է կարևորագույն ցուցանիշ, որը ուղեցույց է բանկի ներդրողների համար: Զարգացած երկրներում բանկի ներդրողները ցանկանում են տեսնել այս ցուցանիշի 15 - 20% մակարդակ:

ROE-ն կարելի է տարանջատել բաղադրիչների, որը կոչվում է  
*շահութաբերության մոդել*.

$$ROE = \text{Եկամուտներ/Ընդհանուր ակտիվներ} * \text{Շահույթ/}$$
$$\text{Եկամուտներ} * \text{Ընդհանուր ակտիվներ/Ընդհանուր կապիտալ}$$

Այս բաղադրիչներից առաջինը բնութագրում է բանկի ակտիվների օգտագործման արդյունավետությունը, երկրորդը բնութագրում է բանկի արդյունավետությունը և երրորդը՝ բանկի որպես ֆինանսական միջնորդ կայանալու աստիճանը և կոչվում է ֆինանսական լծակ: Մոդելը կարելի է տարանջատել նաև ավելի մանր բաղադրիչների:

Այս մոդելը կարելի է նկարագրել հետևյալ կերպ. (1) = (2)/(3), (2) = (4) - (5) + (6) - (7), (4) = (8) - (9), (7) = (10) + (11) - (12):

Մոդելի նման կառուցվածքը հնարավորություն է տալիս գնահատել բանկի շահութաբերության բոլոր տարրերը և բացահայտել շահույթի մակարդակի նվազման պատճառները: Այդ պատճառով այս մոդելը հատկապես նպատակահարմար է կիրառել դինամիկայի մեջ՝ տվյալ տարվա ցուցանիշները համեմատելով նախորդ տարիների ցուցանիշների հետ:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ կա որոշակի հակասություն ROE-ի մակարդակի և բանկի հուսալիության միջև. ներդրողներն առաջին հայացքից շահագրգռված են, որ բանկն ունակ լինի ներգրավել զգալի միջոցներ, քանի որ այդ դեպքում չնայած նվազում է բանկի ROA-ն, սակայն աճում է ROE-ն և հետևաբար նաև պոտենցիալ դիվիդենդները: Սակայն մյուս կողմից դա բացասաբար է ազդում բանկի կապիտալի համարժեքության մակարդակի և հետևաբար նաև նրա հուսալիության վրա:

Սովորաբար բանկի աճի համար որպես առաջին նախապայման դրվում է լրացուցիչ կապիտալի ներարկումը, քանի որ հուսալի բանկի ակտիվների աճի տեմպերը չպետք է գերազանցեն կապիտալի աճի տեմպերին: Սակայն գոյություն ունի բանկի կայուն աճի գործակից, որը ցույց է տալիս, թե բանկն ինչ տեմպերով կարող է աճել առանց լրացուցիչ կապիտալ ներարկելու (շահութաբերության առկա մակարդակի դեպքում): Այդ գործակիցը



հաշվարկելու համար կիրառվում են 3 փոփոխականներ. շահութաբերության գործող մակարդակ, որը չափվում է ակտիվների

- շահութաբերությամբ (ROA)
- չբաշխված շահույթի տեսակարար կշիռ
- կապիտալի հարաբերակցություն ակտիվներին (ֆինանսական լծակ)

Կայուն աճի գործակիցը հաշվարկվում է.

$$ROA * (1 - \text{շահաբաժինների տեսակարար կշիռ}) * 100\%$$

(կապիտալ / ակտիվներ) -  $ROA * (1 - \text{շահաբաժինների տես. կշիռ})$

### ԱՄՓՈՓՈՒՄ

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման և կարգավորման գործընթացում կարևորվում է բանկային համակարգը, որը համարվում է պետության առանձին տնտեսվարող սուբյեկտների, բնակչության և այլ կազմակերպությունների գործունեությունը:

Առևտրային բանկերի գործունեության գնահատման համար խիստ կարևորվում են հիմնական ցուցանիշներ համարվող՝ զուտ շահույթի, ակտիվների, ընդհանուր կապիտալի, կանոնադրական կապիտալի, պարտավորությունների, վարկային ներդրումների փոխկապվածությունները: Դրանցից հատկապես առանձնանում են՝ բանկի բազմարկիչի, ROE-ի և ROA-ի միջև փոխկապվածությունները, որոնցով գնահատվում է բանկային համակարգի, այդ թվում նաև՝ առևտրային բանկի ֆինանսական դրությունը: Վերոնշյալ մեթոդով կատարվող վերլուծությունն ունի մեծ կիրառություն, սակայն բարելավման առումով առաջարկել ենք վերոնշյալ հիմնական ցուցանիշների միջև նորովի հարաբերակցություններ (կանոնադրական կապիտալ և պարտավորություններ, պարտավորություններ և վարկային ներդրումներ, վարկային ներդրումներ և ընդհանուր կապիտալ), որոնք իրենց էական ազդեցությունն են թողնում բանկի բազմարկիչի վրա:

**Саакян А.А**  
соискатель Северного Университета

## АНАЛИЗ ПРИБЫЛЬНОСТИ КОММЕРЧЕСКОГО БАНКА

**Ключевые слова:** Прибыльность, оценка прибыльности, банковский сектор, кредитные вложения, доходы и расходы

Банковская система является одной из важнейших инфраструктур рыночной системы. Входящие в нее коммерческие банки осуществляют различные функции, вовлекая денежные средства клиентов и, одновременно являясь посредником в перераспределении капитала, значительно увеличивают общую эффективность продукции. Достижение здоровой банковской системы в первую очередь обусловлено выбором эффективных методов оценки и анализа, а также законодательного регулирования функций данной системы и правильной организацией этих процессов, которые осуществляются с помощью экономических нормативов, отчетов, а также с помощью систем их оценивания.

**Sahakyan A.A**  
Post Graduating Study Participant at the Northern University

## COMMERCIAL BANK PROFITABILITY ANALYSIS

**Key words:** profitability assessment, banking sector, credit investments, income and expenses.

The banking system is one of the most important integral parts of the market economy infrastructure, and the commercial banks as players of the system make various transactions: by attracting financial resources from various clients as intermediaries reallocate the attracted capital, thus increasing general efficiency of the products. Hence, taking into account the above-stated arguments the author made it important to identify the interplay of the assets of the commercial banks with their liabilities, and to present the ways to improve it, thus explaining the urgency of the chosen topic and the need to conduct the research. The goal of the article to propose theoretical and applied methods to improve the interplay of the assets of commercial banks.

**Княджян А.Э.**  
преподаватель Ереванского Северного Университета  
hqnajyan@mail.ru

## **ДЕВИАНТНОЕ ЭКОНОМИЧЕСКОЕ ПОВЕДЕНИЕ В СТРАНАХ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА**

**Ключевые слова:** экономические союзы, Евразийский экономический союз, девиантное экономическое поведение, теневая экономика.

Мы живем в эпоху глобальных перемен. Формируется новая архитектура мировой экономики, которая определит векторы движения на десятилетия вперед. Кризис и последовавшие за ним поиски новых моделей стратегического развития повсюду в мире привели к активизации действий целого ряда стран по созданию региональных интеграционных объединений. Формирование экономических союзов становится важным фактором международных отношений. Успех Европейских Сообществ стимулирует создание объединений государств, расположенных в непосредственной близости друг от друга, в других частях мира. Как правило, целями подобных группировок являются: интенсификация взаимных торговых и финансовых потоков, создание зоны мира в регионе, совместное решение специфических региональных проблем, коллективная защита от более сильных соседей и представительство интересов группировки в международных организациях. В этом контексте было очень актуальным вопрос о создании такого союза в постсоветском пространстве, которым и стал Евразийский экономический союз - международное интеграционное экономическое объединение, договор о создании которого на базе Таможенного союза ЕврАзЭС подписан 29 мая 2014 года (вступит в силу с 1 января 2015 года). В состав союза входят Россия, Казахстан, Белоруссия и Армения. Один из целей союза как экономического объединения является создание более благоприятных условий для дальнейшего роста взаимной торговли и развитой экономики. Один из препятствий к реализации этой цели может стать девиантное поведение в экономике (теневая экономика, коррупция, мошенничество) стран участников союза. Поэтому сейчас очень

актуально изучение этих проблем, чтобы выявить детерминанты этих явлений и разработать единую и эффективную стратегию против борьбы девиантного поведения в экономике.

В этой статье мы будем изучать теневую экономику (как один из видов экономического девиантного поведения) стран участников и сделать сравнительный анализ.

Теневая экономика - (**black economy**) Экономическая деятельность, о которой не сообщается в органы социального обеспечения, налоговые и прочие государственные учреждения. Термину намеренно придается несколько уничижительное значение, так как участие в теневой экономике обычно связано с уклонением от уплаты налогов и отчислений в социальные фонды, а люди, занятые в ней, иногда лишаются права на получение социальных выплат и льгот (*social security benefits*). Кроме того, в теневой экономике нарушаются законы, касающиеся охраны и безопасности труда, ответственности работодателя, гарантий занятости, найма иностранных работников и т. д. Отсутствие документально подтвержденной информации о деятельности в теневой экономике снижает достоверность официальных статистических данных о доходах и занятости.<sup>43</sup> «Теневая» экономика наиболее громко заявила о себе в 1930-е годы, когда итальянская мафия вторглась в американскую экономику и на пиратский манер взяла ее «на абордаж». С тех пор «теневая» экономика превратилась из проблемы правоохранительных органов в экономическую и общегосударственную проблему. В 1930-е годы появились исследования, которые касались только криминальной стороны такой деятельности. В 1970-е годы к изучению «теневой» деятельности подключились экономисты. Автором одной из первых работ, посвященных изучению всех аспектов «теневой» экономической деятельности, был американский ученый П. Гутман. В своей статье под названием «Подпольная экономика» он убедительно показал, что недоучитывать «теневую» деятельность нельзя. Серьезной проблемой стал теневой товарооборот в позднем СССР, составляя в 1986 году 10

---

<sup>43</sup> Экономика. Толковый словарь. — М.: "ИНФРА-М", Издательство "Весь Мир". Дж. Блэк. Общая редакция: д.э.н. Осадчая И.М., 2000.

млрд рублей.<sup>44</sup> Существенной частью теневой экономики являлось подпольное производство с его разветвленной инфраструктурой: службой поставщиков, сбытовиков, оптовиков, торговцев и т.д. В целом численность активно и пассивно участвовавших в нелегальных экономических отношениях оценивалась в 100 млн. чел.<sup>45</sup> В последнее десятилетие средний уровень теневой экономики в мире составляет около 35.5.<sup>46</sup>

| Группы стран                   | 1999—2003<br>(145 стран)* | 2006<br>(167 стран)** |
|--------------------------------|---------------------------|-----------------------|
| В развивающихся странах        | 38,7                      | 38,1                  |
| В переходных странах           | 40,1                      | 38,1                  |
| В развитых странах             | 16,3                      | 18,7                  |
| В 3-х коммунистических странах | 22,3                      | 14,3<br>(Китай)       |
| <i>В среднем по странам</i>    | <i>35,2</i>               | <i>35,5</i>           |

Основы теневой экономики стран Евразийского экономического союза тот же, потому что как бывшие страны СССР традиции и навыки частного предпринимательства не исчезли в советские годы, а получили свое развитие в рамках теневой экономики в странах бывшего советского союза. Особенно это проявлялось в начале 90-годов когда общество находилось в состоянии аномии.

Для определения масштабов теневой экономики используются разные подходы и у разных экспертов есть разные взгляды на масштабы теневой экономики в конкретных странах, но мы для анализа выбрали официальные данные государственных органов. Потому что в большинство случаев официальные данные серьезно расходятся с оценками ряда экспертов.

В **России** теневая экономика является одним из самых противоречивых аспектов экономической истории России. В 2011

---

<sup>44</sup> «В Политбюро ЦК КПСС... По записям Анатолия Черняева, Вадима Медведева, Георгия Шахназарова (1985 – 1991)»

<sup>45</sup> Осипенко О.В. К анализу феномена «черного рынка» //Экономические науки. 1990. N8 –с. 68.

<sup>46</sup> Schneider F. Shadow Economies and corruption all over the World: What do we really now?2007. \*\* Friedrich Schneider, Andreas Buehn, Claudio E. Montenegro. Shadow Economies all over the World: New Estimates for 162 Countries from 1999 to 2007.

году, согласно официальным оценкам Росстата, рассчитанным по методу корректировки ВВП, степень тенизации экономики России составлял порядка 16 % ВВП, при обороте порядка 7 триллионов рублей в год. В теневых секторах экономики было задействовано порядка 13 миллионов человек.<sup>47</sup> Динамика объёмов теневого сектора в экономике России характеризуется сложными процессами. Теневая экономика существовала в Российской империи и в СССР, затем получила ещё более широкое распространение в постперестроечное время. Так, в начале 1990-х годов, неформальные и нелегальные виды экономической деятельности получили широкое распространение. Однако учитывая то, что ВВП страны сокращалось, рыночные запросы были скромными, а доступные технологии крайне примитивным, доля неформальной экономики легче поддавалась оценке. По данным на 1997—1998 доля неформальной экономики составляла порядка 20 % от годового объёма ВВП. Размер нелегальных и криминальных видов деятельности достигал дополнительные 24 % ВВП. Таким образом, доля теневого сектора доходила до 44 % ВВП.

С начала 2000-х годов начался массовый выход крупных капиталов из тени, что было связано с быстрым ростом экономики и её увеличивающейся открытостью. Доля неформального сектора снизилась до 16 % в 2012 году. Вместе с тем, технологические структуры экономики усложнились по мере усложнения потребительского спроса, появления оффшорных зон и др. факторов, а значит снизилась и эффективность расчёта неформального и нелегального секторов.


Ежегодный размер теневой экономики в **Беларуси** – 12-13% от ВВП, ненаблюдаемой – 20-22%. 2009-2010 годах МНС оценивало долю теневой экономики в Беларуси в 10-15% ВВП. В номинальном выражении ВВП за 2012 год составил 527,4 трлн рублей, или около

---


<sup>47</sup> Теневая экономика в России официально оценена в 7 триллионов рублей. NEWSru (1 апреля 2011). Проверено 22 ноября 2014. Архивировано из первоисточника 24 ноября 2014.

63,3 млрд долларов.<sup>48</sup> По сравнению с соседними странами в Белоруси очень низкий уровень теневой составляющей экономики.

Согласно данным Агентства Республики **Казахстан** по статистике доля теневой экономики в объеме ВВП по итогам 2012 года составила 19,2 %, снизившись с 20,1 % в 2005г.



Основная доля теневой экономики (64,6 %) приходится на 4 отрасли: «Торговля» – 22,9 %, «Сельское хозяйство» – 15,6%, «Транспорт» – 14,1 %, «Операции с недвижимым имуществом» – 12,0 %



49


По данным Минфина доля теневой экономики в **Армении** 2013 г. составляет порядка 30-35% от ВВП.

Анализируя вышесказанное мы видим что несмотря на то, что основы теневой экономики стран Евразийского экономического

<sup>48</sup> <http://news.tut.by/economics/370050.html> Проверено 22 ноября 2014. Архивировано из первоисточника 24 ноября 2014.

<sup>49</sup> <http://www.ank.kz/projects/npa/55596/?print=Y> Проверено 21 ноября 2014. Архивировано из первоисточника 23 ноября 2014.

союза тот же, но сегодня процент теневой экономики в этих странах разное. Которое в среднем составляет около 20%.



Учитывая тот факт, что Евразийский экономический союз, договор о создании которого только в 2015г. начнет действовать, на сегодняшний день как единая структура, не имеет официальных данных про теневую экономику и пока не планирована единая стратегия по борьбе против теневой экономики.

**Заключение**

Одним из препятствий для создания более благоприятных условий дальнейшего роста взаимной торговли и развитой экономики в странах Евразийского экономического союза может стать девиантное поведение в экономике (теневая эканомика, коррупция, мошенничество) стран участников союза. Основы теневой экономики стран Евразийского экономического союза те же, потому что, как бывшие страны СССР, традиции и навыки частного предпринимательства не исчезли в советские годы, а получили свое развитие в рамках теневой экономики в странах бывшего советского союза. Особенно это проявлялось в начале 90-годов, когда общество находилось в состоянии аномии, но сегодня процент теневой экономики в этих странах разный, который в среднем составляет около 20%.



**Քնացյան Հ.Է.**

Երևանի Հյուսիսային համալսարան, դասախոս

### **Դեվիանտ տնտեսական վարքագիծը Եվրասիական տնտեսական միությունում**

**Հիմնաբառեր.** տնտեսական միություն, Եվրասիական տնտեսական միություն, դեվիանտ տնտեսական վարքագիծ, ստվերային տնտեսություն:

Դեվիանտ տնտեսական վարքագիծը (ստվերային տնտեսություն, կոռուպցիա, խարդախություն) կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող երկրների միջև փոխադարձ առևտրի և զարգացած տնտեսական համակարգ ձևավորելու գործընթացում: Չնայած այն հանգամանքին, որ ստվերային տնտեսության հիմքերը անդամ երկրների մոտ նույնն է, քանի որ ԽՍՀՄ տարիների ընթացքում ձևավորված ավանդույթները ավելի զարգացան 90-ական թվականներին, երբ հասարակությունը գտնվում էր անոմիայի վիճակում, սակայն ստվերային տնտեսության տոկոսը այս երկրներում տարբեր է, որը միջինը կազմում է մոտավորապես 20%:

**Knajyan H.E.**

Lecturer, Yerevan Northern University

### **DEVIANT BEHAVIOR IN EURASIAN ECONOMIC UNION**

**Keywords:** *economic unions, Eurasian Economic Union, deviant economic behavior, shadow economy*

Deviant behavior in economy (shadow economy, corruption, fraud) of the countries of participants of the union can become one of the obstacles for creation of more favorable conditions of further growth and mutual trade and developed economy in the countries of the Eurasian economic union. Fundamentals of shadow economy of the countries of the Eurasian economic union are the same because the former countries of the USSR traditions and skills of private business didn't disappear in the Soviet years, and were developed within shadow economy in the countries of the former Soviet Union. Especially it appeared at the beginning of 90s when society was in a condition of an anomaly, but today the percentage of shadow economy in these countries is different which makes in average about 20%.

## **ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՅՈՒՆԸ**

**Բանալի բաներ.** Ֆինանսական շուկա, վարկային կազմակերպությունների պարտավորություններ, ֆինանսական ակտիվներ, տոկոսային եկամուտներ

Վարկային կազմակերպությունները ֆինանսական շուկայի ակտիվացման գործընթացում որոշիչ դերակատարում ունեն և կարգավորում են ֆինանսական (դրամային) ռեսուրսների, ներդրումային արժեքների (ֆինանսական ռեսուրսների ձևավորման գործիքների) ներգրավման և տեղաբաշխման հարաբերությունները: Ֆինանսական շուկան բաղկացած է հետևյալ հատվածներից՝ արժույթային, արժեթղթերի, փոխատվական կամ դրամային կապիտալի, ոսկու: Այն իրենից ներկայացնում է ֆինանսական գործիքների առևտրի կազմակերպված կամ ոչ ֆորմալ համակարգ: Այս շուկայում տեղի է ունենում դրամի փոխանակում, վարկերի տրամադրում և կապիտալի մոբիլիզացում: Այստեղ հիմնական դերը խաղում են ֆինանսական ինստիտուտները, որոնք ուղղորդում են ֆինանսական միջոցների հոսքերը սեփականատերերից փոխառուներին: Ապրանքի դերում հանդես են գալիս դրամը և արժեթղթերը:

Ֆինանսական համակարգի յուրաքանչյուր օղակ իրենից ներկայացնում է ֆինանսական հարաբերությունների որոշակի ոլորտ, որոնց գործունեության համար օգտագործվում են դրամական միջոցների ֆոնդեր: Ֆինանսական համակարգը պետության և կազմակերպությունների դրամական միջոցների ֆոնդերի ձևավորման, բաշխման և օգտագործման մեթոդների և ձևերի ամբողջությունն է:

Տնտեսության կապիտալատարության անընդհատ նվազումը և դրա ապրանքայնությունը հանգեցրեց ֆինանսական համակարգի սպեկուլյատիվ բնույթի ձևավորմանը, առաջին հերթին՝ դրա դրամային և ֆոնդային շուկաների: Ներկայիս ֆինանսական շուկան չի կողմնորոշված դեպի ազգային արտադրության ֆինան-

սավորումը և ի վիճակի չէ (մի շարք պատճառներով) իրականացնել այն ընդունելի մասշտաբներով:

2006 թվականի հունվարի 1-ից ՀՀ Կենտրոնական բանկը հանդես եկավ որպես հայաստանյան ֆինանսական շուկայի կարգավորող և վերահսկիչ: Վերահսկիչ միավորի ստեղծման համար շարժառիթ հանդիսացավ շուկայում ռիսկերի կանխատեսման նպատակը: Բանկային, ապահովագրական գործունեության միավորման հեռանկարը ամբողջ աշխարհում հատուկ է ֆինանսական շուկայի զարգացմանը: Մա վերահսկողություն է պահանջում ֆինանսական շուկայի զարգացման հեռանկարների համալիր հսկողություն սահմանելու համար, շուկայի տարբեր սեկտորներին հատուկ ռիսկերի գնահատման և ֆինանսական համակարգի համընդհանուր զարգացման վրա, և ֆինանսական համակարգի համընդհանուր զարգացման վրա դրանց ազդեցության չափը որոշելու համար:


ՀՀ ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 91.1%-ը: 2014թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ գործում են 22 բանկեր, որից 21-ը առևտրային: ՀՀ ֆինանսական շուկայի այլ մասնակիցներն են.

- 32 վարկային կազմակերպություններ՝ 86 մասնաճյուղերով,
- 9 ապահովագրական ընկերություններ,
- ՀՀ արժեթղթերի շուկայի մասնակիցներ,
- 144 գրավատներ և այլն:

Ընդ որում, ՀՀ վարկային կազմակերպություններն արժեքային ընդհանուր ակտիվները կազմում են 151.1 մլրդ. դրամ, ընդհանուր պարտա-վորությունները՝ 99.7 մլրդ. դրամ, ընդհանուր կապիտալը՝ 51.4 մլրդ դրամ (տես գծապատկեր 1):

Մինչ 2011թ. համաշխարհային տնտեսությունը դեռևս ամբողջապես ճգնաժամային վտանգավոր գոտում էր, իսկ ֆինանսական համակարգերը շարունակում են մնալ զգայուն, երբ Հայաստանի ներքին տնտեսությունն աստիճանաբար մոտեցավ նախաճգնաժամային վիճակին: Տարվա կարևորագույն ձեռքբերումներից է տնտեսությունում ֆինանսական համակարգի միջնորդության զգալի խորացումը: Մասնավորապես ՀՀ ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակցի՝ բանկային

համակարգի միջնորդությունը բնութագրող ցուցանիշներից «բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ» հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ աճել է 9.6 տոկոսային կետով՝ կազմելով 54.1%, իսկ «բանկային համակարգի վարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունն աճել է 6.3 տոկոսային կետով՝ կազմելով 31.6%:




**Գծապատկեր 1.** ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքը 31.12.2014թ.

ՀՀ-ում ֆինանսական համակարգի ռիսկերը 2014թ. գտնվել են կառավարելի շրջանակներում: Բոլոր ռիսկերի մասով բանկային համակարգն ամբողջ տարվա ընթացքում ապահովել է նորմատիվային պահանջներից բարձր ցուցանիշներ, իսկ ֆինանսական կայունությունը բնութագրող որակական ցուցանիշները եղել են ընդունելի մակարդակում:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործում են 32 վարկային կազմակերպություններ, որոնցից երեքը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն, քսանվեցը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություն և երկուսը՝ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն: Վարկային կազմակերպությունների կենտրոնացվածության մակարդակը տարվա ընթացքում գրեթե չի փոխվել: Տարբեր ամփոփ ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հրշմանի կենտրոնացվածու-


թյան գործակիցը տատանվում է 0.007-ից 0.1-ի միջակայքում՝ վկայելով համակարգի թույլ կենտրոնացվածության մասին:



**Գծապատկեր 2.** Վարկային կազմակերպությունների պարտավորությունների կառուցվածքը՝ 31.12.2013թ. դրությամբ

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 30.2%, տարվա վերջում կազմել է 46.8մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը հաշվետու տարվա վերջին կազմել է 39.2%: Ոչ ռեզիդենտների փայամասնակցության 13 ՎԿ-ից 5-ը ամբողջությամբ օտարերկրյա մասնակցությամբ ընկերություններ են: Պարտավորություններն ավելացել են 50.3%-ով և կազմել 77 մլրդ դրամ: Պարտավորությունների կազմում հիմնականում ավելացել են պարտավորությունները բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 68.2%-ով, ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորությունները՝ 41.5%-ով և ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 29%-ով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները տարվա ընթացքում ավելացել են 42%-ով և տարեվերջին կազմել 123.9 մլրդ դրամ: Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերը՝ 35.4%-ով և բանկերի նկատմամբ պահանջները՝ 67.8%-ով:



**Գծանկար 3.** Վարկային կազմակերպությունների ակտիվների տեղաբաշխման ուղղությունները առ 31.12.2013թ.

### ԱՄՓՈՓՈՒՄ

Վիճակագրական տեղեկատվությամբ, ըստ տնտեսության ոլորտների, հիմնականում աճել է ֆինանսական հատվածի վարկավորումը՝ 73%-ով, գյուղատնտեսության վարկավորումը՝ 57%-ով և արդյունաբերության վարկավորումը՝ 155%-ով: Ընդհանուր վարկերում աճել են արդյունաբերության, գյուղատնտեսության, ֆինանսական հատվածի և սպառողական վարկերի տեսակարար կշիռները: Վարկային կազմակերպությունների չափսատող ակտիվների տեսակարար կշիռը հաշվետու տարվա ընթացքում նվազել է 0.3 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 2.7%: Կազմակերպություններից 30-ը աշխատել են շահույթով: ՎԿ հաշվետու տարվա շահութաբերությունն ըստ ակտիվների (RoA) կազմել է 4.6%, իսկ ըստ կապիտալի (RoE)՝ 12%: Վարկային կազմակերպությունների տոկոսային եկամուտներն աճել են 25%-ով, վարկերից ստացված տոկոսային եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում գրեթե չի փոխվել՝ տարեվերջին կազմելով 78%: Ոչ տոկոսային եկամուտներն ավելացել են 49%-ով՝ հիմնականում պայմանավորված ստացված միջնորդավճարների աճով: Տոկոսային ծախսերն ավելացել են 24%-ով՝ հիմնականում պայմանավորված ժամկետային փոխառությունների դիմաց վճարվելիք տոկոսային ծախսերի աճով:

**Баласян С.А.**  
соискатель Северного университета

## СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ФИНАНСОВЫХ ПОКАЗАТЕЛЕЙ КРЕДИТНЫХ ОРГАНИЗАЦИЙ

**Ключевые слова:** финансовый рынок, обязательства кредитных организаций, финансовые активы, процентные доходы

Статистика финансовых показателей кредитных организаций показывает, что кредитные организации РА в основном формируют прибыль и поддерживают тенденцию сокращения сомнительных дебиторских задолженностей. Более того, прибыльность кредитных организаций по активам (RoA) достигается уровня 4.6%, а прибыльность по капиталу (RoE) - 12%. Однако вместе с тем, замечается тенденция роста непроцентных доходов, что и формирует риски снижения экономической активности кредитных организаций.

**Balasyan S.H.**  
Post Graduate Participant at the Northern University

## STATISTICS ANALAYZING OF FINANCIAL RATIOS IN THE CREDIT ORGANIZATIONS

**Key words:** financial markets, liabilities of credit organizations, monetary assets, interest incomes

The statistics of credit organization of RA is performing, that mainly of this business entities is working by profit and keeping tendency for declining bad debts. Besides, the profitability by assets (RoA) is presenting in 4.6% and profibility by capital accordingly is keeping in 12% level. At the same time, is activating tendency of raising non interests income, which is making risks for reduction economic activity of credit organizations in RA.

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ  
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Բանալի բաներ.** բանկային փոխանցումներ, թղթակցային հաշիվներ, անկանխիկ գործառնություններ, դեբետային գործիքներ, Ֆորվարդ, արտարժույթային սվոփ:

Արժույթային գործառնությունները արժույթային շուկայում արտարժույթի առք ու վաճառքի հետ կապված բանկային գործառնություններն են: Արժույթային շուկան երկրագնդի, թերևս, առավել ինտեգրացված և մրցակցային շուկան է, որի հիմնական մասնակիցներն են առևտրային բանկերը, Կենտրոնական բանկը, բազմազգային ընկերությունները, ներդրումային հիմնադրամները:

ՀՀ-ում արժույթային գործառնությունները կարգավորվում է «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով: Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 8-րդ կետի՝ արժույթային գործարքներն այն գործարքներն են, որոնք կապված են՝

ա) արժույթային արժեքների սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների փոխանցման, ինչպես նաև որպես վճարման միջոց արտարժույթով վճարային փաստաթղթերի օգտագործման հետ,

բ) որպես վճարման միջոց արտարժույթի, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության արժույթի օգտագործման հետ,

գ) արժույթային արժեքների՝ օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք փոխադրման, ներմուծման և առաքման, Հայաստանի Հանրապետության տարածքից դրանց փոխադրման, արտահանման և առաքման հետ:



Արժութային գործառնությունները կարելի է դասակարգել՝ ելնելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքից.

- ընթացիկ արժութային գործարքներ
- կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքներ

Համաձայն վերոնշյալ օրենքի 9-րդ կետի՝ ընթացիկ արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող գործարքները կամ վճարումները՝ անկախ դրանց գումարային մեծությունից (բացառությամբ սույն կետի «գ» ենթակետում նշված դեպքերի), դրանք են՝

ա) ապրանքների (գույքի) օտարման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման, ծառայությունների մատուցման դիմաց կատարվող վճարումները, ինչպես նաև կարճաժամկետ վարկերի և փոխառությունների տրամադրումը,

բ) վարկերի և փոխառությունների դիմաց վճարվող տոկոսները և այլ ներդրումների դիմաց վճարվող շահաբաժիններն ու այլ վճարումները,

գ) վարկերի, փոխառությունների և ուղղակի ներդրումների մարմանն ուղղված փոքրածավալ գումարների վճարումները,

դ) ոչ առևտրային բնույթի փոխանցումները Հայաստանի Հանրապետության տարածք և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ներառյալ՝ աշխատավարձի, կենսաթոշակների, ժառանգությունների, ֆինանսական օգնության, նվիրատվությունների փոխանցումները.

Կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող այն գործարքները, որոնք չեն համարվում ընթացիկ արժութային գործարքներ:

2014թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում գործում են 21 առևտրային բանկեր՝ 489 մասնաճյուղով և մեկ զարգացման բանկ (Համահայկական բանկ): Դիտարկենք ՀՀ առևտրային բանկերի արժութային գործառնությունների տեսակները, դրանց ցուցանիշների դինամիկան 2013-2014թթ. և դրանց ազդեցությունը առևտրային բանկերի գործունեության վրա:

Առևտրային բանկերի արժույթային գործառնությունները բաժանվում են մի քանի տեսակների.

1. Միջազգային հաշիվներով գործառնություններ: Այս գործարքները կապված են ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման հետ: Արտաքին առևտրում կիրառում են այնպիսի հաշիվներ, ինչպիսիք են փաստաթղթային ակրեդիտիվը, բանկային փոխանցումները:

Աղյուսակ 1<sup>50</sup>

| Ժամկետ      | Ակրեդիտիվներ <sup>1</sup> |                        |
|-------------|---------------------------|------------------------|
|             | մլն ՀՀ դրամ               | կշիռը <sup>3</sup> (%) |
| <b>2013</b> |                           |                        |
| Դեկտեմբեր   | 14059                     | 0.5                    |
| <b>2014</b> |                           |                        |
| Հունվար     | 14044                     | 0.5                    |
| Փետրվար     | 16686                     | 0.6                    |
| Մարտ        | 16582                     | 0.6                    |
| Ապրիլ       | 19486                     | 0.7                    |
| Մայիս       | 20084                     | 0.7                    |
| Հունիս      | 22653                     | 0.8                    |
| Հուլիս      | 22841                     | 0.8                    |
| Օգոստոս     | 26512                     | 0.9                    |

Ելնելով ՀՀ ԿԲ ամսական տեղեկագրի տվյալներից՝ դիտարկենք 2014թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ առևտրային բանկերի իրականացրած ակրեդիտիվների ծավալը և դրանց կշիռները բանկերի ընդհանուր ակտիվներում: 2013թ դեկտեմբեր ամսվա համեմատ 2014թ. հունվար-օգոստոս ամիսներին

<sup>50</sup> ՀՀ ԿԲ ամսական տեղեկագիր 2014թ. և 2013թ.

ակրեդիտիվների ծավալը և դրանց կշիռը աճել են օգոստոս ամսին կազմելով համապատասխանաբար 26512 մլն. դրամ և 0,9%:

Էլեկտրոնային վճարային հանձնարարականներով դրամական փոխանցումների ընդհանուր ծավալները ՀՀ առևտրային բանկերում 2014 թ առաջին և երկրորդ եռամսյակներին 2013թ. առաջին և երկրորդ եռամսյակների համեմատ աճել են 26% և 86%-ով: ՀՀ առևտրային բանկերում ԿԲ-ի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալում 2013թ. և 2014թ առաջին և երկրորդ եռամսյակներում մեծ կշիռ են կազմել քարտերով կատարված գործարքների քանակը և ծավալները, որոնք 2013թ. չորրորդ եռամսյակին առաջին առամսյակի համեմատ աճել են՝ կազմելով 320,918,000 դրամ (42%), իսկ 2014թ. առաջին կիսամյակին քարտերով կատարված գործարքների ծավալը 2013թ. առաջին կիսամյակի նկատմամբ՝ 13%-ով:

2. Հաճախորդների արժույթային հաշիվների բացումը և վարումը

3. Արտասահմանյան բանկերի հետ թղթակցային հարաբերությունների հաստատումը

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են 50.7 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են 8%-ով: 2014թ առաջին եռամսյակին մեկ վճարման միջինը կազմել է 4 մլն. դրամ, որը 2013թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է մոտ 400 հազար դրամով: Միաժամանակ, բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներն արտասահման կազմել են 59 մլրդ. դրամ. նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 5%-ով<sup>51</sup>:

4. Փոխարկային գործառնությունները: Կոնվերսիոն գործառնությունները դրանք կանխիկ և անկանխիկ դրամի նկատմամբ արտարժույթի կանխիկ և անկանխիկ առք ու վաճառքի գործառնություններն են:

---

<sup>51</sup> www.cba.am ՀՀ ԿԲ բանքեր 2014թ. առաջին եռամսյակ:

Դիտարկենք 2014թ. ՆԱՄԴԱՔ ՕԷՄԵՔՍ Արմենիայում արտարժույթային գործառնությունների ծավալները հունվար-օգոստոս ամիսների կտրվածքով<sup>52</sup>:

**Աղյուսակ 2**

| Ամիս     | Արտարժույթ | Գործարքների քանակ | Գործարքների միջին կշռված փոխարժեք | Ծավալը արտարժույթով |
|----------|------------|-------------------|-----------------------------------|---------------------|
| Հունվար  | USD        | 285               | 407.34                            | 51,480,000          |
| Փետրվար  | USD        | 583               | 412.35                            | 96,950,000          |
| Մարտ     | USD        | 603               | 414.22                            | 104,000,000         |
| Ապրիլ    | USD        | 281               | 414.44                            | 41,400,000          |
| Մայիս    | USD        | 306               | 413.33                            | 44,080,000          |
| Հունիս   | USD        | 375               | 409.53                            | 54,600,000          |
| Հուլիս   | USD        | 553               | 407.14                            | 75,420,000          |
| Օգոստոս  | USD        | 395               | 410.04                            | 55,870,000          |
| Ընդամենը | EUR        | -                 | -                                 | -                   |
| Ընդամենը | USD        | 3381              | 411.19                            | 523,800,000         |

2014թ. հունվարին ՀՀ ֆոնդային բորսայում արտարժույթով կնքվել է 285 գործարք, բոլորը՝ ԱՄՆ դոլարով: Կնքված գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 20,969,969,084 դրամ (51,480,000 USD): 1-ին եռամսյակում՝ մարտին առևտրային բանկերի արտարժույթային գործարքների քանակը և ծավալը հունվար ամսվա նկատմամբ աճել է համապատասխանաբար 111% և 102%-ով: Ապրիլին, սակայն, տեղի է ունեցել արտարժույթային գործարքների քանակի և ծավալների կտրուկ նվազում համապատասխանաբար 53% և 60%-ով: Հունիս, հուլիս ամիսներին աճել են, իսկ օգոստոս ամսին նվազել՝ կազմելով 55870000 USD:

2013թ. հունվար-օգոստոս ամիսների համեմատ 2014թ հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ ֆոնդային բորսայում դոլարով արտարժույթային գործարքները աճել են 403-ով, իսկ ծավալները՝ 152,286,000 USD-ով:<sup>53</sup>

2014թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ ֆոնդային բորսայում եվրոյով արտարժույթային գործարքներ տեղի չեն ունեցել:

Նշենք, նաև, որ ելնելով ՀՀ ԿԲ-ի 2014թ. ամսական տեղեկագրի տվյալներից 2014թ. հունվար-օգոստոս ամիսներին արժու-

<sup>52</sup> [www.cba.am](http://www.cba.am) ՀՀ ԿԲ ամսական տեղեկագիր 2014թ.:

<sup>53</sup> [www.nasdaqomx.am](http://www.nasdaqomx.am) Տեղեկագրեր 2013թ. և 2014թ.:

թային շուկայում առևտրային բանկերի իրականացված արտար-  
ժույթի՝ մասնավորապես դոլարի առքի գործառնությունների  
ընդհանուր ծավալում միջբանկային գործառնությունները կազմել  
են 2,5%, ֆոնդային բորսայում գործառնությունները՝ 13,5%, ներբա-  
նկային գործառնությունները՝ 84%:

Եվրոյի առքի գործառնությունների ընդհանուր ծավալում  
ներբանկային գործառնությունները կազմել են 100%:

Արժութային շուկայում առևտրային բանկերի իրականաց-  
րած դոլարի վաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալում  
միջբանկային գործառնությունները, ֆոնդային բորսայում գոր-  
ծառնությունները և ներբանկային գործառնությունները կազմել են  
համապատասխանաբար՝ 1,9%, 11,1% և 87%:

Եվրոյով ներբանկային գործառնությունները կազմել են 100%:

ՀՀ արժութային շուկայում առևտրային բանկերի իրակա-  
նացրած արտարժույթի գործառնությունների ընդհանուր ծավալում  
ներբանկային գործառնությունների բարձր տոկոսային ցուցանիշը,  
ինչպես նաև եվրոյով միջբանկային և ֆոնդային բորսայում  
գործառնությունների բացակայությունը խոսում են ՀՀ-ում արտար-  
ժութային շուկայի և առավել ևս արժութային բորսայի զարգացման  
ցածր մակարդակի մասին:

5. Արժութային միջոցների ներգրավման և տեղաբաշխման  
գործառնություններ, որոնք ներառում են հետևյալ գործառ-  
նությունները

- Ավանդների ներգրավում
- Վարկերի տրամադրում

Այս գործարքները ՀՀ առևտրային բանկերի համար հա-  
մարվում են հիմնական գործարքներ և եկամտաբերության և  
հաճախորդների սպասարկման քանակության տեսանկյունից:

## ԱՍՓՈՓՈՒՄ

ՀՀ առևտրային բանկերի արժութային գործառնությունների,  
ինչպես նաև ՀՀ արժութային շուկայում առևտրային բանկերի  
իրականացրած արտարժութային գործառնությունների վիճա-  
կագրությունը վկայում է, որ ՀՀ արժութային շուկայում առևտրային  
բանկերի իրականացրած արտարժույթի գործառնությունների  
ընդհանուր ծավալում մեծ կշիռ են կազմում ներբանկային

գործառնությունները, ինչպես նաև արժութային շուկայում բացա-  
կայում են եվրոյով միջբանկային գործառնությունները և ֆոնդային  
բորսայում իրականացվող գործառնությունները: Ուսումնասիրու-  
թյան և վերլուծության արդյունքում ստացված տոկոսային ցուցա-  
նիշները խոսում են ՀՀ-ում արտարժութային շուկայի և առավել ևս  
արժութային բորսայի զարգացման ցածր մակարդակի մասին:

**Смбатян Ш.А.**

Соискатель Северного университета

## **СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ВАЛЮТНЫХ ОПЕРАЦИЙ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ**

**Ключевые слова:** банковские переводы, корреспондируемые счета, безналичные операции, дебетовые инструменты, форвард, валютный своп

Статистический анализ валютных операций коммерческих банков РА свидетельствует, что в рамках валютных сделок большой удельный вес занимают внутрибанковские корреспонденции и операции в фондовых биржах. Более того, полученные в ходе анализа процентные индикаторы свидетельствуют о сравнительно слабом уровне развития валютного рынка и биржевых сделок в РА.

**Smbatyan Sh. A.**

## **STATISTICS ANALAYZING OF CURRENCY TRANSACTIONS IN COMMERCIAL BANKS**

**Key words:** banking transfers, corresponding accounts, non -cash operation, debit tools, forwards, currency swap

Statistical analyzing of currency transaction in commercial banks of RA is coming to show us, that in framework of currency deals is mainly presenting entrancing transactions and agreements of exchange markets. In addition, the find out indicators of percentage indicators in process of analyzing is confirming about of comparatively low level of development currency exchange market of RA.

**Շրիցյան Ս.Ս.**

Աբովյանի անվ. պետական մանկավարժական  
համալսարանի պրոֆ., բ.գ.դ.,  
hayoclezu18mail.ru

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՆԻՍՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ  
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**


**Բանալի բառեր.** Բոլոնիայի գործընթաց, կրթության հանրային ֆինանսավորում, գիտության ֆինանսավորում, կրթավճարներ

Լյուվեն/Լուվեն-լա-Նյուվի համաժողովում ներկայացվեցին գալիք տասնամյակում բարձրագույն կրթության առանջնահերթությունները, որոնցից էր նաև բարձրագույն կրթության ֆինանսավորումը: Մասնավորապես, արձանագրվեց, որ բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների ներկա փուլում մեծանում է կրթության նկատմամբ հանրային պատասխանատվության աստիճանը: Այդ շրջանակներում ևս մեկ անգամ ընդգծվեց, որ հանրային ֆինանսավորումը մնում է հիմնական գերակայություն ինչպես արդար մուտքը դեպի ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատություններ երաշխավորելու, այնպես էլ օժանդակելու դրանց հետագա կայուն զարգացմանը:

ԵԲԿՏ-ում ընդգրկված երկրները հիմնականում բարձրագույն կրթության ֆինանսավորումը համալրում են ոչ թե հանրային, այլ մասնավոր ռեսուրսների հաշվին: Սակայն, Բոլոնիայի գործընթացը առավել կարևորություն է տալիս հանրային ֆինանսավորմանը, համարելով այն որպես երաշխիք սոցիալական արդարության, կրթության կայուն զարգացման ապահովման համար:

Այս ուղղությամբ հետազոտությունները կատարվել են մի շարք ցուցանիշների կիրառմամբ, ինչպիսիք են մասնագիտական կրթության հանրային ֆինանսավորման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, մասնագիտական կրթության հանրային ֆինանսավորման տեսակարար կշիռը բյուջեում, մեկ ուսանողի հաշվով մասնագիտական կրթության հանրային ֆինանսավորման չափաբաժինը և այլն:

Այսպես, 2013 թվ. մասնագիտական կրթության հանրային ֆինանսավորման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ԵԲԿՏ-ի արևմտյան հատվածում առավելագույնը կազմել է Դանիայում և Նորվեգիայում՝ ավելին քան 2%, նվազագույնը՝ Սլովակիայում 0.7%, իսկ միջինը կազմել է 1.15 % Հատկանշական է, որ ՀՆԱ-ում գիտության և հետազոտությունների զարգացման հանրային ծախսերի տեսակարարը կշիռը ըստ վերլուծվող երկրների համահունչ է մասնագիտական կրթական ծախսերին (տես գծապատկեր 1):




**Գծապատկեր 1.** Բարձրագույն կրթության և հետազոտությունների ծախսերի հանրային ֆինանսավորման տեսակարար կշիռը 2013 թվ (%)<sup>54</sup>

Ելնելով այն հանգամանքից, որ որոշ երկրների ՀՆԱ-ն կարող է առաջանցիկ աճի բարձր տեմպեր ունենալ և դրանով իսկ, կրթական ծառայությունների հանրային ծախսերի տեսակարար կշիռը նրանում նվազել: Եվրոստատը հաշվառում է նաև մասնագիտական կրթության հանրային ֆինանսավորման տեսակարար կշիռը բյուջեում, որն ի դեպ 2013 թվ. ԵԲԿՏ-ում ամենաբարձր

<sup>54</sup> The European Higher Education Area in 2014: Bologna Process Implementation Report, page 24, <http://eacea.ec.europa.eu/education/eurydice>



մակարդակն է ապահովվել Կիպրոսում և Նորվեգիայում (տես գծապատկեր 2.), կազմելով 4.5-5%, իսկ Միացյալ Թագավորությունում, Իտալիայում, որոնք տնտեսական զարգացվածության բարձր աստիճան ունեն, այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 1.69%: և 1.76 %: Համեմատության համար նշենք, որ վերջին տարիներին ՀՀ-ում պետությունից կրթության և գիտության ծախսերի ֆինանսավորումը առավել մեծ տեսակարար կշիռ ունի (շուրջ 12%), սակայն դրա առյուծի բաժինը հանրակրթական ծախսերն:



**Գծապատկեր 2.** Հանրային ծախսերի կազմում բարձրագույն կրթության և հետազոտությունների ծախսերի ֆինանսավորման տեսակարար կշիռը 2013 թվ (%)<sup>55</sup>

ՀՀ բուհական համակարգում հիմնարար գիտական հետազոտությունները համեմատաբար թույլ են զարգանում՝ առավելապես իրենց տեղը զիջելով կիրառական հետազոտություններին: Ավելին, պետական հոգաձությունը այս ոլորտում այնքան էլ նշանակալից չէ, և գիտական հետազոտությունների էական մասը կատարվում է արտաքին դրամաշնորհների հաշվի:

Կարևոր ցուցանիշ է նաև մեկ ուսանողի հաշվով մասնա-գիտական կրթության հանրային ֆինանսավորման տարեկան մակարդակը, որը ամենաբարձրն է Շվեդիայում, Նորվեգիայում, Հո-

<sup>55</sup> Նույն տեղը:

լանդիայում, Դանիայում (ավելի քան 13 000 եվրո), իսկ Արևելյան եվրոպայում համաեմատաբար ցածր ցուցանիշներով է հանդես գալիս՝ մինչև 5000 եվրո: Այդ ցուցանիշի միջինացված մեծությունը ԵԲԿՏ-ում ներկայումս 8087 եվրո է:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Բոլոնիայի գործընթացի պահանջը առավելապես հանրային պատասխանատվության աստիճանով և պետական ծախսերով կայուն բարձրագույն մասնագիտական կրթություն ապահովման ոլորտում դեռևս կատարելիության չի հասել և տարբեր աստիճաններով է իրագործվում ԵԲԿՏ-ում: Հատկապես, հանրային միջոցներով բարձրագույն կրթության ֆինանսավորման խզում է նկատվում արևելյան և արևմտյան եվրոպական կրթական տարածաշրջաններում, որի համահարթումը դեռ երկար ժամանակ կպահանջի, կապված Բոլոնիայի համաձայնագրում ընդգրկված երկրների տնտեսական զարգացվածության էական տարբերությունների հետ:

**Erichyan S.S.**

Armenian Pedagogical State University, Doctor of Science

### STATISTICS OF HIGHER EDUCATION FINANCING IN BOLOGNA PROCESS FRAMEWORK

**Key words:** Bologna process, public sources for education financing, financing of scientific activity, education fees

The Bologna process requirements in order to keeping stable higher education activity mainly by public sources and responsibilities' is not satisfied in current, and having difference levels implementation in various countries within European Higher Education Area. Specially, is performing the gap of financial sources of education between western and eastern countries, which is related mainly to different economic development points of countries within Bologna agreement framework.

**Ерицян С.С.**

Армянский государственный педагогический университет  
доктор филологических наук

## **СТАТИСТИКА ФИНАНСИРОВАНИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В РАМКАХ БОЛОНСКОГО ПРОЦЕССА**

**Ключевые слова:** Болонский процесс, общественное финансирование образования, финансирование науки, плата за образование

В настоящее время требования Болонского процесса по поддержанию стабильного образования по государственным ресурсам и ответственностью не осуществляются полноценным образом, в различных степенях реализовываясь в Европейском пространстве высшего образования. Особенно, наблюдается большой разрыв в процессе общественного финансирования образования восточных и западных стран Европы, что в основном обусловлено разными темпами экономического развития стран Болонского соглашения.

**Անդրեասյան Հ.Հ.**

Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ասպիրանտ  
andreasyan44@yandex.ru

## **ՈՒՄԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր.** Բազել-3, կապիտալի համարժեքություն, ֆինանսական ճգնաժամ, բանկի կայունություն

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի (2008 թ) արդյունքում պարզ դարձավ, որ բանկային համակարգը դեռևս ռիսկերի կառավարման հետ կապված լուրջ խնդիրներ ունի: Փորձը ցույց տվեց, որ հատկապես նվազ կառավարելի էին այսպես կոչված «վարակիչ ռիսկերը» (contagion risks), երբ գործարարության ֆինանսական ոլորտում ձևավորվող ոչ բարենպաստ գործընթացները արագորեն տարածվում էին տնտեսության իրական ոլորտի վրա, ընդգրկելով բազմաբնույթ ճյուղեր, տնտեսական

տարածաշրջաններ և անգամ երկրներ, դրանով իսկ գրեթե անհնար էր դառնում վերահսկողական ինտեգրացիան և համատեղ կարգավորման գործընթացը: Այս պարագայում, արդեն 2011 թվ. մշակվեց «Բազել- III»- համաձայնագրով ներկայացված կապիտալի բավարարության և լուծարելիության միջազգային նոր չափանիշներ, կանխարգելելու համար ֆինանսատնտեսական ճգնաժամի ծագման վտանգը:

Սակայն, մինչ այդ, դեռևս 1970-ական թվ. սկզբին միջազգային ֆինանսական շուկայում հավասարակշռության խախտումը և արևմտագերմանական Herstatt բանկի սնանկացումը ստիպեցին զարգացած երկրներին (G1 – խումբ)՝ միջազգային հաշվարկային բանկի (BIS) հիմքով 1974 թվ. ստեղծելու բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեն, որը միջազգային չափանիշներ էր տրամադրում բանկային վերահսկողության ոլորտում: Ներկայումս Բազելյան կոմիտեին անդամակցում են շուրջ երեսուն երկիր, որոնք կոմիտեի կողմից ընդունած բանկային վերահսկողության նորմերն ու առաջարկությունները տեղայնացնում են ազգային տնտեսության մեջ, հատկապես բանկային կապիտալի բավարարության, գործունեության ռիսկայնության, կազմակերպությունների լուծարելիության գնահատման ոլորտներում:

Հատկապես վերջին տարիներին կոմիտեի առանցքային գործունեությունը ուղղված է բանկային կապիտալի բավարարության գնահատականներին: Դեռևս անցած դարի 80-ական թվականներին պարզ դարձավ, որ միջազգային բանկերի ակտիվների կազմում սեփական կապիտալի մասնաբաժինը կայուն չէ և անհրաժեշտություն է ծագել երկրների միջև համաձայնեցնելու ակտիվների ռիսկայնության գնահատման մոտեցումները: Արդյունքում, 1988 թ. ընդունվեց Բազելյան առաջին համաձայնագիրը՝ “Կապիտալի չափման միջազգային կոնվերգենցիան” անվանմամբ, որը պատմության մեջ մտավ «Բազել-I» փաստաթղթային ձևակերպմամբ:

Համաձայն այդ փաստաթղթի, կապիտալի համարժեքության նվազագույն արժեքը ռիսկով կշռված ակտիվների նկատմամբ կազմեց.

սեփական կապիտալ \_\_\_\_\_

ռիսկով կշռված ակտիվներ

Մինչ այժմ այս բանաձևում ոչինչ չի փոխվել, վերանայվել են միայն սեփական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների արժեքնորման մոտեցումները:<sup>56</sup> Սկզբնական շրջանում ի նկատի էր առնվում միայն վարկային ռիսկը, այնուհետև 1995 թ. դրան ավելացվեցին ածանցյալ գործիքները, իսկ 1996 թ. այդ շրջանակը ավելի ընդլայնվեց՝ ընդգրկելով նաև շուկայական ռիսկերը: Կոմիտեն 2004 թ. հրապարակեց մի նոր փաստաթուղթ, որը շրջանառության մեջ մտավ Բազել II անվանմամբ և շեշտադրում կատարվեց կապիտալի կարգավարման բարելավման մոտեցումներին; Մասնավորապես, կապիտալի բավարարության գնահատման ժամանակ հաշվի առնվեց գործառնական ռիսկը և առանցքային համարվեց ռիսկ մենեջմենթի բարելավման խթանումը:

Հատկանշական էր, որ Բազել II-ի շրջանակում գործառնական ռիսկը համադրվում էր ոչ թե ակտիվների, այլ եկամուտների հետ և ռիսկերի կառավարման տեսանկյունից նորամուծություն էր համարվում բացի վերահսկող կազմակերպության կողմից սահմանված տնտեսական նորմատիվների կիրառումից՝ զուգահեռաբար ներբանկային սեփական մեթոդաբանության և կառավարման մոդելների կիրառումը: Արդեն 2006 թվ. հրատարակվեց Բազել II-ի լիարժեք տարբերակը, որում ոչ միայն ավելացան բանկերի ներդրումային պորտֆելի ռիսկերի կառավարման մոտեցումները, այլև ընդգծվեցին գործող Բազել I-ին ինտեգրման ուղիները:

Սակայն, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքը համընկավ Բազել II-ի ներդրման բուռն ժամանակահատվածին և գործնականում ցույց տվեց դեռևս նոր կյանքի կոչված ռիսկ մենեջմենթի ձախողումը՝ հիպոթեկային վարկավորման գործընթացում: Բնականաբար, նման իրավիճակում կասկածի տակ դրվեց Բազել II-ի որոշ դրույթների կիրառման նպատակահարմարությունը և անհրաժեշտություն ծագեց ռիսկերի կառավարման նոր ռեգուլյատիվների մշակման համար, քանի որ հիպոթեկային ճգնաժամի պայմաններում դժվարությամբ էին լուծվում բանկերի իրացվելիության հիմնախնդիրները:

Այս նպատակով, 2009 թվ. հուլիսին Կոմիտեն հրատարակեց “Բազել 2.5” փաստաթուղթը, որում լուրջ ուշադրություն դարձվեց

---

<sup>56</sup> [www.cba.am](http://www.cba.am)

ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառման ռիսկերի կառավարմանը և անվտանգության նորմերի՝ սեքյուրիթիզացիայի սահմանմանը: Այդ փաստաթղթերը հավանության արժանացավ G20 երկրների խմբի գագաթաժողովում, իսկ արդեն 2010 թվ նոյեմբերին Սեուլում հենց այդ երկրները որոշում կայացրեցին կապիտալի բավարարության և լուծարելիության որոշման նոր մոտեցումների ու կիրառման ժամանակացույցի մասին, նախադրյալներ ստեղծելով առաջիկա տարիներին Բազել III-կիրառման համար (տես աղյուսակ 1):

Բազել III փաստաթղթի հիմնական առաջարկություններ են հանդիսանում.

1) կապիտալի կայունության և որակի բարձրացումը, ներմուծելով նաև “առաջին մակարդակի բազային կապիտալ” տերմինը,

2) վարկերի, ածանցյալ գործիքների, ՌԵՊՈ գործարքներին առնչվող կապիտալի ռիսկի փոխատուցման պահանջների խստացումը,

3) լուծարելիության ցուցանիշի ներմուծումը՝ ի լրացում Բազել II-ով նախատեսված կապիտալի համարժեքության ցուցանիշի,

4) լուծարելիության նվազագույն մակարդակների սահմանում՝ երկարաժամկետ և կարճաժամկետ նկատառումներով,

5) ճգնաժամային իրավիճակներում կապիտալի ռեզերվային պաշարների օգտագործման նպատակով բուֆերային կապիտալի ձևավորում:<sup>57</sup>

Առաջին մակարդակի կապիտալի կայունությունը և մշտապես առկայությունը հանդես են գալիս որպես ֆինանսական ճգնաժամին դիմակայման երաշխիքներ, ուստի դրանք չեն ենթարկվում ժամանակագրական արձանագրման, այլապես, ներդրողները կսպասեն հարմար պահի և միակողմանի շահադիտական ակտիվություն կցուցաբերեն միայն այն պահին, երբ բանկը կունենա արտաքին ներդրումային ռեսուրսներին դիմելու առավելագույն պահանջ: Այս մոտեցումը առանցքային է համարվում

---

<sup>57</sup> Basel Commity on Banking Supervision, Report to G20 Leaders on Basel III implementation, June 2012, [//www.bis.org/publ/bcbs.220.pdf](http://www.bis.org/publ/bcbs.220.pdf)

Բազել III-ով սահմանված կապիտալի որակավորման և ճանաչման գործընթացում: Առաջին մակարդակի բազային կապիտալի նվազագույն չափը, որը կարող է կազմված լինել միայն սովորական բաժնետոմսերից, չբաշխված շահույթից, համապատասխան պահուստներից, պետք է խթանի բանկերին սահմանափակելու արտոնյալ բաժնետոմսերի թողարկումը:

### Աղյուսակ 1

Բազել III-ի կարգավորչների կիրառման ժամանակացույցը<sup>58</sup>

|                                            | 2012          | 2013                       | 2014 | 2015  | 2016     | 2017              | 2018  | 2019  |
|--------------------------------------------|---------------|----------------------------|------|-------|----------|-------------------|-------|-------|
| Առաջին մակարդակի բազային կապիտալ / RWA, %  |               | 3.5                        | 4.0  | 4.5   | 4.5      | 4.5               | 4.5   | 4.5   |
| Առաջին մակարդակի կապիտալ / RWA, %          | 4.0           | 4.5                        | 5.5  | 6.0   | 6.0      | 6.0               | 6.0   | 6.0   |
| Մեփական կապիտալ / RWA, %                   | 8.0           | 8.0                        | 8.0  | 8.0   | 8.0      | 8.0               | 8.0   | 8.0   |
| Բուֆերային կապիտալ / RWA, %                |               |                            |      |       | 0.625    | 1.25              | 1.875 | 2.5   |
| Հակացիկլային կապիտալ / RWA, % <sup>2</sup> |               |                            |      |       | 0.625    | 1.25              | 1.875 | 2.5   |
| Ֆինանսական լծակ                            | դիտարկում     | Թեստավորում՝ մակարդակով 3% |      |       | Ճշգրտում | Ճշգրտված տվյալներ |       |       |
| Կարճաժամկետ լուծարելիության նորմատիվ       | Մշտադիտարկում |                            |      | ≥100% | ≥100%    | ≥100%             | ≥100% | ≥100% |
| Զուտ կայուն ֆինանսավորման ցուցանիշ         | Մշտադիտարկում |                            |      |       |          |                   | >100% | >100% |

<sup>58</sup> Basel III New Capital and Liquidity Standards – FAQs, // [www. Moodysanalytics.com/Basel-III](http://www.Moodysanalytics.com/Basel-III)

## ԱՄՓՈՓԻՍ

Բազել III համաձայնագրով ներմուծվեց նոր տերմին “առաջին մակարդակի կապիտալ” անվանումով՝ բաղկացած երկու բաղադրիչից: Առաջին մակարդակի կապիտալի գլխավոր խնդիրը բանկի սովորական գործունեության ընթացքում ձևավորված վնասների փոխհատուցումն է (մինչ սնանկցումը կամ լուծարումը), որը փաստորեն իրականացվում է ձևավորված պահուստի հաշվին՝ առանց արտաքին միջավայրից դրամական ներարկումների կամ ներդրողների: Նման պայմաններում բանկերը առավել հիմնավոր են իրականացնում ռիսկային կորուստների կանխարգելման գործառնությունները:

**Андресаян Г.Г.**

Аспирант армянского национального аграрного университета

## ВОПРОСЫ ПРЕДОТВРАЩЕНИЯ РИСКОВЫХ ПОТЕРЬ В КРЕДИТНЫХ ОРГАНИЗАЦИЯХ

**Ключевые слова:** Базель 3, достаточность капитала, финансовый кризис, устойчивость банка

По соглашению Базель-3 для банковского сектора была внедрена новая категория «капитал первой степени», которая имеет две составляющие. Главная задача первого уровня капитала, это возмещение ущерба банка от обычной деятельности (до банкротства или ликвидации), что фактически осуществляется за счет сформированного резервного фонда без вмешательства дополнительных денежных внедрений и поступлений извне. В этих условиях банки более основательно относятся к процессам предотвращения рискованных потерь.

**Andreasyan H.H**

Researcher at Armenian National Agrarian University

## PREVENTION OF RISKS LOSSES IN CREDIT ORGANIZATIONS

**Key words:** Bazel-3, capital adequacy, financial crisis, bank stability

According to Bazel-3 agreement for banking sector is practically implemented new category «first pillar of capital», which is complied



with two parties. The main role of first level is to cover losses of bank from usual activity (previous to bankruptcy or liquidation), which is factually is making by reserved sources of banks, without of outside mediation additional investments and cash inflows. In that case the banks making more valid outlook to management risk prevention process.

**Պետրոսյան Ա. Ա.**

Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի ասպիրանտ  
anushik13@gmail.com

### **ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀՀ-ում**

**Բանալի բառեր.** ներդրումային միջավայր, ներդրումային ուղղություններ, ներդրումային գրավչություն, տնտեսական ազատության ինդեքս

Օտարերկրյա ներդրումների ներգրավման կարևոր մասը դրանց խթանումն է: Ջարգացած և զարգացող երկրների համար այս քաղաքականությունը էականորեն տարբերվում է: Արդյունաբերական զարգացած երկրների պրակտիկայում՝ օտարերկրյա ներդրումների խթանման մեջ գերակշռում են ֆինանսական ռեսուրսները: Ջարգացող երկրների համար անցումային տնտեսությունում, վերահսկիչ և հարկային միջոցների խթանումն է: Ավելի հաճախ օգտագործվում են արտոնյալ մաքսային տուրքերը՝ ուղղված ներմուծվող արտադրության միջոցներին՝ կորպորատիվ եկամտահարկերի իջեցում, հարկազերծում: Ջարգացող անցումային տնտեսություն ունեցող երկրներում՝ իրացման ժամանակ պետական քաղաքականության խթանումը ներգրավում է օտարերկրյա ներդրումները՝ ելնելով հարկային խթանումից:

Որպես կանոն կիրառվում են հետևյալ հարկային արտոնությունները՝ հարկային արձակուրդ (լրիվ կամ մասնակի ազատում հարկերից), ներդրումային զեղչեր (մաքսատուրքերի իջեցում), հարկային վարկ (եկամտահարկից ֆիրմայի ներդրումային ծախսերի մի մասի հանում այն պայմանով, որ վարկը օգտագործվի, որպես կապիտալ ներդրում), արագացված ամորտիզացիա (եկամտի մեծ մասը համարվում է, որպես արտադրության ծախս և ազատվում հարկումից), ինվեստիցիոն սուբսիդիա (լայնատեսակ ներդրումային զեղչեր կամ հարկային վարկեր), արտոնություն

անուղղակի հարկումներում (մաքսատուրքերի իջեցում, հումքի և կապիտալատարր ապրանքների՝ ԱԱՀ-ից ազատում, պայմանական անմաքս ներմուծում, որը օգտագործվում է արտահանման համար և համարվում է ավելի ընդունելի իրավական պրակտիկայում):

ՀՀ Վիճակագրության ազգային ծառայությունների տվյալների 1988-2000թթ կեսերը Հայաստանում իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները կազմում են մոտ 540 մլն ԱՄՆ դոլար: 2000 թվականին հանրապետությունը օտարերկրյա ներդրումների ծավալը իրական սեկտորում (չհաշված պետական կառավարման բանկային սեկտորի կողմից ստացված վարկերից) կազմել է 190129,9 հազ. ԱՄՆ դոլար, որոնցից ուղղակի ներդրումներն են 120060, հազ. ԱՄՆ դոլար: 2000թ-ից մինչև 2006թ. Հայաստանում օտարերկրյա ներդրումների ընդհանուր գումարային ծավալը կազմել է ավելի քան 1.9 մլրդ ԱՄՆ դոլար: 2007թ Հայաստանի տնտեսությունում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը կազմել է 669.8մլն դոլար:<sup>59</sup>

Սակայն հաջորդ տասնամյակի վերջում ներդրումների վիճակագրական պատկերն այլ է ՀՀ-ում: Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումները 2008 թ. առաջին կիսամյակում կազմել է 515 մլն դոլար, որից 386 մլն դոլարը բաժին է ընկել Ռուսաստանին, որտեղ տվյալ երկրի չափաբաժինը նախորդ տարվա նկատմամբ աճել է 3.2 անգամ , իսկ ներդրումների ընդհանուր մակարդակը 65%-ով: Ներդրումների հիմնական մասը իրականացվել էր կապի ոլորտում:

2010թ. հունվար-սեպտեմբերին Հայաստանի տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը (առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացվածի) կազմել է 472.2 մլն դոլար, որը 2009թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 9.5%-ով: Օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈԻՆ) ծավալը կազմել է 348.7 մլն դոլար և նվազել 9.3%-ով: Ինչ վերաբերում է Հայաստանում կատարվող ՕՈԻՆ-ին՝ ըստ երկրների, ապա նշենք, որ այս առումով ամենախոշորը շարունակում է մնալ Ռուսաստանը՝ 148

---

<sup>59</sup> [http://www.banker.am/news.php?lang=1&news\\_cat\\_id=10&news\\_id=1477](http://www.banker.am/news.php?lang=1&news_cat_id=10&news_id=1477)

մին դուլար հունվար-սեպտեմբեր ամիսներին: Ընդ որում, եթե ընդհանուր օտարերկրյա ուղղակի ներդրումները Հայաստանում նվազել են 9.3%-ով, ապա Ռուսաստանի կողմից իրականացվածները այս ընթացքում աճել են 21.3%-ով: Այս հանգամանքը թերևս հեշտ է բացատրել. ռուսական ներդրումները պայմանավորված են Հայաստանում գործող հեռահաղորդակցության ոլորտի երկու օպերատորների, ինչպես նաև մի շարք այլ ռազմավարական նշանակության խոշոր ընկերությունների առկայությամբ: Իսկ հեռահաղորդակցության մյուս օպերատորի՝ Օրանժ Արմենիայի շնորհիվ Ֆրանսիան դարձել է Հայաստանում ներդրումներ իրականացնող երկրորդ խոշոր պետությունը (116 մլն դուլար այս տարվա հունվար-սեպտեմբերին), թեև ֆրանսիական ներդրումների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է մոտ 20%-ով:<sup>60</sup>

Այսպիսով, ընդհանուր առմամբ օտարերկրյա ուղղակի ներդրումների հետ կապված ամեն ինչ շատ հստակ է՝ գործունեության ծավալով օտարերկրյա մոտ 10 խոշոր ընկերություններ, կախված իրենց տնտեսական կարողություններից ու համաշխարհային շուկայում ստեղծված իրավիճակից, ավելացնում կամ պակասեցնում են Հայաստանում գտնվող իրենց ընկերություններում ներդրումները՝ համապատասխանաբար ավելացնելով կամ պակասեցնելով Հայաստանում կատարվող ՕՌԻՆ-ի ցուցանիշը: Եվ այս ամենը ոչ մի կապ չունի Հայաստանի ներդրումային միջավայրի գրավչության կամ ոչ գրավչության հետ:

Ներդրող երկրները հանրապետությունում ընտրել են գործունեության այն տեսակները՝ էներգետիկա, կապ, ցամաքային և օդային տրանսպորտ, որոնք Հայաստանի տնտեսությունում գնահատվել են տնտեսական ներուժ պարունակող և այդքանով որպես առավել հեռանկարային: Այդքանով կարևորվում են ներդրումային միջավայրի շարունակաբար կատարելագործման նշանակությունը հատկապես տնտեսության այն ճյուղերի գծով, որտեղ դեռևս չի նկատվում օտարերկրյա ուղղակի ներդրումների

---

<sup>60</sup> [http://www.banker.am/news.php?lang=1&news\\_cat\\_id=10&news\\_id=1477](http://www.banker.am/news.php?lang=1&news_cat_id=10&news_id=1477)

նկատելի ներհոսք: 2009-2013թթ ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերը հետևյալն են

| Տարիներ | ՕՈԻՆ (հազ. ԱՄՆ դոլար). <sup>61</sup> |
|---------|--------------------------------------|
| 2009    | 935485,3                             |
| 2010    | 702661,6                             |
| 2011    | 816272,6                             |
| 2012    | 751804,9                             |
| 2013    | 597375,1                             |

#### Աղյուսակ 1

Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների<sup>62</sup>

| Ցուցանիշներ                     | 2014 | 2013 | 2012 | 2011 | 2010 |
|---------------------------------|------|------|------|------|------|
| Երկրների թիվը                   | 178  | 177  | 184  | 183  | 183  |
| Երկրի դիրքը                     | 41   | 38   | 39   | 36   | 38   |
| Տնտեսական ազատության ինդեքս     | 68,9 | 69,4 | 68,8 | 69,7 | 69,2 |
| Սեփականության իրավունք          | 30   | 30   | 30   | 30   | 30   |
| Կոռուպցիայից ազատություն        | 26,7 | 26   | 26   | 27   | 29   |
| Հարկաբյուջետային ազատություններ | 86,5 | 88   | 89,3 | 89,2 | 89,3 |
| Կառավարության ծախսումներ        | 81,3 | 82,1 | 74,9 | 85,7 | 90,9 |
| Գործարարության ազատություն      | 83,1 | 87,6 | 87,8 | 82,4 | 83,7 |
| Աշխատանքի ազատություն           | 78,5 | 77,1 | 76,1 | 75,9 | 70,6 |
| Դրամավարկային ազատություն       | 77   | 73   | 73,1 | 76,0 | 72,9 |
| Առևտրի ազատություն              | 85,5 | 85,4 | 85,4 | 85,5 | 80,5 |
| Ներդրումների ազատություն        | 70   | 75   | 75   | 75   | 75   |
| Ֆինանսական ազատություն          | 70   | 70   | 70   | 70   | 70   |

Այս ժամանակահատվածում առաջին տեղում է ՌԴ -ն, ներդրման ճյուղերը էներգիա և գազ, երկրորդ տեղում Ֆրանսիան՝ խմիչքի և հեռահաղորդակցության ոլորտ (հազ. ԱՄՆ դոլար):

<sup>61</sup> [www.armstat.am](http://www.armstat.am)

<sup>62</sup> Նույն տեղը:

Ինչպես երևում է թվային տվյալներից՝ 2009 և 2013 թվականները միմյանց հետ համեմատելով կարող ենք գրանցել 39 տոկոս նվազում ամբողջ ներդրումների համակարգում, 63 տոկոս նվազում ՕՈՒՆ-ում:

ՕՈՒՆ-ների ներդրումային գրավչության կարևոր ցուցիչ է հանդիսանում տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկը, որը ըստ երկրների կատարվում է “Հերիթիջ” հիմնադրամի միջոցով: Այսպես, 2014 թ. համար հիմնադրամի գնահատականներով ՀՀ-ն 178 երկրների շարքում տնտեսական ազատության ինդեքսով զբաղեցրել է 41-րդ տեղը, վատացնելով իր դիրքը նախորդ տարվա 38-րդ տեղի փոխարեն: Սակայն, տնտեսական ազատության Հայաստանի գնահատականը (68.9 միավոր) բարձր է համաշխարհային միջինից 60.3 միավոր):<sup>63</sup>

### ԱՄՓՈՓՈՒՄ

Ներդրումային դաշտի գրավչությունը ՀՀ-ում օտարերկրացիների համար վերջին տարիներին անկում է ապրում: Այդ են վկայում ինչպես ՕՈՒՆ-ների կրճատման ծավալները, այնպես էլ արտաքին փորձագիտական գնահատականները: Օտարերկրյա ներդրումների գրավչության համար կարևորագույն ցուցիչ է համարվում տնտեսության ազատության ինդեքսը, որի միջազգային դիրքը համաշխարհային վարկանիշային սանդղակում ՀՀ-ի գծով վերջին տարիներին նվազման միտում ունի:

**Петросян А.А.**

аспирант Европейской региональной академии

### СТАТИСТИЧЕСКАЯ КАРТИНА ПРИВЛЕКАТЕЛЬНОСТИ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ В РА

**Ключевые слова:** инвестиционный климат, направления инвестиций, привлекательность инвестиций, индекс свободы экономики

В последние годы в РА наблюдается спад уровня привлекательности иностранных инвестиций среди зарубежных инвесторов. Об этом свидетельствуют как сокращения объемов иностранных прямых

---

<sup>63</sup> [www//cba.am](http://www/cba.am)

инвестиций, так и оценки зарубежных экспертов. Важным индикатором оценки благоприятного инвестиционного климата является индекс экономической свободы, по которым за последние годы для Армении наблюдается спад в международной рейтинговой шкале.

**Petrosyan A.A.**

Researcher at European Regional Educational Academy

## **STATISTICAL ILLUSTRATION OF FOREIGN INVESTMENT CLIMATE ATTRACTION IN RA**

**Key words:** investment climate, investments directions, attractiveness of investment, index of economic liberty

The level of attractiveness of foreign investment is having decline tendency in previous year in Armenia. The evidence of this is not only turn down the sums of investments dimensions in RA, but also foreign experts assessments. For the measurement of investment climate attractiveness is obtainable the “economy liberty indicator”, which is for Armenia in recent period taking decline position tendency in the world ranking presentations.

**Գյուրջյան Ս. Ս.**

Երևանի «Գլաձոր» համալսարանի հայցորդ  
Gyurdjyan.am@gmail.com

## **ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՍՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր.** Վարկային ռազմավարություն, SWOT մատրիցա, վարկային ռիսկ, վարկունակության գնահատում:

ՀՀ բանկերի վարկային քաղաքականությամբ սահմանվում են բանկի նպատակները վարկավորման ոլորտում, բանկի վարկային ռազմավարությունը:

Ընդհանրապես, կախված արտաքին և ներքին միջավայրի պայմաններից՝ կարող են կիրառվել հետևյալ ռազմավարական մոտեցումները.

1. Ներթափանցման ռազմավարությունը հիմնվում է այն բանի վրա, որ բանկը յուրացնում է արդեն ձևավորված շուկան և առաջարկում այնտեղ այն նույն ապրանքը, ինչ և մրցակիցը: Նման ռազմավարությունը կիրառելի է նպատակային շուկայի՝ նման ապրանքներով և ծառայություններով չհագեցվածության դեպքում: Բայց այս դեպքում պետք է պատրաստ լինել շուկայում դիմակայել ուժեղ մրցակցությանը:

2. Շուկայի զարգացման ռազմավարությունը նշանակում է, որ բանկը ձգտում է ընդլայնել մատուցվող ծառայությունների սպառման շուկան, բայց ոչ թե արդեն գոյություն ունեցող շուկաներ ներթափանցման, այլ նոր շուկաների և սեգմենտների ստեղծման շնորհիվ:

3. Նոր ծառայությունների մշակման ռազմավարությունը իրականացվում է սկզբունքային նոր, կամ հաճախ արդեն գոյություն ունեցող ծառայությունների ձևափոխությունների ստեղծմամբ և շուկայում իրացմամբ: Այս ռազմավարությունը օգտագործվում է ոչ գնային մրցակցության առկայության պայմաններում:

4. Դիվերսիֆիկացիայի ռազմավարությունը ենթադրում է բանկերի ձգտումը՝ դուրս գալու իրենց համար նոր շուկաներ, և դրա համար բանկերը իրենց տեսականու մեջ նոր ծառայությունների տեսակներ են ներմուծում: Հենց այս ռազմավարությունն է տարել բանկային գործունեության ունիվերսալացմանը:

5. Ինտեգրացիոն ռազմավարությունը ենթադրում է շուկայի այլ սուբյեկտների հետ համատեղ նոր ֆինանսական ծառայությունների ստեղծում կամ արդեն գոյություն ունեցողների արդիականացում: Այս ռազմավարության շրջանակներում կարող են ստեղծվել բանկային սինդիկատներ կոնկրետ ծրագրերի կամ խոշոր նախագծերի վարկավորման համար: Այս ռազմավարությունը կրերի բանկային հիմնարկությունների միավորմանը:<sup>64</sup>

Վերլուծելով «Արդշինինվեստբանկ», «Ալբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» և «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ների զարգացման ռազմավարության հիման վրա տնտեսության տարբեր ոլորտներում վարկային քաղաքականությամբ սահմանված

---

<sup>64</sup> Лаптырев Д. “Система управления финансовыми ресурсами банка”. М., БДЦ-пресс, 2011, էջ 188-190

ռազմավարական խնդիրներն ու նպատակները՝ կարել է ասել, որ վերոհիշյալ բանկերն իրենց համար սահմանել են այնպիսի վարկային ռազմավարություն, որն ուղղված է թվով շատ հաճախորդների ներգրավմանը, վարկերի տրամադրման ծավալների աճին, նոր ծառայությունների ստեղծմանը և արդեն գոյություն ունեցողների կատարելագործմանը:

Հաշվի առնելով արտաքին միջավայրի անընդհատ փոփոխությունները, յուրաքանչյուր բանկ պետք է մշտապես ճշգրտի իր վարկային ռազմավարությունը՝ դիտարկելով այն որպես արտաքին շուկայական այլընտրանքների և ներքին գործոնների արդյունք:

Վարկային ռեսուրսների կառավարման ռազմավարության մշակման և հետազայում դրա ճշգրտման ժամանակ բանկը կարող է օգտագործել SWOT մեթոդը՝ իր ուժեղ ու թույլ կողմերի և արտաքին միջավայրի հնարավորությունների ու սպառնալիքների վերլուծության նպատակով:

Օրինակ, գյուղատնտեսության ոլորտում «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի վարկային ռազմավարության իրականացման հնարավորությունները պարզելու համար իրականացրել ենք SWOT վերլուծություն՝ գործոնների ընտրության և դրանց ազդեցության նշանակելիության գնահատման ժամանակ՝ հաշվի առնելով ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը: Առանձնացրել ենք մի շարք գործոններ, որոնք բնութագրում են բանկի վարկային բաժնի ուժեղ և թույլ կողմերը, արտաքին միջավայրի սպառնալիքներն ու հնարավորությունները:

Ուժեղ կողմեր

1. ֆինանսական ռեսուրսների առկայություն – 4 (մասնակի ցուցանիշը՝  $4/5=0.8$ )

2. լավ վարկանիշ հաճախորդների մոտ – 5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

3. շուկայի առաջատար – 5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

4. հաճախորդների լայն բազա - 5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

5. աշխատողների բարձր պրոֆեսիոնալ մակարդակ – 5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

6. շուկայական փոփոխություններին դիմամիկ արձագանք – 4 (մասնակի ցուցանիշը՝ 0.8)



7. մարքեթինգային գործողությունների բարձր մակարդակ – 5  
(մասնակի ցուցանիշը՝ 1)

Թույլ կողմեր

1. ծառայությունների բարձր գին – 4 (մասնակի ցուցանիշը՝ 0.8)

2. սպասարկման որակ – 2 (մասնակի ցուցանիշը՝ 0.4)

3. ճկուն գնային համակարգ – 3 (մասնակի ցուցանիշը՝ 0.6)

4. ցածր պաշտոններում կադրերի հոսունություն –1  
(մասնակի ցուցանիշը՝ 0.2)

5. շարքային աշխատողների ցածր հետաքրքրվածություն  
բանկի զարգացման մեջ – 4 (մասնակի ցուցանիշը՝ 0.8)

6. ռիսկերի կանխատեսման և բացահայտման մակարդակ – 1  
(մասնակի ցուցանիշը՝ 0.2)

Հնարավորություններ

1. ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկավորման  
ընդլայնում – 5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

2. արժեթղթերի շուկայում աշխատելու հեռանկարներ – 3  
(մասնակի ցուցանիշը՝ 0.6)

3. նոր շուկաներ (շուկայական նոր հատվածներ) դուրս գալու  
հնարավորություն – 5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

4. ապրանքային գծի ընդլայնում – 5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

5. մրցակիցների դիրքերի վատացում – 2 (մասնակի  
ցուցանիշը՝ 0.4)

6. բանկի վարկային ծառայությունների նկատմամբ  
պահանջարկի աճ – 2 (մասնակի ցուցանիշը՝ 0.4)

7. պետության բարենպաստ քաղաքականություն –2  
(մասնակի ցուցանիշը՝ 0.4)

Սպառնալիքներ

1. նոր մրցակիցների ի հայտ գալու հնարավորություն –1  
(մասնակի ցուցանիշը՝ 0.2)

2. գոյություն ունեցող մրցակիցների միջև ուժեղ պայքար,  
մրցակցության ճնշման բարձրացում –2 (մասնակի ցուցանիշը՝ 0.4)

3. վարկավորման գործառնությունների բարձր ռիսկայնու-  
թյուն –3 (մասնակի ցուցանիշը՝ 0.6)

4. ժամկետանց վարկերի վերադարձման դժվարություն –3  
(մասնակի ցուցանիշը՝ 0.6)

5. տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը տնտեսության վրա - 5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

6. բնակչության եկամուտների վատթարացում - 5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

7. փոքր և միջին ձեռնարկատիրության շահութաբերության անկում -5 (մասնակի ցուցանիշը՝ 1)

Այժմ հաշվարկենք ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների հանրագումարային ցուցանիշները, դրանցից յուրաքանչյուրի հաշվարկման համար պետք է դրանց մասնակի ցուցանիշների հանրագումարը հարաբերենք համապատասխան մասնակի ցուցանիշների թվին:

Ուժեղ կողմերը բնութագրող հանրագումարային ցուցանիշը կլինի՝  $6.6/7=0.94$ : Թույլ կողմերը բնութագրող հանրագումարային ցուցանիշը կլինի՝  $3/6=0.5$ , հնարավորությունները բնութագրող հանրագումարային ցուցանիշը՝  $4.8/7=0.69$ , սպառնալիքները բնութագրող հանրագումարային ցուցանիշը՝  $4.8/7=0.69$ :

$$(0.94+0.69) / (0.5+0.69)=1.4$$

Այս գործակիցը ցույց է տալիս, որ բանկը իր վարկային ռազմավարությունն իրականացնելու համար ունի իրական հնարավորություններ, և միևնույն ժամանակ, օգտագործելով ուժեղ կողմերը և հնարավորությունները՝ պետք է ռազմավարական քայլեր ձեռնարկի թույլ կողմերի և սպառնալիքների ազդեցությունը թուլացնելու նպատակով:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը նշվածը, կարող ենք նշել, որ բանկը իր վարկային ռազմավարությունը հաջող իրականացնելու համար պետք է՝ օգտագործելով իր ուժեղ կողմերը և հնարավորությունները՝ քայլեր ձեռնարկի իր թույլ կողմերը վերացնելու և սպառնալիքները չեզոքացնելու ուղղությամբ: Մասնավորապես, գյուղատնտեսության ոլորտում վարկային ներդրումների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ քայլերը՝

1. փոփոխություններ կատարել ծառայությունների գների մեջ, առաջարկելով մրցակիցների համեմատ ավելի ցածր և ճկուն գներ,

2. բարձրացնել սպասարկման որակը,

3. բարձրացնել աշխատողների հետաքրքրվածությունը բանկի զարգացման մեջ,

4. բարձրացնել վարկային ռիսկի կառավարման մակարդակը, ինչը հատկապես ավելի է կարևորվում գյուղատնտեսության ոլորտում ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներում, և ռիսկերի կառավարման եղանակներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել արտաքին տնտեսական գործոնների ազդեցությունը ու իրականացնել ռիսկերի նվազեցման և դիվերսիֆիկացիայի ռազմավարությունները,

5. ժամկետանց վարկերի վերադարձն ապահովելու նպատակով շարունակել վարկառուների մոնիտորինգի անընդհատ իրականացումը (մասնավորապես տեղում՝ օնսայթ մոնիտորինգի), և եթե նկատվում են վարկի մարման մեծ դժվարություններ՝ վերանայել վարկի պայմանները, ժամկետները, տոկոսադրույքը, մարման կարգը, իսկ որպես ծայրահեղ միջոց դիմել գրավի իրացմանը՝ վարկի վերադարձն ապահովելու նպատակով,

6. հաշվի առնելով ճգնաժամի հետևանքով բնակչության եկամուտների և ձեռնարկությունների շահութաբերության մակարդակի զգալի անկումը՝ նրանց վարկավորման ժամանակ իրականացնել վարկունակության ավելի խորը և օբյեկտիվ գնահատում (կիրառելով վարկունակության գնահատման ժամանակ հաշվարկվող ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև իրականացնելով դրամական հոսքերի, գործարար ռիսկի վերլուծություն՝ ձեռնարկատիրական վարկերի տրամադրման ժամանակ):

### **Ամփոփում**

Հաշվի առնելով արտաքին միջավայրի անընդհատ փոփոխությունները, յուրաքանչյուր բանկ պետք է մշտապես ճշգրտի իր վարկային ռազմավարությունը՝ դիտարկելով այն որպես արտաքին շուկայական այլընտրանքների և ներքին գործոնների արդյունք:

Վարկային ռեսուրսների կառավարման ռազմավարության մշակման և հետազայում դրա ճշգրտման ժամանակ բանկը կարող է օգտագործել SWOT մեթոդը՝ իր ուժեղ ու թույլ կողմերի և արտաքին միջավայրի հնարավորությունների ու սպառնալիքների վերլուծության նպատակով:

**Гюрджян Саркис**  
соискатель  
Ереванский Университет „Гладзор,,

## **СТРАТЕГИИ УПРАВЛЕНИЯ КРЕДИТНЫМИ РЕСУРСАМИ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ РА**

**Ключевые слова:** кредитная стратегия, SWOT матрица, кредитный риск, оценка кредитоспособности

Учитывая динамику изменений внешней среды, каждый банк должен периодически корректировать свою кредитную стратегию, рассматривая ее как результат внешних рыночных альтернатив и внутренних факторов.

При разработки и реализации стратегии управления кредитными ресурсами банк может использовать SWOT метод, с целью анализа сильных и слабых сторон, а так же возможностей и угроз.

**Gyurdjyan Sarkis**  
Applicant  
Yerevan „Gladzor,, University

## **MANAGEMENT STRATEGY OF CREDIT RESOURCES IN COMMERCIAL BANKS OF RA**

**Keywords:** credit strategy, SWOT matrix, credit risk, a credit status estimation.

Considering dynamics of changes in environment, each bank should correct periodically the credit strategy, considering it as result of external market alternatives and internal factors.

At working out and realization of strategy of management by credit resources the bank can use SWOT method, for the purpose of the analysis strength and weaknesses, and as opportunities and threats.

## **ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐԱԶԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

***Բանալի բառեր.*** Փոքր և միջին գործարարություն, ձեռնարկատիրություն, մշտական բնակչության թվաքանակ, զբաղվածություն:

Ձեռնարկությունների դասակարգման հիմքում ընկած են տարբեր չափանիշներ, ըստ որոնց մեր հանրապետությունում այն դասակարգվում է ըստ չափերի՝ փոքր, միջին և խոշոր: Ընդհանուր առմամբ, փոքր ձեռնարկությունների մասին իրենց կարծիքն արտահայտել են տարբեր տնտեսագետներ և առաջարկել ձեռնարկությունների սահմանման ժամանակ հաշվի առնել որոշ ցուցանիշներ: Համաձայն այդ սահմանումներից մեկի՝ փոքր ձեռնարկություն է համարվում անկախ և ինքնուրույն գործող, իր ոլորտում որոշակի արտոնություններ չունեցող ձեռնարկությունը, որը աշխատողների քանակով և տարեկան հասույթի չափերով չպետք է գերազանցի օրենքով սահմանված չափերը:<sup>65</sup>

Կ. Գրեյը և Ջ. Սթենվորթը այս հարցի կապակցությամբ կատարել են այլ եզրակացություն. փոքր ձեռնարկության ոչ մի ունիվերսալ բնորոշում չի կարող բոլոր խնդիրների համար բավարար լինել: Կարևորն այն չէ, թե բոլոր խնդիրների համար կգտնվեն այնպիսի ունիվերսալ լուծումներ, որոնք հստակ կբաժանեն փոքր ձեռնարկությունը մեծից, այլ կարևորն այն է, որ տրվի փոքր և մեծ ձեռնարկությունների համար օգտակար ընդհանրացում:

Բացի այդ, փոքր ձեռնարկությունների չափը որոշելու համար շատ հաճախ օգտագործվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպես օրինակ աշխատողների քանակը, ապրանքների և ծառայությունների իրացումից ձևավորված հասույթի մեծությունը, ակտիվների հաշվեկշռային արժեքները և այլն: Այս չափանիշի կիրառման

---

<sup>65</sup> Хоскинг А. “Курс предпринимательства-М” Международные отношения 2013год с.14 Малые и средние предприятия. Управление и организация под ред Пихлера Й. Плайтера Х. Шмидта М международные отношения 2012 с 48-53

հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ դրա օգտագործումը շատ հարմար է և հեշտ: Այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են շրջանառությունը կամ աշխատողների քանակը, որպես կանոն, հասանելի են հետազոտությունների համար: Փոքր ձեռնարկությունների քանակական բնորոշման հիմնական թերությունը դրանց բացարձակության, այս կամ այն ցուցանիշի ընտրության և դրա սահմանների փոփոխության տեսական բազայի բացակայության մեջ է: Եվ դա է պատճառը, որ այս ցուցանիշի օգնությամբ դժվար է կատարել համեմատական վերլուծություն:

Բնորոշման որակական տարբերակները կանխատեսում են որակական չափանիշների օգտագործում: Նման չափանիշի օգնությամբ փոքր ձեռնարկության չափի որոշումը հաճախ կրում է սուբյեկտիվ բնույթ և ըստ էության, հաշվի է առնում միայն ձեռնարկության արդյունքը: Որպես այդպիսի մոտեցման օրինակ՝ Ռ. Բուրիվերսնիկը բերում է Վան Հորնի բնորոշումը /Նիդեռլանդներ 1979թ./, որի համաձայն՝ փոքր են համարվում այն ձեռնարկությունները, որոնք ունեն՝

արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների համեմատական քիչ քանակություն,

համեմատաբար սահմանափակ ռեսուրսներ և հզորություններ,

ձեռնարկության ռազմավարական վիճակը գնահատելու և ղեկավարելու համար ոչ բավարար կառավարման համակարգեր, ղեկավարման բլոկի կառուցվածք,

մենեջմենթի, աշխատակազմի ղեկավարման /որակավորում, ուսուցում/,

ձեռնարկության ղեկավար պաշտոնները զբաղեցնում են հենց իրենք՝ հիմնադիրները:<sup>66</sup>

Հիմնվելով այս չափանիշների վրա, Վան Հորնը առաջարկեց Նիդեռլանդներում «փոքր» համարել 50-500 աշխատակիցներ և մինչև 1 մլն տարեկան ֆունտ ստեռլինգ շրջանառություն ունեցող ձեռնարկությունները:

---

<sup>66</sup> Ван Хорн Дж.К., Вахович Дж.М. Основы финансового менеджмента. 12-е изд. М. И.Д.Вильямс, 2008г., էջ 355

Փոքր և միջին գործարարության և ձեռնարկատիրության դերը կարևորվեց հատկապես 20-րդ դարի 60-70-կան թվականներին: Եվրոպական Միության 15 երկրներում փոքր /մինչև 250 մարդ/ և միջին /մինչև 500 մարդ/ կազմակերպություններին բաժին էր ընկնում՝

- ավելի քան 72 մլն մարդ,
- ՀՆԱ-ի ավելի քան 70 տոկոսը:

Բացի այդ, վերջին 10 տարիների ընթացքում՝ համաձայն վիճակագրական տվյալների, զբաղվածների թվաքանակը փոքր և միջին ձեռնարկություններում աճել է 4.5 տոկոսով:

Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման մակարդակը որոշ երկրներում ունեցել է հետևյալ տեսքը

**Աղյուսակ 1.** Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման մակարդակը 2012-2013թթ. ըստ որոշ երկրների\*

| Երկրներ              | Փոքր և միջ. ձեռն. քանակը /հազ. Մարդ/ | Փոքր և միջ. ձեռն. քանակը 10 հազ. բնակչի հաշվով | Փոքր և միջին ձեռն. զբաղված-ների քանակը /մլն մարդ/ | Փոքր և միջին ձեռն. զբաղված-ների քանակը ընդհանուր զբաղված-ների մեջ /%/ | Փոքր և միջին ձեռն. մասնա-բաժինը ՀՆԱ-ում /%/ |
|----------------------|--------------------------------------|------------------------------------------------|---------------------------------------------------|-----------------------------------------------------------------------|---------------------------------------------|
| Մեծ Բրիտանիա         | 2630                                 | 460                                            | 13.6                                              | 49                                                                    | 50-53                                       |
| Գերմանիա             | 2290                                 | 370                                            | 18.5                                              | 46                                                                    | 50-52                                       |
| Իտալիա               | 3920                                 | 680                                            | 16.8                                              | 73                                                                    | 57-60                                       |
| Ֆրանսիա              | 1980                                 | 350                                            | 15.2                                              | 54                                                                    | 55-62                                       |
| Եվրամիության երկրներ | 15770                                | 450                                            | 68.0                                              | 72                                                                    | 63-67                                       |
| ԱՄՆ                  | 19300                                | 742                                            | 70.2                                              | 54                                                                    | 50-52                                       |
| Ճապոնիա              | 6450                                 | 496                                            | 39.5                                              | 78                                                                    | 52-55                                       |
| Ռուսաստան            | 875                                  | 57                                             | 7.5                                               | 15                                                                    | 9-10                                        |

Զարգացած, կայուն և դինամիկ աճ ունեցող երկրներում այս տեսանկյունից ներքին և արտաքին շուկայում մեծ վարկանիշի հասած շատ երկրներում համախառն ներքին արդյունքի առյուծի բաժինը ձևավորվում է փոքր և միջին ձեռնարկատիրության հաշվին: Եվ դրանում զարմանալի ոչինչ չկա, քանզի հենց մանր գործարարություն է, որ մշտապես խթանում է տնտեսության,

բնակչության կենսագործունեության տարաբնույթ ոլորտները: Փոքր ձեռնակությունների ակտիվ զարգացումը սկսվեց 20-րդ դարի 90-ական թվականներին և շարունակվում է մինչև օրս: Ներկայումս առավել զարգացած Արևմտյան Եվրոպայում փոքր ձեռնարկությունները կազմում են ընդհանուր կազմակերպությունների 70-90%-ը:<sup>67</sup>

Ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը անկախ նրա չափերից ու տնտեսավարման ձևերից, հանդիսանում է պետության կարևորագույն առաքելություններից մեկը: Ընդ որում, երկրի սոցիալ-տնտեսական զարգացում անհրաժեշտ է ապահովել բոլոր մարզերում ու համայքներում. խնդիր, որի լուծումը ինքնանպատակ չէ, քանի որ նման քաղաքականության հիմնական նպատակներից է հանդիսանում նաև սահմանամերձ շրջանների «ամայացումից» խուսափումը, բնակչության ապակենտրոնացումը և այլն: Ըստ Ն. Սմիթի տարածաշրջանների անհավասար զարգացման հիմնական պատճառը աշխատանքի զանգվածային բաժանման ներքո կապիտալի հավասարեցումն ու տարբերակվածությունն է:<sup>68</sup> Ըստ առանձին հեղինակների կողմից քաշված վարկածների, անհավասար զարգացման պատճառները բացատրվում են երկարատև օգտագործման ապրանքների արտադրության և սպառման մակարդակների տարբերությամբ, նյութական արտադրության ոլորտներում սեզոնների միջև անհամամասնություններով, մասնավորապես՝ հիմնական միջոցների ու սպառողական ապրանքների ու կապիտալի շրջապտույտի ու մասնաբաժինների միջև, ինչպես նաև ֆինանսական ոլորտում պարբերաբար տեղի ունեցող փոփոխություններով:

Տնտեսության, ինչպես նաև գործարարության անհավասարաչափ զարգացման հիմնական պատճառները Հայաստանի Հանրապետությունում, մեր կարծիքով, հանդիսանում են

➤ ըստ մարզերի բնական ռեսուրսների խիստ անհավասարաչափ տեղաբաշխվածությունը,

---

<sup>67</sup> Дакенбург В. Монкриф Р. Тейлор В. Основы оптовой торговли “Практический курс-СПБ” “Нева-Ладого-понега” 2014, էջ 84

<sup>68</sup> Смит Н., Каплан У. “Концепция и инструментари эффективного предпринимательства. Учебное пособие”, СПб, 2009 г, էջ 74-75



➤ ամբողջ բնակչության, ինչպես նաև քաղաքային ու գյուղական բնակչության և դրանց խտության անհավասարաչափ տեղաբաշխվածությունը ըստ մարզերի:

Որպես կանոն, բնակչությունը կենտրոնանում է այն մարզերում, որոնք ապահովում են զբաղվածության որոշակի մակարդակ կամ զարգացման որոշակի հեռանկարներ: Այս համատեքստում տրամաբանական պետք է համարել առաջին հերթին Երևանում, իսկ այնուհետև՝ Լոռու, Արմավիրի, Շիրակի, Արարատի ու Կոտայքի մարզերում հանրապետության բնակչության մոտ 80%-ի տեղաբաշխումը, որի դինամիկան վերջին 5 տարիներին գրեթե մնացել է անփոփոխ /տեղ աղյուսակ 12/.

**Աղյուսակ 2.** Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը ըստ մարզերի\*

|             | 2009թ.               |      | 2010թ.       |      | 2011թ.       |      | 2012թ.       |      | 2013թ.       |      |
|-------------|----------------------|------|--------------|------|--------------|------|--------------|------|--------------|------|
|             | Ամբողջ բնակչությունը |      |              |      |              |      |              |      |              |      |
|             | Հազ.<br>մարդ         | %    | Հազ.<br>մարդ | %    | Հազ.<br>մարդ | %    | Հազ.<br>մարդ | %    | Հազ.<br>մարդ | %    |
| ՀՀ-ում      | 3212.9               | 100  | 3210.3       | 100  | 3212.2       | 100  | 3215.8       | 100  | 3219.2       | 100  |
| Երևան       | 1103.3               | 34.3 | 1102         | 34.3 | 1101.9       | 34.3 | 1102.9       | 34.3 | 1103.8       | 34.3 |
| Արագածոտն   | 138.4                | 4.3  | 138.5        | 4.3  | 138.8        | 4.3  | 139.1        | 4.3  | 139.5        | 4.3  |
| Արարատ      | 271.9                | 8.5  | 272.1        | 8.5  | 272.7        | 8.5  | 273.4        | 8.5  | 274.2        | 8.5  |
| Արմավիր     | 276.4                | 8.5  | 276.8        | 8.6  | 277.3        | 8.6  | 278.2        | 8.7  | 279.2        | 8.7  |
| Գեղարքունիք | 237.7                | 7.4  | 238          | 7.4  | 238.5        | 7.4  | 239.1        | 7.4  | 239.4        | 7.4  |
| Լոռի        | 286.3                | 8.9  | 285          | 8.9  | 284.5        | 8.9  | 273.1        | 8.5  | 275.1        | 8.5  |
| Կոտայք      | 272.6                | 8.5  | 274.4        | 8.5  | 273.1        | 8.5  | 274.2        | 8.5  | 275.1        | 8.5  |
| Շիրակ       | 283.3                | 8.8  | 282.5        | 8.8  | 282.2        | 8.8  | 281.7        | 8.8  | 281.4        | 8.7  |
| Սյունիք     | 152.7                | 4.8  | 152.8        | 4.8  | 153.1        | 4.8  | 153          | 4.8  | 153          | 4.8  |
| Վայոց Ձոր   | 56                   | 1.7  | 55.9         | 1.7  | 55.8         | 1.7  | 55.9         | 1.7  | 55.8         | 1.7  |
| Տավուշ      | 134.3                | 4.2  | 134.3        | 4.2  | 134.3        | 4.2  | 134.4        | 4.2  | 134.4        | 4.2  |

\*Աղբյուրը՝ [www.armstat.am](http://www.armstat.am)

Այսպիսով, աղյուսակում բերված տվյալները վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան

քաղաքի, ինչպես նաև հենց մարզերի զարգացվածության մակարդակների միջև առկա են անհավասարաչափ զարգացվածության միտում:

### **Ամփոփում**

Գործարարության անհավասարաչափ զարգացման հիմնական պատճառները Հայաստանի Հանրապետությունում, մեր կարծիքով, հանդիսանում են ըստ մարզերի բնական ռեսուրսների խիստ անհավասարաչափ տեղաբաշխվածությունը, ինչպես նաև ամբողջ բնակչության, ինչպես նաև քաղաքային ու գյուղական բնակչության և դրանց խտության անհավասարաչափ տեղաբաշխվածությունը ըստ մարզերի: Որպես կանոն, բնակչությունը կենտրոնանում է մարզերում, որոնք ապահովում են զբաղվածության մակարդակ կամ զարգացման որոշակի հեռանկարներ:

**Оганнисян Аветик**

соискатель

Ереванский Университет „Гладзор,,

### **ПРОБЛЕМЫ НЕРАВНОМЕРНОГО РАЗВИТИЯ БИЗНЕСА В РА И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ**

**Ключевые слова:** малый и средний бизнес, предпринимательство, количество постоянного населения, занятость.

Основные причины неравномерного развития бизнеса в Республике Армения, по нашему мнению, являются неравномерное распределение ресурсов по регионам, а так же неравномерное распределение и плотность городского и сельского населения. Как правило, население централизуется в тех регионах, где имеются предпосылки определенного развития.

**Hovhannisyan Avetiq**

Applicant , Yerevan „Gladzor,, University

### **ISSUES OF UNEVEN DEVELOPMENT OF BUSINESS IN RA AND THE WAYS OF THEIR OVERCOMING**

**Keywords:** small and average business, entrepreneurship, quantity of resident population, employment.

The main causes of uneven development of business in Republic of Armenia, in our opinion, are uneven distribution of resources on regions, and as uneven distribution and density of city and country population. As a rule, the population is centralized in those regions where there are preconditions of certain development.

**Lotfollahpour Bagher**

PhD Student of Yerevan State University

lotf11@yahoo.com

## **ANALITICAL OVERVIEW OF IRANIAN INSURANCE INDUSTRY INDICES**

**Key words:** Insurance, Investment of insurance companies, Insurance market, Return of investment, Human capital index

### **Introduction**

One of the reasons on creation of insurance was human need to secure and speed in expansion of various economic activities. Nowadays, studies and analysis of insurance system as an organized financial institute in the financial market, especially in capital market, and the effects of its policies on the general performance of economy have high importance. Although the activity of insurance industry in Iran on today form was started since 1890 by a branch of a British insurance company, but comparing to other developed countries there are many weak points in this field which requires fundamental study by experts and authorities of the industry. According to people's needs for peace of mind and economic security insurance companies provide proper solutions and methods by offering various kinds of life and non-life insurance services. Various indices of financial markets will be used in order to study and analyze affects of insurance system on the economic growth on Iran. In this, indices such as insurance fee, investment of insurance companies and GNP has been used to explain the subject matter.

### **The Review of Premium Index to Gross Domestic Production in Iranian Economy**

This index shows the market share of insurance market to the gross domestic production. On the other hand, studying this index shows

which part of financial market is in the insurance market. Statistical datas show this rate has increased during the first plan from 0.33% to 0.58% in the second plan and 1% in the third and 1.32 in the fourth plan. The intensity of this increase in the third and fourth plan was because of institution of private insurance companies. The increase of this index in the third and fourth plan had been effective in increase of gross domestic production of the country.

Studying and reviewing the data of annual statistics journal of Statistic Department of Central Insurance Company of Islamic Republic of Iran shows the rate of received Premium to index of Gross Domestic Production in the developed countries during 2005-2009 was 9% in the average and the global rate is 7%. Although this rate during 2005-2009 had been 1.32% and it is far from the global rates, however, the increase of insurance market in the financial market and various economic sectors has been proper during the mentioned period and in order to decrease the distance of this rate and make it closer to international rates, direct and indirect support of government as well as efforts of the insurance authorities is needed.

### **The Review of Insurance Companies Index to Gross Domestic Production in Iranian Economy**

Production, service and infrastructure projects require investment. Collection of Premium of insuring companies result large financial resource which can be used in local and international investments. Positive effects of investment of insuring companies at the first place are well performance of obligations, lower insurance rate and increase in quality of services and in the macroeconomic level provides increase in welfare, creating anti-inflation effects, increase in jobs and economic development.

The proportion of amount of investment of insuring companies from the premium to gross domestic production shows the investment share of insurance companies in Iran is very low. But studies show in the first and second development plans directors of insurance companies (4 public insurance company (did not believe in investment and mostly used the received premium on low risk activities with minimum return including current deposits (without any interest) and short term savings

at the banks so that the investment share of insurance companies to gross domestic production in the first plan was 0.0008%.

However, this rate in the fourth development plan has been increased to 0.0034% by instituting private insurance companies and increase in the market share. These studies show attention of investment from insurance fees. Therefore, it is needed that directors of insurance companies seriously review their past investments and find their weak points and positive points of their investment so that expand their investments with proper planning.

Considering the type and nature of received insurance fees, investment scope of insurance companies depends on the level of development of financial market (capital and money) of the country. Collecting premium by insurance companies (large number aw) they operate and have effective role in the development of market of money and capital by buy/sell bonds, stocks, investment in large projects with high return and depositing at the banks.

Before 2000, investment of insurance companies in Iran had less importance because they were public (monopole market) and their managers did not accept any risk in economic activities, however, since 2002 and by instituting private insurance companies because of performing the third development plan and transferring three out of four public insurance companies to the private sector and non-public on performing the fourth development plan in 2009, preparing a competitive market and increase in the amount of premium and increase in the market share for insuring, viewpoints of directors of insurance companies specially private ones on utilizing collected premium in different economic sections to increase return of investment has special importance in Iran. Although these investments is too low in compare to investment of insurance companies of other companies.

### **The Review of Human Capital Index to Gross Domestic Production in Iranian Economy**

This index show how officials and policy makers of economy of the country notice to the human capital and their efficiency in the development plans. The more budget share and costs of human capital of government to gross domestic production and these costs are spent for training, research, health is used, the more efficient of human capital can

be seen and as the result, the output of different economic sections and gross domestic production will be increased. Studying the costs of human capital to gross domestic production it is seen this rate has been decreased during first to third development plans and were 23.8%, 23.7% and 22.2% which were because of adjustment of human capital by public departments and transferring them to private sectors.

### **Conclusion**

Penetration rate of insurance in Iran (received insurance fee to gross domestic production) in compare to global and developed countries average and the role of life insurance are less important. This share (the rate of life insurance from the insurance market) is 60% in the developed countries and the global average rate is 57% the rate of life insurance in Iran is less than 10% which means in 2009 which had the highest rate, it reached to 8%, i.e., 92% of premium were related to non-life insurances.

The volume of investment of insurance companies in Iran from the premium comparing to other countries is low because in the first under study decade, ownership and management of insurance companies were public and their managers were not interested in the risk and mostly deposited the premium in the savings or current accounts at the banks at low interest rates and even without any interest or buying securities and bonds. In the second decade, considering primary correction of the investment laws and rules for insurance companies and entering private insurance companies to the market and competing with them, this rate has been improved but it is far from the expectations.

### **Bibliography**

Abdo Tabrizi, Hossein (2001). The role of insurance in the globalized finance markets. Quaternary insurance industry. NO. 64.

Amrollahi Mahmoud (1999). The efficiency of performance of the stock market share of the insurance companies. The Insurance Industry quaternary Journal. No.2

Kardgar E. & Jafari samimi A. (2006. .)"Does insurance development support economic growth?" Economic research periodical, 6<sup>th</sup> year, no No 2,

Karimi, A .(2011). Insurance totalities. Insurance researching related to central insurance o Islamic republic of Iran.

Kamalvand Mohammad Sadegh (2001). The effect of risk on the reproductively of investment of insurance companies in the stake market of Tehran. No. 62.

Lotfollahpour. B. & Taghinejad Omran V.(2001), insurance industry & private investment interaction, Asia periodical.

Paykarjo, Kambiz (2001). Studying the benefit volume of the investment by the governmental insurance companies and the consequences of the privatization in the financial market. The quaternary Journal of insurance industry, number 64.

### **Լոթֆոլլահփուր Քադեր**

Երևանի պետական համալսարանի ասպիրանտ

**ԻՐԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԻՆՎՈՒՍՏՐԻԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

**Բանալի բառեր.** Ապահովագրություն, ապահովագրական ընկերությունների ներդրումներ, ապահովագրության շուկա, ներդրումների հատույց, մարդկային կապիտալի ինդեքս

Իրանի տնտեսության մեջ ապահովագրության ներթափանցման մակարդակը (հաշվարկված որպես համախառն ապահովագրական վճարների և համախառն ներքին արդյունքի հարաբերություն) զգալիորեն ցածր է՝ համեմատած համաշխարհային միջին մակարդակի հետ։ Իրանում ապահովագրական ընկերությունների ներդրումների հատույցը համեմատաբար ցածր է, քանի որ դրանք հանդիսացել են պետական սեփականություն, իսկ դրանց կառավարիչները չեն դիմել ռիսկի՝ բանկերում բացելով ցածր տոկոսադրույքներով ընթացիկ հաշիվներ, կամ գնելով պարտատոմսեր։ Ներկայումս, իրավաօրենսդրական դաշտում կատարված փոփոխությունների արդյունքում, մասնավոր ապահովագրական ընկերություններ են մուտք գործել շուկա և նշված ցուցանիշը բարելավվել է, թեև դեռ հեռու է բավարար լինելուց։

**Лотфоллапур Багер**  
Аспирант Ереванский государственного университета

## АНАЛИТИЧЕСКИЙ ОБЗОР ПОКАЗАТЕЛЕЙ ИНДУСТРИИ СТРАХОВАНИЯ В ИРАНЕ

**Ключевые слова:** Страхование, инвестиции страховых компаний, рынок страхования, отдача от инвестиций, индекс человеческого капитала

Уровень проникновения страхования в экономику Ирана (рассчитываемый как отношение совокупных страховых взносов к валовому внутреннему продукту) значительно ниже по сравнению с общемировым уровнем. Отдача от инвестиций иранских страховых компаний сравнительно низкая, так как эти компании являлись государственной собственностью, и их руководители не рискнули, открывая в банках текущие счета с низкой процентной ставкой или покупая облигации. В настоящее время, в результате законодательских изменений, в рынке появились частные страховые компании, и упомянутый показатель улучшился, хотя по-прежнему далеко от удовлетворительного уровня..

**Եսայան Ե.Ս.**  
Հյուսիսային համալսարանի դոցենտ, տ.գ.թ.  
Eyesayan@yandex.ru

### ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ում

**Բանալի բաներ.** Օտարերկրյա ուղղակի ներդրումներ, տնտեսական աճի և ներդրումների փոխհարաբերություն, ուղղակի ներդրումների արդյունավետություն, ուղղակի ներդրումների պետական կարգավորում:

Ներդրումային գործընթացները ուսումնասիրող տնտեսագետները Ի.Վ. Բերները և Ժ.Կ. Քոլլին գտնում են, որ ներդրումային շարժառիթը և հաճախ ներդրումային միջոցներով տեղի ունեցող գործընթացները բաժանված են բուն արտադրության գործընթաց-



ներից: Շահույթը կամ հնարավոր կորուստը այս դեպքում կախված է ոչ թե ներդրում կատարողի արտադրական գործունեության ընդունակություններից, այլ նրա հեռատեսությունից, կանխատեսման ձիրքից<sup>69</sup>: Նման մոտեցումից հետևում է, որ ներդրում ասելով չպետք է հասկանալ միայն միջոցների ներդրումը արտադրողական գործունեության մեջ:

Ներդրումային գործընթացների միկրո և մակրո մակարդակների քննարկումը, թույլ է տալիս հետևություն անել, որ անցումային երկրներում, մասնավորապես ՀՀ-ում, նման խնդիր ի սկզբանե դրված չի եղել, ինչը, ներդրման հետ կապված, հանգեցրել է պետական քաղաքականության սխալների: Երբ իրականացվում էին շուկային անցնելու կտրուկ միջոցառումներ, այդ թվում՝ հրաժարում պետական կարգավորումից, տնտեսվարող սուբյեկտների նպատակները, կապված ներդրումներ կատարելու հետ, շատ հաճախ չէին համընկնում հասարակական զարգացման շահերին:

Տնտեսական աճի և ներդրումների փոխհարաբերության հարցերը քննարկել են Ռ. Հարրոդը, Ն. Կալդորը<sup>70</sup>, Է. Դենիսոնը<sup>71</sup>, որոնք ներդրումները դիտում են որպես տնտեսական աճի կարևորագույն գործոն: Այդ գործոնի ակտիվության բարձրացման հարցում մեծ դեր է հատկացվում պետական ծախսերին, որը նշանակում է պետության կողմից պահանջարկի չափերի մեծացում, գիտատեխնիկական առաջընթացի (ԳՏԱ) խթանում, միջոցների ներդրում «մարդկային կապիտալում» և այլն: Այս ուղղության ներկայացուցիչ Է. Հանսենը գտնում է, որ մասնավոր ներդրումներն ու պետական ծախսերը այն ոլորտներն են, որտեղ պետք է փնտրել զբաղվածության ու եկամուտների փոփոխության բացատրությունը<sup>72</sup>:

ՀՀ-ում արտասահմանից ստացված ներդրումները 1998-2006թթ. կտրվածքում կազմել են 2301.4 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները կազմել են 1574.2 մլն դոլար կամ 73,7%-ը: 1998-2001թթ. ընդհանուր առմամբ նկատվել է թե՛ արտասահմանյան

---

<sup>69</sup> St' u Berner И.В., Колли Ж.К. Толковый экономический и финансовый словарь, М., 1994г., т. 2, էջ. 561:

<sup>70</sup> St' u Kaldor N. Essays on Economic Policy, v. 1-2, N.Y., 1965, էջ 486:

<sup>71</sup> St' u նույն աղբյուրը:

<sup>72</sup> St' u Хенсен Э.Г. Экономические циклы и национальный доход, М., 1959, էջ 70:

ներդրումների, և թե՛ դրա մեջ՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՌԻՆ) ծավալների կրճատում, և ընդհանուր ներդրումների ու ՕՌԻՆ-ի գծով ներդրումների հիմնական մասը բաժին է ընկնում 2002-2006թթ.: Դա բացատրվում է նրանով, որ 1998թ.-ից ՀՀ կառավարությունը օտարերկրյա ներդրողներին տրամադրեց ներդրումային խթաններ ի դեմս շահութահարկի կրճատման և 2000թ. մաքսային հարկման ոլորտում կատարված փոփոխությունների, որն արձանագրվեց «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում:

Ընդհանուր առմամբ 1996-99թթ. ուղղակի ներդրումներից ստացված եկամուտների ճնշող մասը ենթարկվել է վերաներդրման 48.2 մլն դոլար եկամուտի 4/5 վերաներդրվել է, ինչը, իրոք դրական ցուցանիշ է: Այս միտումը, ինչպես նշվել է, պահպանվել է 2000-2006թթ., ինչը նշանակում է որ ՕՌԻՆ-ը դառնում են ինքնավերարտադրվող: Այս երևույթի դրական հատկանիշ պետք է համարել նաև այն, որ արտասահմանյան ներդրողները կարող են վստահել ՀՀ տնտեսության զարգացման կայուն տեմպերին և հեռանկարին, կատարել նոր ներդրումներ, այսինքն, այդ հանգամանքը դառնում է ՕՌԻՆ-ի ներգրավման կարևոր նախապայման: Այսպես, ՕՌԻՆ-ի կուտակած պաշարները, ըստ ՀՀ Միջազգային ներդրումային դիրքի գնահատման, ունեն դրական զարգացման վեկտոր, 2000-2006 թթ. ՕՌԻՆ-ում ուղղակի ներդրումները աճել են 2.9 անգամ, իսկ բաժնետիրական կապիտալի և վերաներդրված շահույթի տեսակարար կշիռը դրսևորել է կայուն աճի միտում 68.2%-ից հասնելով մինչև 83.5%-ի<sup>73</sup>:

Որպես կանոն, օտարերկրյա ներդրումները հիմնականում օգտագործվում են արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերը զարգացնելու նպատակով: Սակայն այդ կարգի մակրո-խնդիրները չի կարելի լուծել միայն արտաքին միջոցների ներգրավման հաշվին, հետևաբար անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի ֆինանսական համակարգի օղակները ավելի գործուն դեր կատարեն մասնավոր հատվածի զարգացման խնդրում և ներքին

---

<sup>73</sup> Տե՛ս ՀՀ-ում արտաքին առևտրատնտեսական կապերի ազդեցության մեխանիզմները տնտեսական աճի վրա, Եր., 2001թ., էջ 110; Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2004թ., էջ 498, ՀՀ Սոցիալ-տնտեսական վիճակը, Եր., 2005թ., էջ 75, Եր., 2006թ., էջ 85:

ռեսուրսներն ուղղեն փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացմանը: Նշենք, որ փոքր ձեռնարկատիրությունը ունենալով մեծ նշանակություն տնտեսության զարգացման համար, ներկայումս բնութագրվում է ծայրահեղ ցածր տեխնիկական մակարդակով և ներդրումային ռեսուրսների բացակայությամբ<sup>74</sup>:

Օտարերկրյա ներդրումների բնագավառում բավական լուրջ հարց է նաև, թե որ երկրից է այն ստացվում. անգլիական ֆիրմաները առավել հակված են ուղղակի ներդրումներ կատարել նավթաքիմիական և քիմիական արդյունաբերության ճյուղերում, գերմանական ֆիրմաները՝ մեքենաշինության և հանքարդյունաբերության ճյուղերում, ամերիկյան ֆիրմաները ավելի շատ լիցենզիաներ ու պատենտներ են վաճառում՝ այս կամ այն արդյունքի թողարկման նպատակով, որի դեպքում, հատկապես համագործակցության սկզբնական շրջանում, ուղղակի ներդրումներ չեն կատարվում: Մեր հանրապետության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ծավալների հետազոտությունը ըստ երկրների, ցույց է տալիս, որ 2004-2006թթ. հարյուր միլիոն դոլարից ավել ներդրումներ կատարել են 8 երկրներ՝ Ռուսաստանը, Հունաստանը, Գերմանիան, Ֆրանսիան, Արգենտինան, ԱՄՆ-ը, Լիբանանը և Կիպրոսը: Եթե նշված երկրներից շատերը դրսևորել են խիստ կողմնորոշում իրենց կապիտալների ներդրման ոլորտի կապակցությամբ, ապա Ռուսաստանը այդ հարցում նման դիրքորոշում չունի, քանի որ ռուսական կապիտալը ներդրվել է ՀՀ տնտեսության իրական հատվածի գրեթե բոլոր ոլորտներում: 2005-2006թթ. ամենամեծ ներդրումներ ՀՀ իրական հատվածում կատարել են Հունաստանը, Ռուսաստանը, Գերմանիան և Լիբանանը, համապատասխանաբար՝ 119.2 մլն, 155 մլն, 145.3 մլն և 127.2 մլն դոլար, ՕՈՒԽ-ի գծով Գերմանիան, Հունաստանը, Արգենտինան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Լիբանանը, համապատասխանաբար 145.3 մլն, 84.5 մլն, 44.9 մլն, 38.6 մլն, 12.9 մլն դոլար:

Ներդրումային արդյունավետ միջավայրի ստեղծմանը խանգարող գործոններից կարելի է առանձնացնել վարչարարությունը, որը հատկապես ակնառու է հարկային համակարգում:

---

<sup>74</sup> Տե՛ս Առաջյան Հ. Բ. Մակրոտնտեսական կարգավորում, Եր., 2005, էջ 348:

Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից ՀՀ-ում վերջին տարիներին անցկացված հարցումները ցույց են տալիս, որ կան լուծում պահանջող շատ լուրջ վարչարարական խնդիրներ:

Օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու պետական ռազմավարության հաջորդ հիմնարար բլոկը տեղեկատվությունն ու քարոզչությունն է: Օտարերկրյա ներդրողների մեծամասնությունը ներդրումներ կատարելու ամենագլխավոր խոչընդոտ համարում է ռիսկի խնդիրը: Օտարերկրյա ներդրումների ներգրավման առումով ՀՀ-ում կատարվել են դրական տեղաշարժեր, որոնց արդյունքները արտացոլված են ՀՀ տնտեսական աճի ցուցանիշներում: Դրանք վկայում են, որ ներքին խնայողություններն էլ են աճում, որոնք կարող են դառնալ ներդրումային գործընթացների ռեալ աղբյուր:

Արտաքին աղբյուրներից ինվեստավորման միջոցներ ստանալու ուղիներից մեկն էլ պարտատոմսերը միջազգային ֆոնդային շուկաներում գնահատելն է, ինչը հաջողությամբ իրականացնում են անցման շրջանում գտնվող շատ երկրներ. Ռուսաստանը, Լեհաստանը, Հունգարիան, Չեխիան, Ուկրաինան և ուրիշները: ԱՄՆ որոշ տվյալներով Հայաստանում չկա արտասահմանյան ֆինանսավորման հրատապ կարիք<sup>75</sup>: Կապիտալի շուկայի թույլ զարգացվածության պայմաններում ՀՀ Բանկային համակարգը ավելի լայն հնարավորություններ ունի խնայողությունները տեղաբաշխելու, ներդրումային գործընթացները խթանելու առումով:

### **Ամփոփում**

Օտարերկրյա ուղղակի ներդրումային խնդիրներն ուսումնասիրող տնտեսագետների կարծիքով, այդ ներդրումները տնտեսական աճի կարևոր գործոն են, որտեղ մեծ դեր է հատկացվում պետական ծախսերին, որը նշանակում է պետության կողմից պահանջարկի չափերի մեծացում, գիտատեխնիկական առաջընթացի խթանում և այլն:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրման արդյունքում բացահայտվել են այն պայմանները, որի իրագործման դեպքում

---

<sup>75</sup> Տե՛ս Աճ և աղբատության կրճատումը Հայաստանում, ԱՄՆ, Եր., 2006թ., էջ 81:

պետությունը միջամտում է օտարերկրյա ներդրումների ռացիոնալ և արդյունավետ գործընթացի իրականացմանը:

Հոդվածում նշվում են Հայաստանում օտարերկրյա ներդրումների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող մի շարք երկրների ներդրումային առանձնահատկությունները և փորձ է արվում ցույց տալ դրանց զարգացման միտումները:

**Y.S. Yesayan**

Northern University

PhD in Economics, Associated Professor

## **STATE REGULATION OF FOREIGN DIRECT INVESTMENT POLICY IN RA**

**Key words** – Direct foreign investments, relationship between economic growth and investments, efficiency of direct investments, state regulation of direct investments.

In opinion of economists studying foreign direct investment problems these investments are an important factor of economic growth where a major role is given to public expenditure, which means increasing the size of the state demand, promotion of scientific and technical progress, etc. As a result of the study of statistical data some conditions were revealed in case of implementation of which the state intervenes in implementation of foreign investments' rational and effective realization process.

The article includes investment peculiarities of a number of countries having large share of foreign investments in Armenia and an attempt is made to show their development trends.

**Е. С. Есаян**

Северный Университет

Кандидат экономических наук, доцент

## **ГОСУДАРСТВЕННОЕ РЕГУЛИРОВАНИЕ ПРЯМОЙ ИНОСТРАННОЙ ПОЛИТИКИ В РА**

**Ключевые слова** - Прямые иностранные инвестиции, взаимоотношение экономического роста и инвестиции, эффективность прямых инвестиций, государственное регулирование прямых инвестиций.

По мнению экономистов изучающих иностранные прямые инвестиционные проблемы, эти инвестиции являются важным фактором экономического роста, где большое внимание уделяется государственным расходам, а это означает увеличение размера государственного спроса, продвижение научно-технического прогресса. В результате изучения статистических данных были обнаружены те условия, в случае реализации которых государство вмешивается в осуществление рационального и эффективного процесса иностранных инвестиций.

В статье отмечается инвестиционная специфика некоторых стран, имеющих большую долю в иностранных инвестициях и делается попытка показать тенденции их развития.

**Թադևոսյան Ջ.Ա.**

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա, դոցենտ, տ.գ.թ.  
jultad@mail.ru

**Ժամակոչյան Գ.Ս.**

Եվրոպական կրթական տարածաշրջանային  
ակադեմիայի տնտեսագիտության ամբիոնի ասպիրանտ  
grigorjanjan@mail.ru


## **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԵՌԱՀԱՂՈՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՐԱ**

**Բանալի բառեր** . ծառայությունների շուկա, տեխնոլոգրաների միջազգային փոխանցում հեռահաղորդակցության ոլորտ, ապրանքային նշան, արդիականացում:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման արդի պայմաններում միջազգային ապրանքային նշանների ներգրավման գործընթացը զարգացող երկրների տնտեսությունների արդիականացման առանցքային ուղիներից մեկն է: Այս հանգամանքը մասնավորապես պայամանավորված է ծառայությունների շուկայի դինամիկ զարգացմամբ, տեխնոլոգիաների միջազգային փոխանցման ակտիվացմամբ: Եթե փաստենք նաև այն իրողու-

թյունը, որ միջազգային ապրանքային նշաններն<sup>76</sup> այսօր կարևոր դերակատարում ունեն վերոնշյալ ոլորտներում, ապա հարցադրման ուսումնասիրությունը և՛ հրատապ է, և՛ այժմեական:

Այսօր ծառայությունների շուկայի կարևորագույն և որոշիչ ենթակառուցվածքներից մեկի՝ հեռահաղորդակցության ոլորտի արդիականացումը համարվում է համաշխարհային տնտեսության դինամիկ զարգացման գրավականներից մեկը և այն բավականաչափ կապիտալատար գործընթաց է: Այս զարգացումներից անմասն չէ նաև ՀՀ տնտեսությունը, հատկապես հեռահաղորդակցության ոլորտը: Ոլորտի զարգացումն անհնար է պատկերացնել առանց տեխնոլոգիաների միջազգային շուկային ՀՀ տնտեսության ինտեգրմամբ՝ ի դեմս միջազգային ապրանքային նշանների ներգրավման գործընթացի:



**Գծապատկեր 1.77** Ֆիքսված և բջջային հեռախոսակապի ապարատների քանակը 2000-2005թթ. (1000 հատ)

Գրաֆիկ 1-ում բերված ցուցանիշները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հաշվետու ժամանակահատվածում համապատասխան ծառայությունների բաժանորդների քանակի մասին: Այս տվյալները փաստում են որոշակի առաջընթաց, հատկապես բջջային կապի բաժանորդների մասով, որը պայմանավորված է երկու հանգամանքով՝

<sup>76</sup> ՀՀ կապի և տրանսպորտի նախարարության ինտերնետային կայք [www.mtc.am](http://www.mtc.am)

<sup>77</sup> ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2006թ

**սառաջին՝** ցանցի ընդլայնման և կատարելագործման նպատակով ընկերության մասնավորեցումից հետո կատարված ներդրումներով՝

**երկրորդ՝** երկրում գրանցված ոչ մեծ, բայց հաստատուն տնտեսական աճով, այսպես՝ եթե 2000 թվականին մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմում էր 320.2 հազ. դրամ, ապա արդեն 2004 թ-ին՝ նույն ցուցանիշը կազմել է 590.1 հազ. դրամ:<sup>78</sup>

Արձանագրվող դրական փոփոխությունների տեմպը սակայն գոհացուցիչ չէր: Դրությունը ավելի լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է նշել, որ 2003 թվականի ընթացքում շարժական բջջային կապից օգտվողների թիվը ավելացել է ընդամենը 10,600 բաժանորդով:

Հանուն ճշմարտության անհրաժեշտ է նշել այն փաստը, որ հունական ընկերության խոստումների մեծ մասն այդպես էլ մնաց թղթի վրա:

Հաշվետու ժամանակահատվածում ոլորտում արձանագրված հասույթի մակարդակը ևս անհամամասնության մեջ է բաժանորդների թվի աճի ցուցանիշի հետ (տես՝ գարֆիկ 2):


Տիքաված հեռախոսակապի ոլորտում հասույթի աճի անհամամասնությունը բաժանորդների աճի հետ կապված է 1990 ական թվականների վերջից սկսած, թույլեվճարի գանձման համակարգի ներդրման հետ: Այս համակարգը ներդրվում էր կայանների թվայնացման ավարտից հետո, ինչն էլ հնարավոր չէր իրականացնել մեկ- երկու տարվա ընթացքում:

Բջջային հեռախոսակապի ոլորտում ներկայացված երկու ցուցանիշների փոփոխության անհամամասնությունը պայմանավորված է օպերատորի կողմից սահմանված բարձր սակագներով, ինչը ոլորտի մենաշնորհացման արդյունքն էր: Ըստ հունական ՕՏԷ ընկերության տվյալների նրանք կատարել էին մոտ 300 մլն. ԱՄՆ դոլարի ներդրում բջջային կապի որակի բարձրացման համար, սակայն այն իր որակով շարունակում էր զիջել հարևան երկրներում մատուցվող բջջային հեռախոսակապի որակին:

---

<sup>78</sup> ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2005թ





**Գծապատկեր 2.<sup>79</sup>** Ֆիքսված և բջջային կապի ծառայություններից ստացված հասույթը 2000-2004թթ.(մլն դրամ)

Ըստ ՀՀ կապի և տրանսպորտի նախարարության տվյալների «ԱրմենՏել» ընկերությունը 2004 թվականի ավարտին ուներ մոտ 200 հազ. բջջային հեռախոսակալի բաժանորդ: Ընկերության վարած քաղաքականությունը հանգեցրել էր երկրում այսպես կոչված բջջային հեռախոսակալի հեռախոսահամարների վաճառքի «սև շուկայի» ձևավորմանը, որտեղ հեռախոսահամարները վաճառվում էին իրական արժեքից մի քանի անգամ բարձր գնով:

Մրցակցային գնային քաղաքականությունը, մատուցվող ծառայությունների բարձր որակը, ՀՀ տարածքում լայնարձակ ռադիոածկույթի հիմնումը հնարավորություն տվեց երկրորդ բջջային օպերատորին գլխավորել ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի զարգացման աշխատանքները: Նոր ընկերության մուտքն աստիճանաբար բավարարեց շուկայում արդեն ձևավորված մեծ պահանջարկը:

Մրցակցությունը ստիպեց «ԱրմենՏել» ընկերությանն ազատականացնել կանխավճարային քարտերի տրամադրումը և վերանայել սակագնային քաղաքականությունը:

2006 թվականին ռուսաստանյան «Վիմպելկոմ» ընկերությունների խումբը ձեռք բերեց «ԱրմենՏել» ընկերության բաժնետոմսերը:

<sup>79</sup> ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2006թ


Ձեռքբերման պահին բջջային ծառայությունների մատուցումը ապահովում էին 2G 205 բազային կայաններ, որոնցից 99 տեղակայված էր Երևան քաղաքում: Ձեռքբերումից երկու տարի անց ընկերությունը կրկնապատկեց իր բազային կայանների թիվը, ներդնելով նաև 3G բազային կայաններ:

2008 թվականի ապրիլի 7-ից ընկերությունը սկսեց հանդես գալ «Beeline» միջազգային ապրանքանշի ներքո:

Օգտվելով ռուսաստանյան ընկերության պայմանագրային ընդարձակ դաշտի հնարավորություններից հայաստանյան ընկերությունը կնքեց ռոումինգի պայմանագրեր ավելի քան 45 երկրների 400-ից ավելի օպերատորների հետ:

2007 թվականի սեպտեմբերի 14-ին ռուսական մեկ այլ՝ «ՄՏՍ» ընկերությունների խումբը հայտարարեց «Ղ-տելեկոմ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 80 տոկոսի ձեռքբերման մասին: Այդպիսով հայաստանյան բջջային ծառայությունների մատուցման շուկան ամբողջովին անցավ նույն երկիրը ներկայացնող բջջային օպերատորների վերահսկողության ներքո: Ինչպես վկայում են գրաֆիկ 3-ի տվյալները, 2005 թվականից ընկերությունների ծավալած ակտիվ գործունեության շնորհիվ բջջային բաժանորդների քանակը տարեկան աճել է 75%-ով: Մինչ 2012 թվականը նկատվել է բջջային հեռախոսակապի բաժանորդների թվի կայուն աճ: 2012թ արձանագրվել է վերոնշյալ ցուցանիշի անկում 5 տոկոսով: Անկումը շարունակվել է նաև 2013 թվականին: Այս հանգամանքը կարող է ունենալ նաև մի շարք այնպիսի պատճառներ, որոնք ուղղակիորեն կապ չունեն ոլորտում ընթացող գործընթացների հետ՝ օրինակ անկա արտագաղթի բարձր մակարդակը:

Երկու բջջային օպերատորների նոր սեփականատերերի նույն երկիրը ներկայացնելու հանգամանքը կարող էր դառնալ նաև հակամրցակցային համաձայնությունների ձեռքբերման աղբյուր: Այստեղ մտահոգիչն այն է, որ այդ համաձայնությունները կարող են դուրս գտնվել ՀՀ ոլորտը կարգավորող համապատասխան մարմինների տեսադաշտից և մնալ անպատիժ:



**Գծապատկեր 3.<sup>80</sup>** Ֆիքսված և բջջային հեռախոսային ապարատների քանակը 2006-2013թթ.(1000 հատ)

2009 թվականին լրացավ ՀՀ կառավարության և «ԱրմենՏել» ընկերության ձեռք բերած համաձայնության ժամկետը՝ որը նախատեսում էր միայն մեկ բջջային օպերատորի մուտքը շուկա:

Արդեն 2008 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ կառավարությունը 15 տարի ժամկետով ֆրանսիական «Ֆրանս Տելեկոմ» ընկերության բջջային ծառայությունները ներկայացնող «Օրանժ» ընկերությանը պատկանող Օրանժ Արմենիա՝ ընկերությանը տրամադրեց GSM 900, 1200 2Ghz հաճախականությունների համար լիցենզիա: Ընկերությունը առաջին զանգը ցանցում իրագործեց 2010 թվականի նոյեմբերի 5-ին:<sup>81</sup>

«Օրանժ»-ը ֆրանսիական «Ֆրանս Տելեկոմ» խմբի հիմնական ապրանքային նշանն է՝ աշխարհում հեռահաղորդակցության ոլորտի առաջատար օպերատորներից մեկը: Ընկերությունն աչքի է ընկնում նաև որակյալ ինտերնետ ծառայությունների մատուցմամբ՝ դրա վառ ապացույցը առաջատարությունն է Եվրոպայում ADSL ինտերնետի բնագավառում:

<sup>80</sup> ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտը և կապը, Երևան, 2013թ.

<sup>81</sup> <http://orangearmenia.am/about-orange-armenia/>

Օրանժ Արմենիա»-ի նպատակն է դառնալ Հայաստանի հեռահաղորդակցության շուկայի հզոր մասնակից՝ նորարար առաջարկների, ճկուն գնային քաղաքականության և վաճառքի ու սպասարկման լայն ցանցի շնորհիվ:

Գործունեության առաջին ամսվա ընթացքում ընկերությունն ունեցավ 120 հազ. բջջային կապի և 5000 ինտերնետ կապի բաժանորդներ: Տարիների ընթացքում այդ թիվը կայուն աճ արձանագրեց ևս մեկ անգամ մերժելով որոշ մասնագիտական շրջանակների այն կարծիքը, որ բջջային ծառայությունների մատուցման ոլորտում երրորդ օպերատորի հաջողության հնարավորությունները մեծ չեն:

Ամփոփելով կարելի է արձանագրել որ՝

1. Տեխնոլոգիաների միջազգային փոխանցումը հնարավորություն է տալիս զարգացող երկրներին կապիտալատար ոլորտները արդիականացնելու ընթացքում խուսափել գիտատեխնիկական հետազոտությունների նպատակով կատարվող ծախսերից,

2. Միջազգային ապրանքային նշանների ներգրավմամբ հնարավորություն ստեղծվեց արդիականացնել ՀՀ հեռահաղորդակցության ոլորտը, որն ունի ռազմավարական նշանակություն:

Միջազգային ապրանքանիշերը կրող կազմակերպությունները կարողացան կարճ ժամանակահատվածում իրականացնել անհրաժեշտ վերազինումը, զգալի բարելավելով մատուցվող ծառայությունների որակը:

Բավական է միայն նշել, որ Օրանժ Արմենիա» ընկերության կողմից ժամանակակից բջջային և ինտերնետ կապի համակարգեր կառուցելու համար ներդրվեց 268 մլն Եվրո<sup>82</sup>:

3. Միջազգային ապրանքային նշանները հնարավորություն են տալիս առավել արդյունավետ ինտեգրվել համաշխարհային շուկային: Հեռահաղորդակցության ոլորտում դա արտացոլվում է միջազգային հեռախոսազանգերի և ռոումինգային ծառայությունների սակագներով:

---

<sup>82</sup> [http://telecom.arika.am/am/news/interview/orange\\_armenia\\_2014\\_jelibter/](http://telecom.arika.am/am/news/interview/orange_armenia_2014_jelibter/)

### Ամփոփում

Տեխնոլոգիաների միջազգային փոխանցումը հնարավորություն է տալիս զարգացող երկրներին կապիտալատար ոլորտները արդիականացնելու ընթացքում խուսափել գիտատեխնիկական հետազոտությունների նպատակով կատարվող ծախսերից:

Տեխնոլոգիաների ձեռքբերման հնարավորությունը ՀՀ ընկերությունների համար ներկա տնտեսական պայմաններում մշուշոտ է համարվում, ուստի և տեխնոլոգիաների ներմուծումը, մասնավորապես հեռահաղորդակցության ոլորտի արդիականացումը պետք է կատարվի միջազգային ապրանքային նշանների ներգրավման միջոցով: Յուրաքանչյուր ընկերություն, որը որոշակի տեխնոլոգիաների կրող է, ցանկանում է հնարավորինս երկար պահել դրա նկատմամբ օգտագործման մենաշնորհային իրավունքը, այդ իսկ պատճառով տեխնոլոգիան փոխանցվում է իր ապրանքային նշանի հետ միասին:

Միջազգային ապրանքային նշանների ներգրավմամբ հնարավորություն ստեղծվեց արդիականացնել ՀՀ հեռահաղորդակցության ոլորտը, որն ունի ռազմավարական կարևոր նշանակություն:

**Тадевосян Дж. А.**

доцент ЕРА. к.э.н.

**Жамакочян Г.С.**

аспирант ЕРА

### **ВЛИЯНИЕ ПРИВЛЕЧЕНИЯ МЕЖДУНАРОДНЫХ ТОРГОВЫХ МАРОК НА МОДЕРНИЗАЦИЮ ТЕЛЕКОММУНИКАЦИОННОЙ ОТРАСЛИ АРМЕНИИ**

**Ключевые слова:** *рынок услуг, международная передача технологий, коммуникационный сектор, торговая марка, обновления*

Международная передача технологий дает возможность развивающимся странам избежать затрат на научные исследования для того, чтобы модернизировать отрасли экономики.

Возможность приобретения технологии фирмами РА очень смутные, поэтому модернизацию экономики и в то числе коммуникационный сектор можно реализовать путем привлечения международных торговых марок. Каждый из компании, которая

является носителем определенной технологии, пытаясь сохранить монополию на использование своего права на надлежащую технологию пытаются передать технологии технологии вместе с торговой маркой.

Международные торговые марки дали возможность модернизировать коммуникационный сектор Армении.

**Tadevosyan J.A.**

PhD, assistant professor

**Zhamakochyan G.S.**

Postgraduate student of EREA

## **INFLUENCE OF ATTRACTING INTERNATIONAL TRADEMARKS IN THE MODERNIZATION OF TELECOMMUNICATIONS SECTOR IN ARMENIA**

**Key words:** *market services, international technology transfer, communication sector, trademark, updates*

International transfer of technology enables developing countries to avoid the cost of scientific research to modernize industries.

Opportunity to purchase technology firms RA is very vague, so modernization of the economy and the number of the communications sector can be realized through the involvement of international brands. Each of the company, which is a carrier of a particular technology, trying to maintain a monopoly on the use of their right to try to pass appropriate technology technology technology together with the trademark.

International brands have made it possible to upgrade the communications sector in Armenia.

[illegible]

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ЕРЕВАНСКИЙ СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ

**МАТЕРИАЛЫ**

*межвузовской научной конференции*

**«Современные проблемы статистики в  
Республике Армения»**

NORTHERN UNIVERSITY OF YEREVAN

**Contemporary Issues of Statistics Development  
in the Republic of Armenia  
Materials of Interuniversity Scientific Conference**

Չափսը՝ 14.8 x 21.0 օֆսեթ  
Ծավալը՝ 8 տպ. մասնուկ  
Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ<sup>2</sup>  
Տպաքանակը՝ 200  
Տպագրությունը՝ «Էլկա-Պրինտ» ՍՊԸ